

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Հայաստանում ընտանեկան բռնության վերաբերյալ ելակետային ուսումնասիրություն

Բիլանա Բրանկովիչ,
Միջազգային փորձագետ

2022 թվականի դեկտեմբեր

Եվրոպայի Խորհուրդ

Սույն աշխատանքում Արտահայտված կարծիքները հեղինակին են և կարող են չհամընկնել Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականության հետ: Սույն փաստաթղթերի ամբողջական կամ մասնակի վերարտադրման կամ թարգմանության վերաբերյալ բոլոր հարցումները պետք է հասցեագրվեն Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex or publishing@coe.int):

Սույն փաստաթղթին վերաբերող բոլոր այլ նամակները պետք է հասցեագրվեն Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Գեներալին հավասարության բաժնին:

Կազմը և էջադրումը.
Task LLC

Լուսանկարը
© **Shutterstock**

Council of Europe
F-67075 Strasbourg Cedex
www.coe.int

Տպագրվել է.
© Council of Europe, մարտ 2024

Բովանդակություն

Երախտիքի խոսք	5
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
1.1. Մեթոդաբանություն, ընտրանք, տվյալների աղբյուրներ	7
2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ	8
2.1. Այլ երկրների փորձը և քաղված դասերը	9
2.2. Անհետաձգելի միջամտության որոշումների (այսուհետև՝ ԱՄՈ) և պաշտպանական որոշումների նպատակները	9
2.3. ԱՄՈ-ների և պաշտպանական որոշումների կիրառումը՝ Ավստրիայի փորձը	10
2.4. Տարբեր երկրներում ԱՄՈ-ների կիրառման հետ կապված խնդիրները	12
2.5. Տարբեր երկրներում պաշտպանական որոշումների կատարման հետ կապված խնդիրները	14
2.6. Նախագգուշացումների, անհետաձգելի միջամտության որոշումների և պաշտպանական որոշումների կատարման վերաբերյալ Հայաստանում ամկա տվյալների վերլուծություն	16
2.7. Ոստիկանության կողմից նախագգուշացումների և անհետաձգելի միջամտության որոշումների կիրառման վերաբերյալ եզրակացություններ	19
3. ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ	21
3.1. Պետության պատշաճ ջանասիրություն և պարտավորություն	22
3.2. Ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության հարցում թերացումների պատճառների բացահայտում. Ի՞նչ է «անարձագանք դեպքը»:	24
3.3. Ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիությունը Հայաստանում. քրեական արդարադատության ոլորտի արձագանքը	29
3.3.1. Ոստիկանության տրամադրած տվյալների հիման վրա կատարված եզրակացություններ	32
3.3.2. Քննչական կոմիտեի տրամադրած տվյալների հիման վրա եզրակացություններ	34
3.3.3. Գլխավոր դատախազության տրամադրած տվյալների հիման վրա եզրակացություններ	37
3.3.4. Ոստիկանության տվյալների այս ծրագրի շրջանակներում ստեղծված բազաները	39
3.3.4.1 Ոստիկանության տվյալների բազաների հիման վրա կատարված եզրակացություններ	43
4. ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ընտանեկան բռնության ենթարկվելու փաստերի և բռնությանը ինստիտուցիոնալ/դատական արձագանքի խորը ուսումնասիրություն	45
4.1. Հարցաշարի բովանդակությունը	45
4.2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ոտնձգության ենթարկված անձանց՝ ընտանեկան բռնության ենթարկվելու փաստերի խորը վերլուծություն	46
4.2.1. Ֆիզիկական բռնության դրսևորումները, հետևանքները և հաճախականությունը	47
4.2.2. Սեռական բռնության դրսևորումներ	48
4.2.3. Տնտեսական բռնության դրսևորումներ	49
4.2.4. Հարկադրող վերահսկողություն. ինչպե՞ս են ոտնձգողները ահաբեկում, վերահսկում և մեկուսացնում ոտնձգության ենթարկված կանանց:	50
4.2.5. Ոտնձգության ենթարկված կանանց հուզական/հոգեկան վերապրումները	53
4.2.6. Բռնության տևողությունը, խստությունը և (հնարավոր) թեժացումը	54
4.2.7. Երեխաները որպես ընտանեկան բռնության ականատես և/կամ ոտնձգության ենթարկված անձ՝ հետևանքները	55
4.2.8. Ընտանեկան բռնությունը ոտնձգողի և ոտնձգության ենթարկված անձի ծնողական ընտանիքում	57
4.2.9. Եզրակացություններ բռնության տևողության, ծանրության և բնութագրի, ոտնձգության ենթարկված անձանց և երեխաների վրա ազդեցության վերաբերյալ	58
4.3. Ոստիկանության ծառայողների արձագանքը բռնությանը. քաղաքացիական և քրեական օրենսդրության կիրառման ուժեղ և թույլ կողմերը	60

4.3.1. Ոստիկանության դերի կտրվածքով ԸԲ օրենքում նախատեսված դրույթների կիրառումը (հոդված 15).....	60
4.3.2. Ոտնձգության ենթարկված անձանց և ոտնձգողների հետ շփման ընթացքում ոստիկանության միջամտությունների թերացումները	61
4.3.3 Եզրակացություններ քրեական գործերով ոտնձգության ենթարկված անձանց հետ շփման ընթացքում ոստիկանության գործելակերպի թերությունների մասին	63
4.4. Ինչպե՞ս են կատարվում նախազգուշացումները և անհետաձգելի միջամտության որոշումները	65
4.5. Կանանց համար արդարադատության մատչելիությունը. քրեական արդարադատության ոլորտի արձագանքը	67
4.6. Հետաքննության, նախաքննության կամ դատարանում գործի քննության ընթացքում հայտնաբերված թերությունները.....	68
4.7. Եզրակացություններ՝ քրեական արդարադատության ոլորտի արձագանքը.....	71
4.8. Ընտանեկան բռնությունը օրենքի աչքում աննշան է երևում. օրինակներ Կանանց աջակցման կենտրոնի պրակտիկայից.....	76
4.9. Խնամակալություն և տեսակցություն	79
4.10. Խնամակալության և տեսակցության վերաբերյալ դատարանի որոշումների մասին Եզրակացություններ	79
5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	80
6. ՀՂՈՒՄՆԵՐ	89

Երախտիքի խոսք

Չեղինակը իր երախտիքն է հայտնում «Direção-Geral de Reinserção e serviços Prisionais» գործակալության աշխատակիցներ Ռուի Աբրունխոզա Գոնզալվեսին, Վեռա Էլոյին և Մարիանա Լոպեշին (Պորտուգալիա), Պալոմա Սորիա Մոնտանեզին (Իսպանիա), Թամար Դեկանոսիձեին (Վրաստան), ովքեր աջակցել են սույն ուսումնասիրության անցկացման համար իրավական նյութեր գտնելուն: Սույն ուսումնասիրությունում արտահայտված տեսակետները հեղինակ(ներ)ինն են և դրանք կարող են չհամընկնել Եվրոպայի խորհրդի պաշտոնական մոտեցումների հետ:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ելակետային ուսումնասիրությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի «Հայաստանի կողմից Կանանց Նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման ուղին» ծրագրի շրջանակներում (2019-2022 թթ.): Ծրագրի ընդհանուր նպատակը [Կանանց Նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի](#) (Ստամբուլի կոնվենցիա) կտրվածքով հայաստանյան մասնագետներին, իրավասու մարմիններին, անձանց և ՀԿ-ներին առանցքային գիտելիքի փոխանցումը և Եվրոպական չափանիշների կիրառման կարողությունների զարգացումն է: Ծրագիրը նաև նպաստեց ներպետական քաղաքականության մշակման և իրավական գործընթացներում Ստամբուլի կոնվենցիայի ազդեցության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» վերջերս ընդունված ՀՀ օրենքի և համապատասխան քրեական օրենսդրության կիրառմանը, ինչպես նաև թույլ տվեց ամրապնդել կանանց Նկատմամբ բռնության (այսուհետ՝ ԿՆԲ) և ընտանեկան բռնության (այսուհետ՝ ԸԲ) կանխարգելման և դրա դեմ պայքարում առանցքային դերակատարություն ունեցող շահառուների կարողությունները՝ ունձգության ենթարկված անձանց պաշտպանության և ունձգողներին պատասխանատվության ենթարկելու առումով:

2017 թվականին Հայաստանում ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը (այսուհետ՝ ԸԲ օրենք), որը կարևոր քայլ էր ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարում, մասնավորապես՝ ներդրված պաշտպանական միջոցների շնորհիվ:

Դրան հետևեց Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային գործողությունների ծրագրի (այսուհետ՝ ԱԳԾ) իշխանությունների կողմից մշակմանն աջակցությունը (Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակներում): ԸԲ կանխարգելման և դրա դեմ պայքարում իշխանությունների հետագա ջանքերին օժանդակելու նպատակով որոշում կայացվեց իրականացնել ելակետային ուսումնասիրություն և ոստիկանությանը, Քննչական կոմիտեին, դատախազությանը, պատասխանատու այլ կառույցներին և Կանանց աջակցման կենտրոններին հաղորդված/վերջիններին կողմից արձանագրված ԸԲ դեպքերի վերաբերյալ, նպատակ ունենալով ընդհանուր պատկերացում կազմել ունձգությունից տուժած անձանց համար ա) ընտանեկան բռնության մասին վերջին օրենքով սահմանված պաշտպանության միջոցների և բ) արդարադատության համակարգի մատչելիության վերաբերյալ:

Կարևորն այն է, որ այս ուսումնասիրության արդյունքներն իշխանությունների կողմից կարող են դիտարկվել որպես բազային ելակետ, որի համեմատ էլ կիրականացվի օրենքների և քաղաքականության (այդ թվում՝ ԱԳԾ-ի) կյանքի կոչման գործում առաջընթացի գնահատումը:

Նկատի ունենալով, որ առկա պաշտոնական տվյալները դեռևս սահմանափակ են, այս ուսումնասիրությունը համալրվեց Երևանի Կանանց աջակցման կենտրոնին (ԿԱՑ) հաղորդված մեծաթիվ ԸԲ դեպքերի վերլուծությամբ՝ նպատակ ունենալով առավել խոր պատկերացում կազմել, մի կողմից, կանանց Նկատմամբ ընտանեկան բռնության դրսևորումների, մյուս կողմից՝ ԸԲ-ի ինստիտուցիոնալ/դատական արձագանքի մասին:

- Տեսական շրջանակը և միջազգային չափանիշները

Նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացված ծրագիրն ուղղված էր միջազգային չափանիշների վերաբերյալ գիտելիքների ամրապնդմանը և տարածմանը, ներառելով, բայց չսահմանափակվելով Ստամբուլի կոնվենցիայով, ուսումնասիրության յուրաքանչյուր գլուխը սկսվում է Ստամբուլի կոնվենցիայի համապատասխան միջազգային չափանիշների/դրույթների մասին ամփոփագրով, նաև ԳՐԵՎԻՈ-ի ուսումնասիրությունների և Ելակետային գնահատման զեկույցների հիման վրա այլ երկրների փորձը ներկայացնելով:¹ Նպատակը Հայաստանում ներպետական քաղաքականության/օրենսդրության բարելավման համար առաջարկություններ և գաղափարներ առաջարկելն է: Գիտակցելով, որ մեկ երկրում խոստումնալից արդյունքների հանգեցրած գործելակերպը մեկ այլ երկրում չի կարող հաջողությամբ կիրառվել առանց ազգային համատեքստին մանրակրկիտ հարմարեցման, ներկայացվել են նաև «ոչ հաջող գործելակերպի» օրինակներ և դրանց հիման վրա քաղված դասերը: Դրանք կարող են նույնքան օգտակար լինել, որքան «լավ օրինակները» (անգամ ավելի օգտակար):

1.1. Մեթոդաբանություն, ընտրանք, տվյալների աղբյուրներ

Ելակետային ուսումնասիրությունն անց է կացվել հետևյալ մեթոդաբանությամբ.

- Հաղորդված դեպքերի, ինչպես նաև նախազգուշացումների, անհետաձգելի միջամտության որոշումների և պաշտպանական որոշումների կատարման ընթացքում պետական մարմինների կողմից կիրառվող միջոցների (որոնք նախատեսված են քաղաքացիական/քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ, օրինակ՝ ԸԲ օրենքով), կանանց համար արդարադատության հասանելիության մասին վկայող, հաստատությունների/կանանց ՀԿ-ների կողմից տրամադրված տվյալների ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով գնահատել, թե արդյոք գործերն անցնում են քրեական արդարադատության շղթայով և եթե այո, ապա՝ ինչպես, հնարավորության դեպքում նաև որոշելով, թե արդյոք գործերն ամբողջությամբ դուրս են մղվում արդարադատության շղթայից և եթե այո, ապա՝ ինչպես: Բացի այդ, հարցազրույցներ են անցկացվել տվյալների վերլուծությամբ զբաղվող մասնագետների հետ: Վերլուծության արդյունքները կարող են օգտակար լինել իշխանությունների համար՝ քաղաքացիական և քրեաիրավական միջոցների արդյունավետությունը մշտադիտարկելիս և գնահատելիս:
- **Սույն ծրագրի նպատակների համար հատուկ մշակված տվյալների բազաների վերլուծություն.** ոստիկանության ծառայողներից, տեսուչներից պահանջվում է յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ լրացնել սահմանված ձևեր: Նախկինում այս տվյալները գոյություն ունեին միայն թղթային տեսքով, սակայն այժմ ստեղծվել են էլեկտրոնային շտեմարաններ, որոնք ներառում են 2019-2021 թվականների ընթացքում ոստիկանություն հաղորդված դեպքերը: Այս գործընթացում ներգրավված մասնագետների հետ հետազայում անց են կացվել լրացուցիչ հարցազրույցներ՝ ավելի լավ հասկանալու տվյալների խմբավորման տրամաբանությունը:
- **ԸԲ դեպքերի ընտրանքի խորը ուսումնասիրություն.** ընդհանուր առմամբ, վերլուծվել է պատահականության սկզբունքով ընտրված 86 գործ՝ հիմնվելով Երևանի Կանանց աջակցման կենտրոնի մասնագետների համար հատուկ մշակված մանրամասն հարցաշարերի վրա՝ նպատակ ունենալով անցկացնել նրանց հաղորդված ԸԲ դեպքերի համապարփակ վերլուծություն: Հարցաշարերը թարգմանվել են հայերեն և լրացվել Կենտրոնի այդ գործերի մասին քաջատեղյակ աշխատակիցների կողմից (այդ թվում՝ ունեցվածությունից տուժած անձանց պաշտպանության նպատակով նախաձեռնված քրեական և քաղաքացիական վարույթներում կանանց շահերը ներկայացնող փաստաբանների կողմից, ովքեր հարցերին արձագանքելու համար օգտվել են գործի վերաբերյալ մանրամասն ար-

¹ ԳՐԵՎԻՈ-ն անկախ փորձագիտական մարմին է, որը պատասխանատու է մասնակից պետություններում Ստամբուլի կոնվենցիայի կատարման մշտադիտարկման համար:

ծանազրություններին): Բացի այդ, կիրառվել են որակական մեթոդաբանության որոշակի դրսևորումներ, մասնավորապես՝ այդ մասնագետների հետ անց են կացվել անհատական կամ խմբային խորքային կիսաձևայնացված հարցազրույցներ, ինչպես նաև դեպքերի համառոտ նկարագրություն, որը ցույց է տալիս ունեցված ենթարկված անձանց առջև ծառայած ընդհանուր խնդիրները (այդ «կարճ պատմությունները» տրամադրել է Կենտրոնի թիմը): Գործերը վերաբերում էին 2018թ. մարտից մինչև 2021թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում ԿԱԿ-ի կողմից աջակցություն ստացող կանանց. այդ ժամանակաշրջանն ընտրվել էր ելնելով այն հանգամանքից, որ ԸԲ օրենքն արդեն ուժի մեջ էր մտել և լիովին գործում էր: Հարցաշարերի բովանդակության մասին լրացուցիչ տեղեկություններ բերված են 4-րդ գլխում: Թեև ուսումնասիրության այս հատվածը չի ենթադրում, որ արդյունքները ընդհանրական են Հայաստանում ունեցված ենթարկված անձանց ողջ խմբի համար, այնուամենայնիվ, դրանք թույլ են տալիս պատկերացում կազմել ընդհանուր բնութագրի մասին:

- Ծանոթագրություն. Ելակետային ուսումնասիրությունը, այդ թվում՝ հարցաշարերի կիրառումը, իրականացվել է նախքան 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը: Հետևաբար, վերլուծությունները վերաբերում են դրույթներին, որոնք գործում էին մինչև նոր կանոնակարգումների ընդունումը:

2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՏՆԶՊՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (ԿՆԽՎԿ) 2017թ. Կանանց նկատմամբ գենդերային բռնության մասին իր հանձնարարական 35-ում սահմանում է Կանխարգելման, Պաշտպանության, Քրեական հետապնդման և պատժի, Հատուցումների, Համակարգման, Հսկողության, Տվյալների հավաքագրման և միջազգային համագործակցության ոլորտներում պետության պոզիտիվ պարտականությունները: Կոմիտեն նաև հատուկ հանձնարարականներ է տալիս պետություններին: Ստորև ամփոփված են միայն այն հանձնարարականները, որոնք առնչվում են ունեցված ենթարկված անձանց համար պաշտպանության միջոցների մատչելիությանը (մաս 31):

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐՈՏՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈԶԻՏԻՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (պաշտպանության միջոցների հետ կապված)

Բողոք ներկայացրած կանանց և գենդերային բռնության ակնատեսներին իրավական գործընթացներից առաջ, ընթացքում և հետո պաշտպանելու և աջակցելու նպատակով համապատասխան միջոցների ընդունում և կիրառում, այդ թվում՝ ա) նրանց գաղտնիության և անվտանգության պաշտպանություն և բ) հետագա կամ հնարավոր բռնությունը կանխելու համար նրանց պաշտպանության համապատասխան և հասանելի մեխանիզմների տրամադրում, ներառյալ անմիջական վտանգի գնահատում և պաշտպանություն, արդյունավետ միջոցառումների լայն շրջանակ, անհրաժեշտության դեպքում, ենթադրյալ ունեցողների վտարման, կամ պաշտպանական, արգելքի կամ անհետաձգելի միջամտության որոշումների կայացում և դրանց կատարման նկատմամբ հսկողություն, խախտումների դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում:

Պաշտպանության միջոցները չպետք է ունեցված ենթարկված կանանց վրա անհիմն ֆինանսական, բյուրոկրատական կամ անձնական բեռ դնեն:

Ունեցողների կամ ենթադրյալ ունեցողների իրավունքներին կամ պահանջներին վերաբերող հարցերը, այդ թվում՝ կապված գույքի, գաղտնիության, երեխայի նկատմամբ խնամակալության, բնակարան մուտք գործելու, շփման և տեսակցություն ունենալու հետ, դատական վարույթի ընթացքում և դրանից հետո որոշվում են կանանց և երեխաների կյանքի, ֆիզիկական, սեռական և ֆիզիոլոգիական անձեռնմխելիության իրավունքների պաշտպանության լույսի ներքո և ղեկավարվելով երեխայի լավագույն շահերից:

ինչպես նշվեց, Հայաստանը վերջերս ընդունել է ԸԲ օրենք: Շատ կարևոր է, որ այս օրենքը նախատեսում է պաշտպանության միջոցների կիրառման հնարավորություն, այդ թվում՝ նախազգուշացումների, անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների կիրառում:

Ուսումնասիրության այս հատվածը անդրադառնում է այս նոր միջոցների գործնականում կյանքի կոչելու վերաբերյալ առկա տվյալներին:

2.1. Այլ երկրների փորձը և քաղված դասերը

Եվրոպայի խորհրդի հրապարակումներում տեղ գտած, այլ երկրներում քաղված դասերի հիման վրա արված եզրահանգումները, ինչպես նաև ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցները կարող են օգտակար լինել Հայաստանի իշխանությունների համար՝ այդ միջոցների հետագա մշտադիտարկման և/կամ, անհրաժեշտության դեպքում, դրանց իրականացման բարելավման առումով:

2.2. Անհետաձգելի միջամտության որոշումների (այսուհետև՝ ԱՄՈ) և պաշտպանական որոշումների նպատակները

Անհետաձգելի միջամտության որոշումների (ԱՄՈ), ինչպես նաև արգելանքի և/կամ պաշտպանական որոշումների (այսուհետև՝ պաշտպանական որոշումներ) նպատակը նույնն է. ապահովել բռնության ենթարկված կամ դրա վտանգի տակ գտնվող անձանց պաշտպանությունը:

Ինչպես բացատրվում է ԳՐԵՎԻՈՒ-ի 2022 թ. ելակետային գնահատման զեկույցների միջնաժամկետ հորիզոնական վերլուծության մեջ, Ստամբուլի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն, անձին սպառնացող անմիջական վտանգի իրավիճակներում իշխանություններին իրավունք է վերապահվում ոտնձգողին կարգադրել որոշակի ժամկետով հեռանալ բռնության ենթարկված կամ վտանգի տակ գտնվող անձի բնակարանից և արգելել նրան մուտք գործել այդ բնակարան կամ կապ հաստատել բռնության ենթարկված կամ դրա վտանգի տակ գտնվող անձի հետ: Ստամբուլի կոնվենցիան մասնակից պետություններին տալիս է հայեցողական իրավունք՝ որոշելու ԱՄՈ-ի տևողությունը, որը սովորաբար կարճաժամկետ բնույթ է կրում, նաև որոշելու, թե որ իրավասու մարմինը պետք է նման որոշումներ կայացնի (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց՝ կետ 264): Այս երկու տեսակի որոշումները փոխլրացնող են. ԱՄՈ-ները ոտնձգության ենթարկված անձանց պաշտպանում են անմիջական վտանգի իրավիճակներում (երբ վնասն անխուսափելի է), մինչդեռ պաշտպանական որոշումները նախատեսված են ավելի երկարաժամկետ պաշտպանություն ապահովելու համար: ԱՄՈ-ների անհապաղ կայացումը կարող է կանխել հետագա վնասը և կարևոր ուղերձ է պարունակում ոտնձգողի համար. ընտանեկան բռնությունը չի հանդուրժվելու (Logar and Niemi 2017):

Ելակետային գնահատման զեկույցների միջնաժամկետ հորիզոնական վերլուծության մեջ ԳՐԵՎԻՈՒ-ն (2022 թ. կետ 460) պարզաբանում է, որ ԱՄՈ-ները անմիջական վտանգավոր իրավիճակին առանց երկարատև վարույթի արագ արձագանքելու նպատակով իրավապահ մարմիններին և քրեական արդարադատության մարմիններին առաջարկվող գործիք են: Դրանք հանցագործության կանխարգելման համար նախատեսված գործիքներ են և առաջնահերթություն են տալիս ոտնձգության ենթարկված անձի անվտանգությանը: Հետևաբար, ԱՄՈ-ների կիրառությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տեղ գտած միջադեպի լրջությունը, սահմանելով դրա գործողության ժամանակահատվածը, շարունակական վտանգի դեպքում նախատեսելով այդ ժամկետի երկարացման հնարավորություն, մինչդեռ ոտնձգության ենթարկված անձի ավելի երկարաժամկետ պաշտպանությունը պետք է ապահովել նրա դիմումի հիման վրա դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշման միջոցով: ԱՄՈ-ները պետք է նաև ապահովեն ոտնձգության ենթարկված անձանց անվտանգությունը՝ չստիպելով նրանց ապաստարանում կամ այլուր շտապ պաշտպանություն փնտրել: Տևից հեռանալու բեռը իրականում դրվում է ոտնձգողի վրա, ում հրամայվում է անհապաղ ազատել ոտնձգության ենթարկված անձի բնակության վայրը և արգելվում է վերադառնալ «բավարար ժամանակի ընթացքում», ինչպես նաև, վերաբերելի դեպքերում, արգելվում է կապ հաստատել ոտնձգության ենթարկված անձի և նրա երեխաների հետ: ԱՄՈ-ն սկզբունքորեն պետք է կիրառվի՝ պաշտպանության կարիք ունեցող երեխաների վրա և

անվիջապես ուժի մեջ մտնի, նույնիսկ եթե դրանից հետո այն ենթակա է հաստատման դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից: Ոտնձգության ենթարկված անձի համար, ԱՄՌ-ին զուգահեռ պետք է ապահովվի աջակցության հասանելիությունը, մասնավորապես մասնագիտացված աջակցման ծառայությունների, իրավաբանական խորհրդատվության, ապաստարանի տրամադրման, բժշկական օգնության և հոգեբանական խորհրդատվության միջոցով:

Լոգարը և Նիեմին իրենց աշխատության մեջ (2017թ.) հատուկ նշում են , որ նկատի ունենալով ԱՄՌ-ների կարճաժամկետ բնույթը և սահմանափակման ավելի ցածր աստիճան ունենալը ի համեմատ ոտնձգության ենթարկված անձին և ոտնձգողին միմյանցից բաժանող այլ միջոցների (օրինակ՝ ձերբակալման կամ կալանավորման), առավել խիստ արտահայտված բռնության իրավիճակներում ԱՄՌ-ները արդյունավետ պաշտպանություն չեն ապահովում, հետևաբար, կրկնվելու հավանականություն ունեցող և առավել խիստ արտահայտված բռնության, այդ թվում՝ մարդու կյանքին սպառնացող վտանգի դեպքում դրանք չպետք է օգտագործվեն ձերբակալման կամ կալանավորման փոխարեն: Ավելին, ԱՄՌ-ները չպետք է դիտարկվեն որպես ապաստարանի և այլ մասնագիտացված աջակցության ծառայությունների փոխարինում (նույն աղբյուրում):

Պաշտպանական որոշումները ավելի երկարաժամկետ բնույթ են կրում: Ստամբուլի կոնվենցիայի հոդված 53-ի համաձայն՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր դրսևորումների պարագայում, ոտնձգության ենթարկված անձինք ունեն պաշտպանական որոշում ստանալու իրավունք՝ անկախ այլ իրավական գործընթացից կամ ի լրումն դրան (տե՛ս ԳՐԵՎԻՌ, 2022 թ., կետ 470): Ուստի, ոտնձգության ենթարկված անձի համար պաշտպանական որոշումները պետք է հասանելի լինեն քաղաքացիական օրենսդրության շրջանակներում՝ անկախ նրանից, թե՛ նա կոհմի որևէ այլ իրավական գործընթացի, օրինակ՝ քրեական վարույթի կամ ամուսնալուծության, թե՛ ոչ:

ԱՄՌ-ների և պաշտպանական որոշումների փոխլրացնող բնույթը ճանաչված է Ստամբուլի կոնվենցիայի կողմից (Կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 268): Լոգարի և Նիեմինի (2017թ.) աշխատությունում պարզաբանվում է, որ այս երկու միջոցները՝ ԱՄՌ-ները և պաշտպանական որոշումները, պետք է կիրառվեն միմյանց փոխլրացնելով՝ պաշտպանության հետ կապված հնարավոր բացերից զերծ մնալու համար: Այդ է պատճառ, որ ԱՄՌ-ի ժամկետը լրանալուց հետո, ոտնձգության ենթարկված անձի շարունակական պաշտպանություն ապահովելու համար պետք է կիրառվեն քաղաքացիական օրենսդրության ընթացակարգով իրականացվող պաշտպանական որոշումները (որոնց համար ոտնձգության ենթարկված անձը պետք է դիմի դատարան): Օրինակ, Ավստրիայում եթե ոտնձգության ենթարկված անձը դիմում է քաղաքացիական իրավունքի ընթացակարգով պաշտպանական որոշում ստանալու համար, կիրառված ԱՄՌ-ի տևողությունը (որը կայացվում է ոստիկանության կողմից) ավտոմատ կերպով երկարացվում է երկուսից մինչև չորս շաբաթ: Քաղաքացիական դատարանները կարող են վճիռ կայացնել չորս շաբաթվա ընթացքում, ուստի այս կարգավորումը երաշխավորում է, որ պաշտպանության գործընթացում որևէ բաց չառաջանա: Ավելին, ԱՄՌ-ն վտանգի տակ գտնվող անձանց պետք է պաշտպանի նախքան նրանց վնաս կհասցվի: Յետևաբար, կարևոր է ԱՄՌ-ի կիրառումը չպայմանավորել բռնության վտանգի չափազանց բարձր շեմով: Նույնքան կարևոր է խուսափել բռնության միջադեպի կամ սպառնալիքի ցանկացած դրսևորման առումով ապացուցման բարձր շեմ սահմանելուց: ԱՄՌ-ի, որպես կանխարգելիչ գործիքի նպատակն է ապահովել անվտանգությունը և այն չպետք է կապվի քրեական պատասխանատվության երաշխավորող ապացույցի հետ: Քանի որ ընտանեկան բռնությանը բնորոշ է կրկնակի վիկտիմիզացիան, տասը օր կամ նույնիսկ մեկ ամիս տևողությամբ ԱՄՌ-ն չի կարող երկարաժամկետ հեռանկարում կանխել վտանգը, ուստի անհրաժեշտ են լավ մշակված հաջորդական պաշտպանության միջոցներ: Կարևոր է նաև նշել, որ ԱՄՌ-ների խախտումը պետք է դիտարկվի որպես հնարավոր առավել խիստ արտահայտված բռնության վտանգ պարունակող գործոն:

2.3. ԱՄՌ-ների և պաշտպանական որոշումների կիրառումը՝ Ավստրիայի փորձը

Ըստ Լոգարի և Նիեմինի վՅերոնշյալ աշխատության, Ավստրիան Եվրոպայում ԱՄՌ-ները ներդրած առաջին երկիրն է, որը 1997 թվականին ուժի մեջ մտած օրենքով նախատեսեց երեք հիմնական կանոնակարգումներ. 1) ԱՄՌ-ները կայացվում են ոստիկանության կողմից, 2) Ընտանեկան բռնության միջամտության կենտրոնները

պարտավոր են անհապաղ աջակցություն ցուցաբերել ունձագության ենթարկված բոլոր անձանց, 3) ունձագության ենթարկված անձինք ոստիկանության կողմից կայացված ԱՄՌ-ի գործողության ժամկետի ավարտից հետո կամ դրանից անկախ կարող են քաղաքացիական իրավունքի ընթացակարգով պաշտպանական որոշում հայցել: Օրենքին համապատասխան՝ ստեղծվել են Միջամտության կենտրոններ, որոնք ունձագության ենթարկված անձանց առաջարկում են անհապաղ, պրոակտիվ և իրավագործող աջակցություն: Այդ կենտրոնները ղեկավարվում են կանանց հասարակական կազմակերպությունների կողմից և ամբողջությամբ ֆինանսավորվում պետության կողմից: Օրենսդրական կանոնակարգման համաձայն՝ ունձագության ենթարկված անձին պաշտպանելու *ex officio* միջամտությունը նախատեսված է բռնության կիրառման սուր փուլում որից հետո ունձագության ենթարկված անձն է իրավասու որոշել, թե արդյոք հետագա պաշտպանության կարիք ունի, թե ոչ: Այս հետագա փուլում միայն ունձագությունից տուժած անձն է իրավասու դիմել դատական պաշտպանական որոշում ստանալու համար, երկու բացառությամբ. եթե ունձագության ենթարկված անձը երեխա է (այսինքն՝ 18 տարեկան չլրացած անձ), ապա ծնողը (բռնություն չգործադրողը) կարող է իր կամ երեխայի անունից դիմել պաշտպանական որոշում ստանալու համար: Երկրորդ բացառությունն ենթադրում է, որ երեխաներին վտանգ սպառնալու դեպքում Երիտասարդների բարեկեցության գրասենյակը կարող է պաշտպանական որոշման դիմում ներկայացնել (նույն աղբյուրը):

1997 թվականից ի վեր Ավստրիան մի քանի անգամ փոփոխել է նշված օրենքը՝ ունձագության ենթարկված անձանց արդյունավետ պաշտպանությանը խոչընդոտող դրույթները բարելավելու, առկա բացերը վերացնելու նպատակով: 2009թ.-ից սկսած ԱՄՌ-ի գործողության ժամկետը սահմանվել է երկու շաբաթ՝ մինչև չորս շաբաթ երկարացնելու հնարավորությամբ, եթե ունձագության ենթարկված անձը դիմի քաղաքացիական դատարան պաշտպանական որոշման համար: Օրենքը պահանջում է, որ ոստիկանությունը **ակտիվորեն վերահսկի ԱՄՌ-ի կատարումը** և առաջին երեք օրվա ընթացքում առնվազն մեկ անգամ ստուգի, որ ունձագողը չի վերադարձել ունձագության ենթարկված անձի բնակարան: Ունձագության ենթարկված անձինք ոստիկանությունից ստանում են փաստաթուղթ, որով բացատրվում է նրանց իրավունքը՝ ԱՄՌ-ի կայացումից հետո երկու շաբաթվա ընթացքում դիմելու դատական պաշտպանության որոշման համար: Նրանց նաև տեղեկացնում են, թե որտեղից կարելի է աջակցություն ստանալ և իրազեկվում, որ ունձագության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող Միջամտության շրջանային կենտրոնից իրենց հետ կկապվեն: Կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան բռնության և հետամտման բոլոր դեպքերի մասին ոստիկանությունը Միջամտության շրջանային կենտրոնին ծանուցում է 24 ժամվա ընթացքում (ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով): Ունձագողն իրավունք ունի ԱՄՌ-ի կայացման ոստիկանության որոշումը բողոքարկել վարչական դատարանում, սակայն բողոքը չի կասեցնում ԱՄՌ-ի կատարումը: Եթե բողոքատուն գործը շահում է, նա կարող է փոխհատուցում պահանջել: Ունձագության ենթարկված այդ ընթացակարգի կողմ չի հանդիսանում և բողոքարկման իրավունք չունի: ԱՄՌ-ն խախտելու դեպքում, յուրաքանչյուր խախտման համար ունձագողի նկատմամբ կիրառվում է վարչական տուգանք՝ մինչև 500 եվրոյի չափով: ԱՄՌ-ի կրկնվող խախտումների դեպքում ունձագողը կարող է նաև ձերբակալվել: **ԱՄՌ-ները բազմազերատեսչական համակարգման մոտեցման մի մասն են.** ոստիկանության, քաղաքացիական/ընտանեկան դատարանի, միջամտության կենտրոնների և Երիտասարդների բարեկեցության գրասենյակի միջև համագործակցությունը լավ է զարգացած, մինչդեռ քրեական արդարադատության համակարգի հետ համագործակցությունը կարծես թե ավելի թույլ է: Նման իրավիճակ է նաև առողջապահության ոլորտում:

Ինչպես ԳՐԵՎԻՌ-ին ուղղված ոչ պաշտոնական զեկույցում հիշատակվել է ավստրիական ՅԿ-ների կողմից (2016թ.), Ավստրիայում գործում է նաև հատուկ օրենսդրական ընթացակարգ՝ իրենց դեմ կայացված ԱՄՌ-ի մասին ունձագողներին ծանուցելու առումով: Եթե ոստիկանության որոշման կայացման ժամանակ ունձագողները գտնվում են տանը, ապա ոստիկանությունը պարտավոր է նրանց ծանուցել իրենց նկատմամբ ԱՄՌ կիրառելու մասին և կարգադրել հեռանալ տնից, տեղեկացնելով, որ երկու շաբաթ նրանց արգելվում է վերադառնալ: Եթե ունձագողը այդ պահին բնակարանում չէ, ոստիկանությունը պարտավոր է անհապաղ փնտրել նրան: Ոստիկանությունը պետք է սահմանի այն տարածքը, ուր ունձագողին արգելվում է մուտք գործել և տեղեկացնի նրան այդ մասին: Այնուհետև ոստիկանությունը ունձագողին կարգադրում է հանձնել տան բաՆալիները և հայտնում, որ իրեն թույլատրվում է իր հետ վերցնել անձնական իրերը, որոնք անհրաժեշտ կլինեն

երկու շաբաթվա ընթացքում: Ոստիկանությունը տեղեկատվական թերթիկներ է տրամադրում ոտնձգության ենթարկված անձին և ոտնձգողին, ապա ոտնձգողին կարգադրում իր հետ դուրս գալ տնից: ԱՄՈ-ները կանոնակարգող օրենքի կիրարկման մասին նախարարի որոշումը, առավել մանրամասնում է համատեղ բնակվելու իրավունքից ժամանակավորապես զրկված ոտնձգողի իրավունքները: Այդ իրավունքները ներկայացված են ոստիկանության կողմից ոտնձգողին տրամադրվող տեղեկատվական թերթիկում մասնավորապես. ա) տեղեկատվություն ԱՄՈ-ի և այն տարածքի մասին, որտեղ նրա մուտքն արգելված է, բ) տեղեկատվություն ԱՄՈ-ն խախտելու դեպքում պատասխանատվության միջոցների և տուգանքի չափի մասին, գ) տեղեկատվություն արտակարգ կացարանի մասին, եթե ոտնձգողը կացարան չունի, դ) տեղեկատվություն, թե որտեղից կարելի է օգնություն ստանալ, ե) պահանջ՝ նշել հասցե, ուր դատարանը կարող է ուղարկել դատարանի որոշումը (եթե ոտնձգության ենթարկված անձը դիմի քաղաքացիական դատարանի պաշտպանական որոշման համար, տե՛ս վերևում համապատասխան պարբերությունը), և հասցեն չտրամադրելու հետևանքները, այն է, որ դատական որոշումն ուժի մեջ կմտնի նույնիսկ առանց ոտնձգողին այդ մասին ծանուցելու: Ավստրիայի ՅԿ-ների գնահատմամբ, այդ ընթացակարգը պաշտպանության հարցում ոչ միտումնավոր խախտումներից, բացերից խուսափելու շատ կարևոր տեխնիկական միջոց է (նույն տեղում):

Խոստումնալից գործելակերպ. ինչպե՞ս վերահսկել ԱՄՈ-ների և պաշտպանական որոշումների խախտումները:

- ԳՐԵՎԻՈՆ-ն դրական է գնահատել պաշտպանական որոշումների և ԱՄՈ-ների խախտման հարցում Շվեդիայի իշխանությունների մոտեցումը, քանի որ տուգանքներից և ազատազրկումից բացի այն նախատեսում է հետամտման հանցակազմով քրեական մեղադրանքի ներկայացում: «Շվեդիան արգելքի մասին» օրենքում կատարված վերջին փոփոխությունները էլեկտրոնային մշտադիտարկման միջոցով վերահսկվող շփման արգելքի խախտման արձանագրումը դիտում են որպես առանձին հանցանք, որը նախատեսում է մինչև երկու տարվա ազատազրկման ձևով պատիժ (ԳՐԵՎԻՈ 2022թ., կետ 462):
- ԳՐԵՎԻՈ-ն բարձր է գնահատել պաշտպանական որոշումների կատարումն ապահովելու համար Իսպանիայում ներդրված համակարգը, այն է՝ GPS-ի միջոցով ոտնձգողների խիստ հսկողություն, ինչպես նաև պաշտպանական որոշումների խախտումների համակարգված վերլուծություն, որի արդյունքները ներառվում են նաև ռիսկերի շարունակական գնահատումներում (ԳՐԵՎԻՈ 2022թ., կետ 472): Էլեկտրոնային հսկողության գործիքը, որը գործում է որպես GPS-ի միջոցով հետևող սարք, հսկում է ոտնձգողի և ոտնձգության ենթարկված անձի միջև հեռավորությունը: Նախագուշացման ազդանշանը ակտիվանում է, եթե ոտնձգողը մուտք է գործում արգելված տարածք, մոտենում է ոտնձգության ենթարկված անձին կամ փորձում է վնասել էլեկտրոնային ապարանջանը: Այդ համակարգը պաշտպանական որոշմանը գործնական ուժ հաղորդելու և կանանց ավելի ապահով զգալու արդյունավետ միջոց է՝ (տե՛ս ԳՐԵՎԻՈ-ի՝ Իսպանիայի վերաբերյալ զեկույցի 265 կետը):

2.4. Տարբեր երկրներում ԱՄՈ-ների կիրառման հետ կապված խնդիրները

ԳՐԵՎԻՈ-ն ԱՄՈ-ների կիրառման գործընթացում հայտնաբերել է բազմաթիվ խնդիրներ:

- **ԱՄՈ-ների հազվադեպ կիրառություն** (ԳՐԵՎԻՈ 2022թ. կետ 463). ԱՄՈ-ների հազվադեպ գործնական կիրառության պարագայում ԸԲ ենթարկված անձանց և նրանց երեխաների անվտանգության ապահովման և իրենց տներում մնալու իրավունքի պաշտպանության նպատակը խաթարվում է: Չեռնոգորիայի վերաբերյալ իր զեկույցում ԳՐԵՎԻՈ-ն նշել է ԱՄՈ-ներ կայացնելու որոշակի դժկամությունը՝ պայմանավորված ինչպես ընթացակարգային խնդիրներով, այնպես էլ՝ և տղամարդուն որպես ընտանիքի ղեկավար դիտարկելու հանգամանքով: Անդրադառնալով Ֆիլիանդիայի օրինակին՝ ԳՐԵՎԻՈ-ն ընդգծել է, որ ոտնձգողներին հազվադեպ են վտարում, քանի դեռ վտանգի սպառնալիքը շատ մեծ չէ: Այս առումով, ԳՐԵՎԻՈ-ն պարզաբանել է, որ Ստամբուլի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն, ԱՄՈ-ներ կայացվում են անմիջական վտանգի դեպքում, ընդ որում կյանքին սպառնա-

ցող կամ բռնության այլ լուրջ դրսևորման վտանգի առկայությունը պարտադիր չէ, քանի որ դա անթույլատրելի բարձր շեմ է: Ուստի, դրանք կայացվում են նաև բռնության ավելի թեթև դրսևորման դեպքում:

- **ԱՄՈ-ները պետք է արձակվեն ի պաշտոնե (ex officio)** (տույն աղբյուրը, կետ 464): Անդրադառնալով Դանիայի կողմից ԱՄՈ-ների կիրառությանը՝ ԳՐԵՎԻՈ-ն նշել է ԸԲ դեպքերում Դանիայի ազգային ոստիկանության կողմից դրանց կիրառության ցածր հաճախականությունը. Ըստ ոստիկանության՝ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ոտնձգության ենթարկված անձանց մեծ մասը նախընտրում է ապաստարաններ դիմելը: ԳՐԵՎԻՈ-ն նաև արձանագրել է, որ ոստիկանությունը հակված է ոտնձգողների նկատմամբ կիրառել նախազգուշացում կամ ընդունել կամավոր հեռանալու նրանց առաջարկը: ԳՐԵՎԻՈ-ն պարզաբանել է, որ որպես պաշտպանության միջոց, ԱՄՈ-ները չպետք է կախված լինեն ոտնձգության ենթարկված անձի կամքից և պետք է կայացվեն ex officio՝ որպես ոչ պետական սուբյեկտի կողմից բռնության ցանկացած գործողություն կանխելու պետության Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված պարտավորություն: Նմանապես, Ֆիլիպինյան պարագայում, ԳՐԵՎԻՈ-ն ընդգծել է, որ առաջին արձագանքողը՝ պարեկային ոստիկանությունը, իրավասու չէ կայացնել ԱՄՈ-ներ, իսկ Շվեդիայում ոստիկանությունը հակված է օգտագործել այլ միջոցներ, ինչպիսիք են ոտնձգության ենթարկված անձանց պաշտպանված կացարան ուղղորդելը: ԳՐԵՎԻՈ-ն նաև հորդորել է Ալբանիայի և Թուրքիայի իշխանություններին երաշխավորել անձին անմիջական վտանգ սպառնալու դեպքում իրավապահ մարմինների կողմից պաշտպանական որոշումներ կայացնելու իրենց լիազորությունների պրո-ակտիվ օգտագործումը, անկախ ոտնձգության ենթարկված անձի դիմումից:
- **Անմիջական վտանգին արձագանքում՝ առանց երկարատև վարույթի կամ ապացույցների ներկայացման խիստ պահանջի** (տույն տեղում, կետ 465): Բազմաթիվ զեկույցներում, այդ թվում՝ Մալթայի, Իսպանիայի և Շվեդիայի վերաբերյալ, ԳՐԵՎԻՈ-ն արձանագրել է անհապաղ վտանգի դեպքում համարժեք արձագանքի ընթացակարգերի ծախսողումներ, օրինակ՝ երկարատև ընթացակարգերի կամ ապացույցների չափազանց բարձր շեմի պատճառով: Ընթացակարգերի երկարատևությանն անդրադառնալով՝ նշվել է, որ չնայած Իսպանիան ունի շուրջօրյա գործող մասնագիտացված դատարանների համակարգ, այնուամենայնիվ, որոշման կայացումը կարող է տևել մինչև 72 ժամ: Մալթայի դեպքում նշվեց, որ սահմանված է վտանգի մանրակրկիտ գնահատում, ինչպես նաև հետաքննության պահանջ, որը ցույց կտա, թե ոտնձգության ենթարկված անձը բռնության բարձր վտանգի տակ է, թե ոչ: Վերջինս չի կարող համարվել Ստամբուլի կոնվենցիային համահունչ, մասնավորապես, վտանգների գնահատման երկարատևության պատճառով: Ավելին, վտանգի գնահատման արդյունքների հիման վրա ԱՄՈ-ների կայացումը վիճահարույց է, նկատի ունենալով այն, որ ԱՄՈ-ի նպատակը անվտանգություն ապահովելն է: Վտանգի գնահատումը կարող է ճշգրիտ չլինել, ինչի վկայությունն են Եվրոպայում գենդերային հիմքով կանանց բազմաթիվ սպանությունները, ընդ որում մինչ այդ այդ գործերը գնահատվել են որպես ցածր ռիսկային: Ինչ վերաբերում է չափազանց բարձր ապացուցողական շեմերին, ԳՐԵՎԻՈ-ն նշել է, որ Շվեդիայի դեպքում պաշտպանական որոշում կայացնելու համար դատախազները ապացույցներ են պահանջել հանցանքի կատարման կամ ոտնձգողի՝ ծանր հանցանք կատարելու մտադրության մասին:
- **Ոտնձգության ենթարկված անձանց անբավարար պաշտպանություն** (կետ 466). Ալբանիայի վերաբերյալ իր զեկույցում ԳՐԵՎԻՈ-ն արձանագրել է, որ ոտնձգողի՝ տան միայն որոշ մասեր մուտք գործելու արգելքը կամ միայն ոտնձգողի հետ կանոնավոր ապրող անձանց նկատմամբ պաշտպանությունը տարածելը (ինչը նկատվեց նաև Ֆիլիպինյանում և Յուգոսլավիայում), ոտնձգության ենթարկված անձանց պաշտպանության և բռնության կանխարգելման տեսանկյունից ԱՄՈ-ներն անարդյունավետ են դարձնում: Անդրադառնալով Յուգոսլավիայի օրինակին, ԳՐԵՎԻՈ-ն ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ ժամանակավոր սահմանափակման որոշումները վերաբերում են միայն ոտնձգությունից տուժած անձի բնակարանին, այլ ոչ թե անձամբ անձին: Հետևաբար, կարգավորման այս եղանակը կիրառելի չէ հետամտման դեպքում, երբ ոտնձգության ենթարկված անձը և ոտնձգողը միասին չեն բնակվում:

- **Երեխաների հարցում ԱՄՌ-ների կիրառելիությունը** (կետ 467). Ալբանիայի, Ավստրիայի, Դանիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի վերաբերյալ իր զեկույցներում ԳՐԵՎԻՌ-ն նշել է ԱՄՌ-ներով կամ պաշտպանական որոշումներով նախատեսված պաշտպանության բացերը, քանի որ դրանք ունենում են թույլ են տվել կապ պահպանել իրենց երեխաների հետ: ԳՐԵՎԻՌ-ն նշել է, որ ԱՄՌ-ի նպատակներից մեկը՝ բռնություն գործադրողի և ունենալու էնթարկված անձի միջև ֆիզիկական, ինչպես նաև հուզական իմաստով հեռավորություն ապահովելը, խաթարվում է, երբ ունենալու էնթարկված անձը ստիպված է լինում աջակցել բռնարարի և երեխաների միջև շփմանը կամ նրանց տեսակցությանը:
- **ԱՄՌ-ի կայացման դեպքում ունենալու էնթարկված անձանց ցուցաբերվող աջակցությունը** (կետ 468): ԳՐԵՎԻՌ-ն վերահաստատել է ինչպես ԱՄՌ-ների, այնպես էլ պաշտպանական այլ որոշումների կիրառման համար բազմազգերատեսչական մոտեցման կարևորությունը: Ուստի ԳՐԵՎԻՌ-ն նշել է Ֆինլանդիայի և Ֆրանսիայի իրավապահ մարմիններին՝ պաշտպանական որոշումներ կայացնելիս բոլոր համապատասխան սուբյեկտների միջև ապահովել միջգերատեսչական համագործակցությունը: Ֆինլանդիայի վերաբերյալ իր զեկույցում ԳՐԵՎԻՌ-ն առաջարկել է իշխանություններին ակտիվ մոտեցում որդեգրել ունենալու էնթարկված անձանց կանանց աջակցման մասնագիտական ծառայություններ ուղղորդելու համար:
- **ԱՄՌ-ների ի կատար ածումը և դրանց խախտումների համար պատասխանատվությունը** (կետ 469): Անդորրայի վերաբերյալ իր զեկույցում ԳՐԵՎԻՌ-ն արձանագրել է, որ ԱՄՌ-ների կիրառման վերաբերյալ տվյալները չեն հավաքվել: Մալթայի վերաբերյալ իր զեկույցում ԳՐԵՎԻՌ-ն արձանագրել է կենտրոնացված համակարգի բացակայությունը, որը թույլ կտար գրանցել և մշտադիտարկման ենթարկել ԱՄՌ-ներին առնչվող խնդիրները և/կամ խախտումները, և հորդորել է իշխանություններին ակտիվացնել ջանքերը ԱՄՌ-ների մշտադիտարկման և կիրարկման ուղղությամբ, այդ թվում՝ արձանագրությունների/կանոնակարգերի և տեխնիկական միջոցների, օրինակ՝ էլեկտրոնային ապարանջանների կիրառման օգնությամբ: ԱՄՌ-ների պահանջների պահպանման նկատմամբ հսկողության հարցը բարձրացվել է նաև Բելգիայի վերաբերյալ զեկույցում, որտեղ ԳՐԵՎԻՌ-ն անդրադարձել է էլեկտրոնային ապարանջանների կիրառման, ունենալու էնթարկված անձանց կանոնավոր հանդիպումների և ունենալու էնթարկված անձանց ահազանգման միջոցների տրամադրման օգտակարությանը: Ինչ վերաբերում է ԱՄՌ-ների խախտման համար նախատեսված պատասխանատվությանը, ԳՐԵՎԻՌ-ն Բելգիայի և Մոնակոյի վերաբերյալ իր զեկույցներում ընդգծել է, որ դրամական տուգանքները բավարար կանխարգելիչ բնույթ չեն կրում, և նախընտրելի է քրեական պատասխանատվության միջոցների կիրառումը: Այն փաստորեն արձանագրել է, որ պաշտպանական որոշումների խախտումները, ընդհանուր առմամբ, ազդարարում են ունենալու էնթարկված անձի համար բարձր ռիսկային իրավիճակ, որն իրավապահ մարմինները պետք է հաշվի առնեն այդ որոշումը խախտած ունենալու էնթարկված անձանց պատասխանատվության ենթարկելիս:

2.5. Տարբեր երկրներում պաշտպանական որոշումների կատարման հետ կապված խնդիրները

ԱՄՌ-ների հիմքում ընկած որոշ սկզբունքներ կիրառելի են նաև պաշտպանական որոշումների դեպքում, ինչպես օրինակ՝ երեխաներին պաշտպանելու, ունենալու էնթարկված անձանց աջակցության ծառայությունների հետ համակարգումն ապահովելու և պատասխանատվության միջոցների արդյունավետության պահանջները: Հետևաբար, պաշտպանական որոշումների կատարման հետ կապված որոշ խնդիրներ նման են ԱՄՌ-ների հետ կապված վերը նշված խնդիրներին:

- **Տուժողների համար հասանելիությունը՝ անկախ այլ իրավական գործընթացներից կամ ի լրումն դրանց** (կետ 474): Ստամբուլի կոնվենցիայի 53-րդ հոդվածի 2-րդ կետը պահանջում է, որ պաշտպանական որոշումները ունենալու էնթարկված անձանց հասանելի լինեն՝ անկախ այլ իրավական գործընթացներից կամ ի լրումն դրանց, և որ դրանք կարող են ներառվել նաև հետագա իրավական

գործընթացներում: ԳՐԵՎԻՈՒ-ն մի քանի զեկույցներում, այդ թվում՝ Մալթայի, Մոնակոյի, Չեռնոգորիայի և Պորտուգալիայի վերաբերյալ, նշել է իրավական դաշտում առկա միտումը՝ պաշտպանական որոշումների հարցը պայմանավորել քրեական դատավարական կամ հատուկ գործընթացներով: ԳՐԵՎԻՈՒ-ն այդ կապակցությամբ հիշեցրել է, որ պաշտպանական որոշումները ունենալու են թարկված անձանց պետք է հասանելի լինեն քաղաքացիաիրավական գործընթացով անկախ այն բանից, թե արդյոք նրանք կնախընտրեն ընթացք տալ որևէ այլ իրավական, ներառյալ քրեական գործընթացի: Այն նաև պարզաբանել է, որ պաշտպանական որոշում ստանալու համար դիմել ցանկացող շատ անձինք զանազան բարդ պատճառներից ելնելով թեև պատրաստ չեն քրեաիրավական ամուսնալուծության գործընթաց սկսել, այդուհանդերձ, իրավական դաշտը պետք է ապահովի նրանց պաշտպանությունը:

- **Ունեցողության ենթարկված անձանց պաշտպանության հարցում ԱՄՈ-ների և պաշտպանական որոշումների միջև շարունակականության բացակայությունը** (2022թիվ, կետ 475) ԳՐԵՎԻՈՒ-ն հատուկ ուշադրություն է դարձրել պաշտպանության հնարավոր բացերին, որոնք կարող են առաջանալ ԱՄՈ-ի ժամկետը լրանալուց հետո՝ նախքան պաշտպանական կամ սահմանափակման որոշման կայացումը կամ կիրառումը: Օրինակ, թեև Սերբիայի իրավական դաշտը ընտանեկան, քրեական և զանցանքների մասին օրենսդրության ներքո նախատեսում է պաշտպանական որոշումներ և ԱՄՈ-ներ, սակայն ԳՐԵՎԻՈՒ-ն իշխանություններին հորդորել է ապահովել, որ ունեցողության ենթարկված անձի պաշտպանության ոլորտում բացթողումներից խուսափելու համար անհետաձգելի միջամտության և տարբեր երկարաժամկետ պաշտպանական որոշումների համակարգերի միջև հետևողական կապ ապահովվի: Բարձր գնահատելով սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված անձանց համար ինտեգրված պաշտպանության միջոցների ընդունման հարցում Իսպանիայի իշխանությունների քայլերը, ԳՐԵՎԻՈՒ-ն նաև մատնանշել է ներկայիս իրավական կանոնակարգումներում առկա բացերը: Արձանագրվել է, որ ավելին պետք է արվի՝ ապահովելու պաշտպանության շարունակականությունը, ինչպես նաև պաշտպանական որոշումների (դրանց ժամկետի ավարտից հետո) և կանանց վերականգնման և կայունացման համար անհրաժեշտ առավել երկարաժամկետ միջոցների միջև կապը:
- **ԿՆԲ բոլոր դրսևորումների պարագայում պաշտպանական որոշումների հասանելիությունը** (կետ 473): ԱՄՈ-ներից հիմնական տարբերությունն այն է, որ Ստամբուլի կոնվենցիայի համաձայն՝ սահմանափակման կամ պաշտպանական որոշումները հասանելի են ոչ միայն ընտանեկան բռնության, այլ կանանց նկատմամբ բռնության ցանկացած դրսևորման ենթակված անձանց: ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, սակայն, որ մի քանի պետություններում, այդ թվում՝ Ֆրանսիայում, Մոնակոյում և Պորտուգալիայում, պաշտպանական որոշումները հասանելի են միայն ընտանեկան բռնության ենթակված անձանց: Այդ իսկ պատճառով ԳՐԵՎԻՈՒ-ն հորդորեց այդ պետությունների իշխանություններին ապահովել, որ նման որոշումներ կայացվեն նաև ԿՆԲ-ի այլ դրսևորումների պարագայում, ինչպիսիք են ԿՍՕԽ-ը, հարկադիր ամուսնությունը կամ հետամտումը:
- **Պաշտպանական որոշումների կայացման և կարևորության վերաբերյալ մասնագիտական վերապատրաստում** (կետ 476): Բազմաթիվ ելակետային գնահատման զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է սահմանափակման կամ պաշտպանական որոշումների կիրառման ցածր մակարդակը: Դրա պատճառների թվում են իրավապահ մարմինների, դատախազության, դատավորների և իրավաբանների կողմից ժամանակավոր պաշտպանական որոշումների և պաշտպանական որոշումների՝ բռնության ցիկը ընդհատելու գործում դերի և կարևորության անբավարար ըմբռնումը, դրանց իրագործման եղանակներին անտեղյակությունը և այս հարցերում ուղղորդման պակասը: Բելգիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Մալթայի և Մոնակոյի վերաբերյալ իր ելակետային գնահատման զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն կոչ է արել իշխանություններին իրականացնել և/կամ բարելավել պաշտպանական որոշումների կիրառման վերաբերյալ համապատասխան մասնագետների վերապատրաստումը, նշելով, որ պաշտպանական որոշումների դրական ազդեցության ըմբռնման պակասը նպաստում է դրանց ցածր կիրառելիությանը:

- **Պաշտպանական որոշում կիրառելու նպատակով դիմելիս ծագող վարչական և ֆինանսական խոչընդոտները.** Սերբիայի վերաբերյալ իր ելակետային գնահատման զեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն (2022թ, կետ 477) արձանագրել է, որ պաշտպանական որոշ տեսակների կիրառման համար դիմող ոտնձգության ենթարկված անձինք, համար, ստիպված են գումար վճարել և հորդորել է իշխանություններին վերացնել ոտնձգության ենթարկված անձանց՝ պաշտպանական որոշում ստանալու գործընթացում ծագող ֆինանսական խոչընդոտները: Մոնակոյի և Չեռնոգորիայի վերաբերյալ իր ելակետային զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ ոտնձգության ենթարկված անձինք չեն տեղեկացվել, որ կարող են դիմել պաշտպանական որոշում ստանալու համար:
- **Պաշտպանական որոշումների մշտադիտարկման խախտումներ** (կետ 478): Ելակետային գնահատման մի շարք զեկույցներում, այդ թվում՝ Իտալիայի, Մալթայի և Թուրքիայի վերաբերյալ, պաշտպանական որոշումներ կիրառելու համար դիմելու, դրանք կայացնելու, դրանց պահանջները խախտելու դեպքերի գրանցման, մշտադիտարկման և վերլուծության գործընթացում մի շարք խնդիրներ են արձանագրվել: Իտալիայի և Թուրքիայի վերաբերյալ ելակետային գնահատման զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն հորդորել է իշխանություններին տվյալների հավաքագրման միջոցով վերահսկել և վերլուծել այս ոլորտում առաջընթացը՝ անդրադառնալով, մասնավորապես, բռնության այն դրսևորումներին, որոնց պարագայում կիրառվում են պաշտպանության միջոցները, այն հանգամանքին, թե արդյոք պաշտպանության միջոցը կիրառվել է ոտնձգության ենթարկված անձի դիմելու արդյունքում, թե այն կայացվել է *ex officio*, պաշտպանական որոշումների միջին տևողությանը, ոտնձգության ենթարկված նույն անձի դիմումով պաշտպանական որոշումների երկարացումների քանակին, պաշտպանական որոշումների խախտումների և դրանց պատշաճ արձագանքման քանակական տվյալներին:

2.6. Նախազգուշացումների, անհետաձգելի միջամտության որոշումների և պաշտպանական որոշումների կատարման վերաբերյալ Հայաստանում առկա տվյալների վերլուծություն

ԸԲ ՀՀ օրենքը նախատեսում է երեք տեսակի պաշտպանության միջոցներ՝ նախազգուշացում (6-րդ հոդված²), անհետաձգելի միջամտության որոշում (7-րդ հոդված³) և պաշտպանական որոշում (8-րդ հոդված): Ոստիկանության ծառայողները իրավասու են կիրառել օրենքով սահմանված երեք պաշտպանության միջոցներից երկուսը՝ նախազգուշացումը և անհետաձգելի միջամտության որոշումը (ԱՄՈ), մինչդեռ պաշտպանական որոշումները կայացվում են դատարանի կողմից: Ոստիկանությունը պատասխանատու է նախազգուշացումների և ԱՄՈ-ների կատարման հսկողության համար:⁴ Նույնը վերաբերում է պաշտպանական որոշումների կատարման հսկողությանը, բացառությամբ այն դեպքերի, որոնք նշված են ԸԲ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետում:

ԸԲ օրենքի համաձայն՝ նախազգուշացում կիրառելու մասին ոստիկանության իրավասու ծառայողի կայացրած պատճառաբանված որոշման պատճենը ընտանիքում բռնություն գործադրած անձին հանձնվում է ստո-

2 ԸԲ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում»:

3 ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «Եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ»:

4 ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված է, որ «Անհետաձգելի միջամտության որոշումն ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը»: 15-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է նաև ոստիկանության իրավասությունները՝ «կայացնում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշումներ, ինչպես նաև հսկողություն է իրականացնում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ՝ ներքին գործերի նախարարի սահմանած կարգին համապատասխան»:

րագրությամբ՝ առձեռն: Դեպքի վայրում նրա բացակայության դեպքում որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում որոշման պատճենն ուղարկվում է նրա հաշվառման վայր պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով (6-րդ հոդվածի 2-րդ մաս): Ծանուցման նման ընթացակարգը կիրառվում է ԱՄՌ-ի տրամադրման դեպքում. վերջինս ուժի մեջ է մտնում բռնություն գործադրած անձին հանձնելու պահից⁵:

Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը (7-րդ հոդվածի 2-րդ մաս): 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները. 1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը. 2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր. 3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին որոշակի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), 4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը, 5) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկված անձի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ:

ԸԲ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կայացվում է դատարանի կողմից տուժողի կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնի դիմումի հիման վրա: Պաշտպանական որոշումը կայացվում է ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ գտնվող անձանց պաշտպանելու և ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով (8-րդ հոդվածի 3-րդ մաս), այն կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով (8-րդ հոդվածի 4-րդ մաս): Պաշտպանական որոշումները նախատեսում են ԱՄՌ-ների առնչությամբ նշված հինգ միջոցները (8-րդ հոդվածի 5-րդ մաս): Բացի այդ, որոշմամբ կարող են նաև արգելվել երեխաների հետ տեսակցությունները, ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դրվել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ գտնվող անձանց ծախսերը, ինչպես նաև բռնություն գործադրած անձի վրա դրվի վերականգնողական ծրագիր անցնելու պարտականություն: ԸԲ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ ընտանիքում բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանիքում բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող չափահաս անձը ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման:

Ինչպես պարզաբանել է Մարդու իրավունքների պաշտպանը (2019թ.), ԸԲ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, այդ օրենքով նախատեսված սկզբունքներին և միջամտության համաչափության սկզբունքին համապատասխան, սահմանում է պաշտպանության միջոցների կիրառման երաշխիքներ: Դրանց կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական վարույթ նախաձեռնելուն և քրեական հետապնդմանը: Այս դրույթը նշանակում է, որ **պաշտպանության տրամադրումը պայմանավորված չէ քրեական հետապնդում իրականացնելով կամ չիրականացնելով**, և ոտնձգությունից տուժած անձանց պաշտպանությունը դիտվում է որպես առաջնային խնդիր:

⁵ ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է, որ «Անհետաձգելի միջամտության որոշում կիրառելու մասին ոստիկանության իրավասու ծառայողի կայացրած պատճառաբանված որոշումն ուժի մեջ է մտնում ընտանիքում բռնություն գործադրած անձին դրա մասին իրազեկելու պահից: Դրա պատճենն ընտանիքում բռնություն գործադրած անձին հանձնվում է ստորագրությամբ՝ առձեռն, դեպքի վայրում նրա բացակայության դեպքում որոշման բովանդակությունը նրան պարզաբանվում է հեռախոսակապի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում որոշման պատճենն ուղարկվում է նրա հաշվառման վայր պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով»:

Նախագգուչացումների և ԱՄՌ-ների վերաբերյալ հասանելի տեղեկատվությունը ներկայացված է ստորև՝ հիմնվելով երկու աղբյուրի վրա. 1) Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) 2019 և 2020 թվականների զեկույցների և 2) Երևանի Կանանց աջակցման կենտրոնի կողմից ոստիկանությանից պարբերաբար հարցվող տվյալների հիման վրա հավաքագրված տեղեկատվության: Առկա աղբյուրներից ԱՄՌ-ների առանձին տեսակների վերաբերյալ տարանջատված տեղեկություններ ստանալ չի հաջողվել (արդյո՞ք կայացված ԱՄՌ-ն Նախատեսել է ոտնձգողին ընդհանուր բնակարանից հեռացնել կամ հաղորդակցության արգելք լամ արգելանքի որոշում և այլն): Ավելին՝ **բացակայում են պաշտպանական որոշումների վերաբերյալ տվյալները:** Ոստիկանության կողմից կայացված Նախագգուչացումների և ԱՄՌ-ների վերաբերյալ տվյալները (որոնք առկա են Մարդու իրավունքների պաշտպանի 2019-2020 թվականների զեկույցներում) ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ոստիկանության կողմից տրված Նախագգուչացումներ և կայացված անհետաձգելի միջամտության որոշումներ (ըստ ՄԻՊ-ի 2019-2020 թվականների զեկույցների)

	2019թ.	2020թ.
Ոստիկանությանը հաղորդված դեպքերի ընդհանուր թիվը	-	-
Նախագգուչացումներ	796	834
Անհետաձգելի միջամտության որոշումներ	260	339
Պաշտպանության միջոցների պահանջների խախտումներ, այդ թվում՝		
ոտնձգության ենթարկված անձի կողմից ոստիկանություն հաղորդված	90	56
ոստիկանության կողմից պրոակտիվ կերպով հայտնաբերված	34	3

Աղբյուրը. Ոստիկանության տվյալներ, արտացոլված ՄԻՊ 2019 և 2020 թթ. զեկույցներում

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ 2019-2020 թվականներին Նախագգուչացումները տրվել են շատ ավելի հաճախ, քան ԱՄՌ-ները, այսինքն՝ երկու տարիներին էլ **Նախագգուչացումների թիվը ԱՄՌ-ների համեմատ մոտ երեք անգամ ավելի է եղել:** Ինչ վերաբերում է խախտումներին, ապա հատկանշական է, որ հիմնականում ոտնձգության ենթարկված անձինք են խախտումների մասին հաղորդել ոստիկանություն (ոստիկանության ծառայողները հազվադեպ են խախտումներ հայտնաբերել պրոակտիվ կերպով): ՄԻՊ-ը 2020թ. զեկույցում նաև նշել է, որ բռնություն գործադրած անձանց նկատմամբ տրված 834 Նախագգուչացումներից 20-ի դեպքում բռնությունը շարունակվել էր: Նշված բոլոր դեպքերում իրավախախտների կանխարգելիչ հաշվառումը չի ընդհատվել:

Երևանի Կանանց աջակցման կենտրոնը պարբերաբար տվյալների հարցումներ է ուղարկում ոստիկանություն, և Նախագգուչացումների և ԱՄՌ-ների վերաբերյալ ոստիկանությունից ստացված տվյալները ներկայացված են Աղյուսակ 2-ում: Կենտրոնը նաև իրականացրել է չեղարկված Նախագգուչացումների և ԱՄՌ-ների վերլուծություն (Աղյուսակ 3):

Աղյուսակ 2: Ոստիկանության կողմից տրված Նախագգուչացումները և անհետաձգելի միջամտության որոշումները 2019-2020 թթ. (տեղեկատվությունը ուղարկվել է ՄԻՊ-ին)

	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022 (հնվ.-հկտ.)
Ոստիկանությանը հաղորդված ԸԲ դեպքեր	707	485	540	1072	902
Տրված Նախագգուչացումներ	431	796	831	528	436
Կայացված անհետաձգելի միջամտության որոշումներ	131	260	337	544	466

Ոստիկանությունից ստացված տեղեկատվության հիման վրա կանանց աջակցման կենտրոնի կողմից հավաքագրված տվյալներ

«Ոստիկանությանը հաղորդված ԸԲ դեպքերի» ցուցանիշը հասկանալի չէ. առկա տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ բացատրել, թե ինչու 2019 և 2020 թվականներին Նախագգուշացումների/ԱՄՈ-ների ընդհանուր թիվը **ավելի մեծ է**, քան «Ոստիկանություն հաղորդված դեպքերի թիվը», մինչդեռ 2021 և 2022 թվականներին Նախագգուշացումների/ԱՄՈ-ների ընդհանուր թիվը հավասար է «Ոստիկանություն հաղորդված բռնության դեպքերի» թվին: Պարզ չէ, թե արդյոք «Ոստիկանություն հաղորդված ԸԲ դեպքերը» տողի ներքո ներկայացված են միայն այն դեպքերը, որոնց դեպքում ոստիկանությունը կիրառել է ԸԲ մասին օրենքով նախատեսված կարգավորումները թե ոչ: ԿԱԿ-ի մասնագետների բացատրությամբ, ոստիկանությունը գրանցում է դեպքերը և հետագայում որոշում է կայացնում Նախագգուշացման կամ ԱՄՈ-ի կիրառման մասին: Դա, սակայն, չի բացատրում վերոնշյալ անհամապատասխանությունները, այլ հիմք է տալիս մեկ այլ հարցի՝ արդյո՞ք ԱՄՈ-ների կայացումը ուշացվել է:

Չեղարկված Նախագգուշացումների և ԱՄՈ-ների վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 3-ում: Համաձայն DATALEX-ի (դատարաններում քննվող բոլոր գործերի վերաբերյալ առցանց տվյալների բազա), չեղարկվել է 14 Նախագգուշացում և 29 ԱՄՈ: Բողոքատուների թվում 6 կին և 39 տղամարդ էին: Դատավորների որոշումների համաձայն՝ ոստիկանությունը այդ դեպքերում ԱՄՈ կայացնելիս սխալվել է և, նրան պարտավորեցվել է յուրաքանչյուր անձին, որի դեմ ԱՄՈ է կայացվել, վճարել 10000 դրամ (մոտ 24 եվրո):

Աղյուսակ 3: Դատարանում չեղարկված Նախագգուշացումների և անհետաձգելի միջամտության որոշումների վերաբերյալ տվյալները

	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Չեղարկված Նախագգուշացումներ			8	2	4
Չեղարկված անհետաձգելի միջամտության որոշումներ	2	4	10	5	8

Երևանի Կանանց աջակցման կենտրոնի կողմից հավաքագրված տվյալներ (ներկայացված են DATALEX-ում)

Հարկ է նշել, որ, ինչպես 2019թ. իր զեկույցում պարզաբանել է ՄԻՊ-ը⁶, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (որը գործում էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը) առկա պաշտպանության միջոցները ԿԲ-ի գործերով չեն կիրառվել: Նմանատիպ դիտարկում է արվել նաև ՄԻՊ-ի 2020 թ.զեկույցում:

Ինչպես արդեն նշվեց, պաշտպանական որոշումների վերաբերյալ տվյալները (սահմանված են ԸԲ օրենքի 8-րդ հոդվածով) հասանելի աղբյուրներում ներկայացված չեն, ուստի դրանց գործնական կիրառման վերաբերյալ եզրակացություններ չեն արվել:

2.7. Ոստիկանության կողմից Նախագգուշացումների և անհետաձգելի միջամտության որոշումների կիրառման վերաբերյալ եզրակացություններ

1. Արձանագրվել է հուսադրող միտում, որն ապագայում առավել հետևողական մշտադիտարկման պետք է ենթարկվի: Եթե 2019-2020 թվականներին Նախագգուշացումները կիրառվել են մոտ երեք անգամ ավելի հաճախ քան ԱՄՈ-ները, 2021թ.-ին և 2022թ.-ի առաջին ինն ամիսներին Նախագգուշացումների թի-

6 Մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը ուժի մեջ եղած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասով, քրեական վարույթում մասնակցող յուրաքանչյուր ոք, ով կարող է տրամադրել էական տվյալներ հանցագործությունը բացահայտելու և հանցագործին հայտնաբերելու համար, ինչը կարող է վտանգել նրա, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, պաշտպանված է: Օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանության միջոցները ներառում են պաշտպանվող անձի նկատմամբ բռնության կամ այլ հանցագործության սպառնալիք ներկայացնող անձին պաշտոնական Նախագգուշացում, պաշտպանվող անձի նույնականացման տվյալների պաշտպանություն, պաշտպանվող անձի անձնական անվտանգության ապահովում, պաշտպանվող անձի տան կամ այլ գույքի պահպանություն և այլն: Սակայն այս միջոցները և դրանց կիրառման օրենսդրական դրույթները բավարար չեն, և դրանք չեն կիրառվում ընտանեկան բռնության դեպքերում: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տվյալների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված պաշտպանության միջոցներից ոչ մեկը 2018 թվականին չի կիրառվել ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանելու համար:

վը մոտավորապես հավասար է եղել ԱՄՌ-ների թվին: Նկատի ունենալով այն, որ ի տարբերություն ԸԲ արձագանքելու ավելի «թույլ» միջոց հանդիսացող նախազգուշացման, **անմիջական վտանգի իրավիճակում միայն ԱՄՌ-ն կարող է անհապաղ պաշտպանել ոտնձգության ենթարկված անձանց** (ինչն էլ միջազգային չափանիշներին համապատասխան դիտարկվում է որպես անհետաձգելի արգելանքի որոշումների նպատակ), կայացված ԱՄՌ-ների թվի աճը (ի տարբերություն նախազգուշացումների) կարող է դիտվել որպես խոստումնալից միտում և ապագայում պետք է ուշադիր մշտադիտարկման ենթարկվի: Լիովին գիտակցելով, որ բռնության շատ իրավիճակներ անմիջական վտանգ չեն ներկայացնում ոտնձգության ենթարկված անձի համար, նախազգուշացումների հաճախակի կիրառումը հայեցակարգային մակարդակի հարցեր է առաջացնում՝ արդյո՞ք նախազգուշացումները կարող են, սկզբունքորեն, կանխել հետագա բռնությունը: Կարելի է ենթադրել, որ նախազգուշացումները, որոշ իրավիճակներում, օգտագործվում են որպես «առաջին արձագանքի միջոց» (այսինքն, եթե նախազգուշացումը արդյունք չտա, կկիրառվի ավելի լուրջ միջոց, այն է՝ ԱՄՌ), հետևաբար, դա կարող է հանգեցնել հետագա բռնությունը կանխելու թանկարժեք ժամանակի կորստի: Ավելին, նախազգուշացման խախտման համար որևէ իրավական հետևանք նախատեսված չէ: Ոտնձգության ենթարկված անձի պաշտպանության ապահովման առումով նախազգուշացումների ազդեցությունը միանշանակ չէ և պետք է ուսումնասիրվի: Հետագայում հետազոտության շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցերին, թե ինչպես է ոստիկանությունը որոշում՝ կիրառել նախազգուշացում, թե ԱՄՌ, արդյո՞ք նախազգուշացման կիրառումը նպաստում է բռնության ենթարկված անձի պաշտպանությանը և հետագա բռնության կանխմանը, արդյո՞ք կիրառվում է ռիսկի կանոնավոր գնահատում և ինչ եղանակով:

2. ՄԻՊ-ը 2019 և 2020 թվականների զեկույցներում նշել է նախազգուշացումների բողոքարկման ընթացակարգերի հետ կապված խնդիրը, որն ազդում է դրանց արդյունավետության վրա: ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման դրա մասին տեղեկացվելուց հետո մեկամսյա ժամկետում: Քանի որ ոստիկանության որոշումները վարչական ակտեր են, բողոքարկումները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որը նախատեսում է կասեցնող ազդեցություն: **Նախազգուշացման դեմ բողոքարկման կասեցնող ազդեցությունը կարող է ռիսկեր պարունակել**, քանի որ այդ ժամանակահատվածում իրավախախտը կարող է խախտել նախազգուշացման կիրառման ժամանակ սահմանված պահանջները, ինչը, սակայն, իրավական առումով խախտում չի համարվի՝ դրանով իսկ թուլացնելով ոտնձգության ենթարկված անձին տրամադրված պաշտպանությունը:
3. Ինչպես բացատրվել է ԳՌԵՎԻՌ-ի կողմից (2022թ.) և նշվել վերևում, անհետաձգելի միջամտության որոշումների կայացումը **պարտադիր չէ, որ ենթադրի կյանքին սպառնացող կամ բռնության այլ լուրջ դրսևորման վտանգ**, քանի որ դա անընդունելի բարձր շեմ է: Հետևաբար, դրանք պետք է կայացվեն նաև բռնության ավելի թեթև դրսևորումների դեպքում, **առանց երկարատև վարույթի կամ ապացույցների բարձր շեմի**: Անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ՝ գնահատելու համար, թե ինչպես է Հայաստանում ոստիկանությունը որոշում ԱՄՌ կայացնել, և արդյոք սահմանված շեմը չափազանց բարձր չէ (տե՛ս ԱՄՌ-ների մասին բաժինները):
4. ՄԻՊ-ը 2020թ. զեկույցում ընդգծել է, որ ԸԲ օրենքի կիրառման ընթացքում, այդ թվում՝ պաշտպանության միջոցներ (նախազգուշացում, ԱՄՌ) նշանակելիս, այլ անձինք, հիմնականում ընտանիքի անդամները, փորձում են միջամտել և խոչընդոտել որոշման կայացմանը: Հարցին, թե ինչպես են հաղթահարվում այդ խոչընդոտները անհրաժեշտ է անդրադառնալ հետագայում:
5. ՄԻՊ-ի զեկույցներում (2019թ., 2020թ., տե՛ս նաև Mann 2019) ուշադրություն է հրավիրվել նաև ԱՄՌ-ների արդյունավետության վրա ազդող ընթացակարգային խնդիրների վրա: Մասնավորապես, ԱՄՌ-ների հետ կապված ոստիկանության որոշումները ուժի մեջ են մտնում ոչ թե անմիջապես, այլ չհստակեցված ժամկետում, այն է՝ ոտնձգողին հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ պատվիրված փոստով ծանուցելուց հ և առաքման փաստը հաստատող ստորագրությունը ստանալուց հետո (ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս), այսինքն՝ պահանջվում է ոտնձգողի ստորագրությամբ հաստատված տեղեկացում: Ինչպես նշում

են իրավաբան-փորձագետները (նույն տեղում), 7-րդ հոդվածը ոչ մի կարգավորում չի պարունակում ԱՄՌ-ի կիրառմանն այն դեպքերում, երբ ոտնձգողը հրաժարվում է ստորագրել: Բացի այդ, ոտնձգողի գրանցման, հետևաբար՝ ծանուցման հասցեն կարող է լինել այն բնակարանը, որտեղ ոտնձգողի ներկայությունն արգելված է: Արդյունքում՝ ոտնձգողի ենթադրվող ներկայությունն այդ վայրում (ծանուցում ստանալու համար) կարող է վտանգել ոտնձգության ենթարկված անձի անվտանգությունը: Ոտնձգողին ծանուցելու սահմանված կարգը ժամանակատար է, և որ ավելի կարևոր է՝ **ոտնձգության ենթարկված անձի կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքները ստորադասվել են ոտնձգողի դատավարական իրավունքներին** (նույն տեղում): Առկա կարգավորումների պարագայում՝ ոտնձգողի կողմից ոտնձգության ենթարկված անձի հետ կապ հաստատելու շարունակական քայլերը չեն համարվի անհետաձգելի միջատության որոշման պահանջների խախտում, քանի որ ԱՄՌ-ն ծանուցման ընթացակարգային ձգձգումների պատճառով այն ուժի մեջ մտած չի լինի: Այս խնդիրները կարող են լուծվել առկա ենթաօրենսդրական ակտերի կամ այլ կարգավորումների վերանայման դեպքում, ընդ որում այս առումով օգտակար կարող է լինել այլ երկրների փորձը (տե՛ս Ավստրիայի համապատասխան փորձը «ԱՄՌ-ների և պաշտպանական որոշումների կիրառում» բաժնում): Նպատակահարմար կլինի նաև հաշվի առնել ԳՐԵՎԻՌ-ի այն դիրքորոշումը, որ ժամանակատար ընթացակարգերի պատճառով որոշ երկրներ ձախողում են ԱՄՌ-ների անհապաղ ուժի մեջ մտնելու պահանջի երաշխավորումը (տե՛ս «Տարբեր երկրներում ԱՄՌ-ների կիրառման հետ կապված խնդիրները» բաժինը):

6. Շատ կարևոր են պաշտպանության որոշումներով սահմանված սահմանափակումների խախտումների վերաբերյալ տվյալները: Ստամբուլի կոնվենցիայի 53-րդ հոդվածի 3-րդ կետը պահանջում է պաշտպանական որոշումների ցանկացած խախտման համար երաշխավորել «արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ» պատասխանատվության միջոցներ: ԳՐԵՎԻՌ-ն (2022թ.) պարբերաբար ընդգծել է, որ **պաշտպանական որոշման խախտումը, ընդհանուր առմամբ, վկայում է ոտնձգության ենթարկված անձի համար բարձր ռիսկային իրավիճակի առկայության մասին**, ինչը իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն պաշտպանական որոշման պահանջը խախտած իրավախախտին պատժելիս: Նկատի ունենալով այն, որ Հայաստանում ոստիկանությունն է պատասխանատու պաշտպանական որոշումներով սահմանված սահմանափակումների նկատմամբ հսկողության (բացառությամբ ԸԲ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետով նախատեսված սահմանափակումների), ինչպես նաև ոտնձգողների, այսպես կոչված, կանխարգելիչ հաշվառման համար, ուշադրության է արժանի այն, որ 2019 և 2020 թվականներին խախտումների մեծ մասը ոստիկանությունն է ներկայացվել ոտնձգության ենթարկված անձանց կողմից և դրանց միայն փոքր մասն է բացահայտվել ոստիկանության պրոակտիվ ջանքերի շնորհիվ (2019 թվականին՝ 34, մինչդեռ 2020 թվականին՝ ընդամենը երեք նման դեպք): Ինչպես նշվում է ՄԻՊ-ի 2019թ. զեկույցում, խնդիրն այն է, որ **ոտնձգողների կանխարգելիչ հաշվառումը և հսկողությունը պատշաճ կերպով չի իրականացվում**: Թեև ԱՄՌ-ների և պաշտպանական որոշումների խախտման համար նախատեսված է քրեական պատասխանատվություն, սակայն կիրառված քրեաիրավական պատասխանատվության միջոցների քանակի մասին պաշտոնական աղբյուրներում տեղեկություններ չկան (տե՛ս տուժողների համար արդարադատության մատչելիության մասին հաջորդ բաժինը):

3. ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության հաջորդ բաժինն անդրադառնում է բռնության ենթարկված կանանց համար արդարադատության մատչելիությանը: Սկզբում ներկայացվում են միջազգային չափանիշները, որին հաջորդում են այս թեմայի վերաբերյալ բազմաթիվ երկրների փորձի ուսումնասիրության հիման վրա վեր հանված արդյունքները:

3.1. Պետության պատշաճ ջանասիրություն և պարտավորություն

Պատշաճ ջանասիրություն հասկացությունը միջազգային իրավունքում երկար պատմություն ունի: Միջազգային իրավունքի համաձայն՝ բռնության դրսևորումների դեպքում պետությունը պարտավոր է պատշաճ ջանասիրությամբ գործել՝ կանխելու, քննելու, պատժելու և իրավական պաշտպանություն ապահովելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք կատարվել են մասնավոր անձանց թե պետության անունից հանդես եկող անձանց կողմից:

Պատշաճ ջանասիրության պահանջը (կանանց նկատմամբ բռնության հետ կապված) տեղ է գտել բազմաթիվ միջազգային փաստաթղթերում (տե՛ս, օրինակ՝ ԿՆԽՎԿ կոմիտեի 1992թ. ընդհանուր հանձնարարականը, 1993թ. Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը (ԿՆԲՎՅ), 1995թ. Պեկինի հռչակագիրը և գործողությունների հարթակը և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2002)5 հանձնարարականը մասնակից պետություններին՝ բռնությունից կանանց պաշտպանելու վերաբերյալ): Այն նաև արտացոլված է տարածաշրջանային իրավաբանորեն պարտադիր հանդիսացող փաստաթղթերում (ինչպիսիք են Բելեմ դո Պարայի կոնվենցիան⁷ և Ստամբուլի կոնվենցիան), և Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի⁸, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի⁹ դատական պրակտիկայում, ինչպես նաև Կամբոջի արձանագրության համաձայն ԿՆԽՎԿ կոմիտեի որոշումներում¹⁰:

Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում (կետ 57) պարզաբանվում է, որ «5-րդ հոդվածի 1-ին կետն անդրադառնում է պետության պարտականությանը՝ ապահովելու, որ իր իշխանությունները, պաշտոնյաները, գերատեսչությունները, հաստատությունները և պետության անունից գործող այլ սուբյեկտները ձեռնպահ մնան կանանց նկատմամբ բռնության դրսևորումներից, մինչդեռ 2-րդ կետը սահմանում է Կողմերի պարտավորությունը պատշաճ ջանասիրություն ցուցաբերել ոչ պետական սուբյեկտների կողմից իրականացված և Ստամբուլի կոնվենցիայի շրջանակում ընդգրկված՝ արարքների դրսևորման առնչությամբ: Երկու դեպքում էլ դա չանելը հանգեցնում է պետության պատասխանատվության»:

ԿՆԽՎԿ կոմիտեի 1992 թ. 19-րդ ընդհանուր հանձնարարականը (9-րդ կետ) սահմանում է, որ ընդհանուր միջազգային իրավունքի և մարդու իրավունքների հատուկ դաշնագրերի համաձայն, պետությունները պատասխանատվություն են կրում նաև մասնավոր անձանց (ոչ պետական սուբյեկտների) արարքների համար, եթե պատշաճ ջանասիրություն չեն դրսևորում իրավունքների խախտումները կանխելու կամ բռնության դրսևորումները քննելու և պատժելու, ինչպես նաև փոխհատուցում տրամադրելու համար: ՄԱԿ-ի Նախկին հատուկ զեկույցող Յակին Էրթուրքի (2006թ.) խոսքերով, պատշաճ ջանասիրություն հասկացությունը չափորոշիչ է որոշելու, թե արդյոք պետությունը կատարել է կամ չի կատարել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում իր պարտականությունները:

2017թ. իր թիվ 35 Ընդհանուր հանձնարարականում, որը թարմացնում է 19-րդ Ընդհանուր հանձնարարականը, ԿՆԽՎԿ կոմիտեն պարզաբանում է պատշաճ ջանասիրության չափանիշի կիրառման շրջանակը: **Թիվ 35 ընդհանուր հանձնարարականը զգալիորեն ավելի մանրամասն է ներկայացնում, թե գործնականում ինչ է նթադրում պատշաճ ջանասիրություն հասկացությունը:** Այն վերահաստատում է, որ Մասնակից պետությունները պատասխանատվություն են կրում, եթե ի վիճակի չեն ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ ոչ պետական սուբյեկտների կողմից կատարված, կանանց նկատմամբ գենդերային հիմքերով բռնության հանգեցնող դիտավորյալ կամ անզգույշ արարքները կանխելու, ինչպես նաև քննելու, քրեորեն հետապնդելու, պատժելու կամ փոխհատուցելու համար: Կոմիտեն նաև նշում է, որ դա ներառում է նաև ար-

7 Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժի և վերացման մասին միջամերիկյան կոնվենցիան («Բելեմ դո պարայի կոնվենցիա») ընդունվել է Բելեմ դո Պարայում, Բրազիլիա, 1994 թվականի հունիսի 9-ին, Ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ) Գլխավոր ասամբլեայի 24-րդ հերթական նստաշրջանում: Այն ուժի մեջ է մտել 1995 թվականի մարտին:

8 Տե՛ս օրինակ Case Maria da Penha Maia Fernandes-ն ընդդեմ Բրազիլիայի, 16 ապրիլի 2001թ.:

9 Տե՛ս օրինակ Opuz-ն ընդդեմ Թուրքիայի, no. 33401/02, ECHR 2009-III

10 Տե՛ս օրինակ A.T.-ն ընդդեմ Յունգարիայի, V.K.-ն ընդդեմ Բուլղարիայի, S.V.P.-ն ընդդեմ ՄԹ-ի, Isatou Jallow-ն ընդդեմ Բուլղարիայի, Vertido-ն ընդդեմ Ֆիլիպինների, Cecilia Kell-ն ընդդեմ Կանադայի, Fatma Yildirim-ն (հանգուցյալ) ընդդեմ Ավստրիայի, Şahide Goekce-ն (հանգուցյալ) ընդդեմ Ավստրիայի, Inga Abramova-ն ընդդեմ Բելարուսի, V.P.P.-ն ընդդեմ Բուլղարիայի և այլ գործերը:

տատարածքային ենթակայության գործունեություն ծավալող կորպորացիաների արարքները: Պատշաճ ջանասիրություն դրսևորելու պարտավորությունը ենթադրում է, որ մասնակից պետությունները պարտավոր են ընդունել և իրականացնել տարբեր միջոցներ՝ ուղղված մասնավոր սուբյեկտների կողմից կանանց նկատմամբ գենդերային բռնության դեմ պայքարին: Մասնակից պետության կողմից՝ կանանց նկատմամբ գենդերային բռնության դրսևորումները կանխելու համար բոլոր համապատասխան միջոցները չնախատեսելը, երբ այդ պետության իշխանությունները տեղյակ են կամ պետք է տեղյակ լինեին բռնության վտանգի մասին, կամ այդ արարքները չքննելը, քրեորեն չհետապնդելը և չպատժելը կամ ոտնձգության ենթարկված անձին փոխհատուցում չտրամադրելը, ինքնըստինքյան թույլատրում կամ խրախուսում է կանանց նկատմամբ գենդերային բռնության դրսևորումը: Այդ ճախողումները կամ բացթողումները մարդու իրավունքների խախտում են:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեն 2017թ. Կանանց նկատմամբ գենդերային բռնության մասին իր 35 ընդհանուր հանձնարարականում սահմանում է պետության պոզիտիվ պարտականությունները՝ Կանխարգելման, պաշտպանության, քրեական հետապնդման և պատժի, փոխհատուցման, համակարգման, հսկողության, տվյալների հավաքագրման և միջազգային համագործակցության ոլորտներում: Ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքում ձևավորված կոնկրետ հանձնարարականներից մի քանիսը ներկայացված են ստորև:

ՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՔՐԵԱԿԱՆ ԴԵՏԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՈԶԻՏԻՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետությունները. (կետ 32):

- **Երաշխավորում են ոտնձգության ենթարկված անձանց համար դատարանի արդյունավետ հասանելիությունը**, ապահովում են, որ իշխանությունները պատշաճ կերպով արձագանքեն կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր դեպքերին, այդ թվում՝ **կիրառելով քրեական օրենսդրություն** և, անհրաժեշտության դեպքում, **ex officio** քրեական հետապնդում՝ ենթադրյալ իրավախախտներին արդար, անաչառ, ժամանակին և արագ կարգով դատարանի առջև կանգնեցնելու և համարժեք պատասխանատվության միջոցների ենթարկելու համար: Բռնության ենթարկված անձանցից/տուժողներից տուգանքները կամ դատական վճարներ չպետք է գանձվեն:
- **Երաշխավորում են, որ կանանց նկատմամբ գենդերային բռնությունը պարտադիր կերպով չվերապահվի միայն** վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերի կարգավորմանը, այդ թվում՝ մեդիացիային և հաշտեցմանը: Այս ընթացակարգերի կիրառումը պետք է խստորեն կանոնակարգվի և թույլատրելի լինի միայն այն դեպքում, երբ մասնագիտացված թիմի նախկին գնահատումը երաշխավորում է բռնության ենթարկված անձի/տուժողի ազատ և տեղեկացված համաձայնությունը, ընդ որում՝ պայմանով, որ բռնության ենթարկված անձի/տուժողի կամ նրա ընտանիքի անդամների համար հետագա վտանգի նշաններ չլինեն: Այս ընթացակարգերը պետք է բարձրացնեն բռնության ենթարկված անձանց/տուժողների սեփական կարևորության գիտակցումը, իրականացվեն հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից՝ հասկանալու և պատշաճ կերպով միջամտելու կանանց նկատմամբ գենդերային բռնության դեպքերին՝ ապահովելով կանանց և երեխաների իրավունքների պատշաճ պաշտպանություն, ինչպես նաև միջամտություն՝ առանց կարծրատիպերի կամ կանանց կրկնակի վիկտիմիզացիայի: Այս **այլընտրանքային ընթացակարգերը չպետք է խոչընդոտ հանդիսանան կանանց համար արդարադատության մատչելիության երաշխավորման համար**:

Կարևոր է ընդգծել Ստամբուլի կոնվենցիայի 55-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան նորմը:¹¹ Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցի 280-րդ կետը պարզաբանում է, որ 55-րդ հոդվածի 1-ին մասը «Կողմե-

11 Այս հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 78-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համաձայն, 35-րդ հոդվածով նախատեսված ոչ մեծ ծանրության իրավախախտումների պարագայում բաց է վերապահումների համար: Նախագծողները ցանկանում էին հստակ տարբերակել անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ ոտնձգության ենթարկված անձի մահվան հանգեցրած ֆիզիկական բռնության լուրջ բնույթի իրավախախտումները, որոնց վրա չի տարածվում վերապահումը, ֆիզիկական բռնության այլ, թեթև դրսևորումներից: Այդուհանդերձ, կողմերի հայեցողությանն է թողնված որոշելը, թե որն է ֆիզիկական բռնության «ոչ մեծ ծանրության իրավախախտումը» (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 281):

րին պարտավորեցնում է ապահովել, որ իրավախախտումների մի շարք կատեգորիաների քննությունը «ամբողջությամբ կախված» չլինի ոտնձգության ենթարկված անձի հաղորդումից կամ բողոքից և, որ ցանկացած վարույթ կարող է շարունակվել նույնիսկ այն բանից հետո, երբ ոտնձգության ենթարկված անձը հետ է վերցրել իր հաղորդումը կամ բողոքը: Նախագծողները որոշել են ոտնձգության ենթարկված անձի հաղորդման կամ բողոքի առնչությամբ օգտագործել «ամբողջովին կախված» եզրույթը յուրաքանչյուր իրավական համակարգում առկա ընթացակարգային տարբերությունները վերացնելու համար՝ նկատի ունենալով, որ այս հոդվածում թվարկված իրավախախտումների քննության կամ քրեական հետապնդման ապահովումը պետության և նրա իշխանությունների պարտականությունն է: ... Այն, որ Կոնվենցիայով կարգավորվող իրավախախտումներից շատերը կատարվում են ընտանիքի անդամների, սեռական զուգընկերոջ կամ ոտնձգության ենթարկված անձի անմիջական սոցիալական շրջապատում գտնվող անձանց կողմից, ինչպես նաև դրա հետևանքով առաջացած ամոթի, վախի և անօգնականության զգացումը հանգեցնում են հաղորդումների և, հետևաբար, դատապարտումների ցածր տոկոսների:

Յետևաբար, իրավապահ մարմինները ապացույցներ հավաքելու համար, այդ թվում՝ իրեղեն ապացույցներ, վկաների ցուցմունքներ, բժշկական փորձաքննության արդյունքներ և այլն պետք է պրոակտիվորեն քննություն անցկացնեն, ապահովելու վարույթի իրականացումը առնվազն լուրջ իրավախախտումների դեպքում, ինչպիսիք են ոտնձգության ենթարկված անձի մահվան կամ նրա առողջությանը լուրջ վնասի հանգեցրած ֆիզիկական բռնությունը, նույնիսկ, եթե ոտնձգության ենթարկված անձը հետ վերցրի իր հաղորդումը կամ բողոքը:»։ Զիմսվելով Ստամբուլի կոնվենցիայի վերոնշյալ պահանջների վրա՝ **ԳՐԵՎԻՈ-ն իր մի քանի զեկույցներում վերհաստատել է 55-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավախախտումների (ֆիզիկական բռնություն, սեռական բռնություն, հարկադիր ամուսնություն, կանանց սեռական օրգանների խեղում, հղիության արհեստական ընհատման հարկադրելը և հարկադիր ամլացում) համար ex officio քրեական հետապնդում ապահովելու** (ինչը նշանակում է, որ գործի քննության համար չի պահանջում ոտնձգության ենթարկված անձի բողոքը)՝ **անհրաժեշտությունը:**

Ինչ վերաբերում է վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերին, ներառյալ մեդիացիային և հաշտեցմանը, Ստամբուլի կոնվենցիայի 48-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է Մասնակից պետություններից արգելել Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեպքերի առնչությամբ **վեճերի լուծման այլընտրանքային գործընթացներին (ՎԱԼ), ներառյալ մեդիացիային և հաշտեցմանը պարտադիր մասնակցությունը**, Այս դրույթը բխում է այն սկզբունքից, որ կանանց նկատմամբ բռնությունը իշխանության անհավասար հարաբերությունների դրսևորում է, և որ բռնության ենթարկված անձինք չեն կարող մուտք գործել ՎԱԼ գործընթացներ նույն մակարդակով, ինչ որ բռնություն գործադրողը (ԳՐԵՎԻՈ 2022թ., մաս 406): 48-րդ հոդվածի 2-րդ մասը նպատակ ունի կանխել մեկ այլ անցանկալի հետևանք, որը իրավական միջոցները կարող են ունենալ ոտնձգության ենթարկված անձի վրա՝ պահանջելով մասնակից պետություններից ապահովել, որ ոտնձգողի նկատմամբ կիրառվող որևէ տուգանք ոտնձգության ենթարկված անձի համար անուղղակի ֆինանսական խնդիրներ չառաջացնի: Որպես այս ոլորտում արդյունավետ գործելակերպ ընդգծվեց Իսպանիայի օրինակը (նույն տեղում՝ կետ 407), որտեղ օրենքն ուղղակիորեն արգելում է մեդիացիան սեռական զուգընկերոջ կողմից բռնության դեպքերում: Նման գործերն ուղարկվում են կանանց նկատմամբ բռնության հարցերով մասնագիտացված դատարաններ, որտեղ բռնության դեպքերը դիտարկվում են մեդիացիայի գործընթացի շրջանակում, ընդ որում նախքան մեդիացիա առաջարկելը պահանջվում է անցկացնել գործի գնահատում:

3.2. Ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության հարցում թերացումների պատճառների բացահայտում. ի՞նչ է «անարձագանք դեպքը»:

Քրեական հետապնդման և մեղադրական դատավճիռների տոկոսային հարաբերություն. Ընտանեկան բռնության կամ կանանց նկատմամբ բռնության այլ ձևերի գործերով քրեական հետապնդման և դատապարտման գործակիցները հաճախ դիտարկվում են որպես բռնությանը քրեական արդարադատության ոլորտի արձագանքման արդյունավետության ցուցիչներ: Քրեական արդարադատության արձագանքի արդյունա-

վետությունը գնահատելու համար կարևոր է տարեկան կտրվածքով հավաքել հաղորդված դեպքերի, քրեական հետապնդման դեպքերի և դատվածությունների վերաբերյալ տվյալները: Նման վերլուծությունը էական նշանակություն ունի **անարձագանք դեպքերի** համամասնությունը որոշելու համար, այսինքն այն դեպքերի, որոնք հաղորդվել են իրավապահ մարմիններին, բայց ոտնձգողի համար չեն հանգեցրել որևէ իրավական պատասխանատվության: Կամ, այլ կերպ ասած, անարձագանք գործերի վերլուծությունը վերաբերում է նրան, թե երբ, ինչպես և ինչու են գործերը հանվել կամ այլ կերպ «կորել» քրեական արդարադատության գործընթացում: Նման վերլուծություն կարող է պատշաճ կերպով իրականացվել, եթե ոստիկանության և դատական համակարգի կողմից օգտագործվող տվյալների հավաքագրման համակարգերը թույլ տան պատշաճ կերպով հետևել բռնության դեպքերին քրեական արդարադատության համակարգում: Միայն այդ կերպ է հնարավոր բացահայտել օրենքների կիրառման/քաղաքականությունների իրականացման թերությունները և վերհանել թերությունների հիմքում ընկած գործոնները, օրինակ՝ արդյո՞ք ոստիկանությունը մերժում է որոշ հաղորդումները, արդյո՞ք դատախազությունը չափից շատ մեղադրանքներ է կասեցնում (որոնք առաջադրվել են օրինակ՝ ոտնձգության ենթարկված անձանց հաղորդումներին չափից ավելի վստահության պատճառով) և այլն:

ԿՆԲ գործերի քրեական հետապնդման արդյունավետ արձագանքների վերաբերյալ ձեռնարկում (ՄԱԿԶՅ 2014թ.) նշվում է, որ չնայած վերջին տասնամյակների ընթացքում ԿՆԲ հաղթահարման խնդրի նկատմամբ ուշադրության աճին, ինչպես նաև քրեական օրենսդրության և ընթացակարգերի լայնածավալ բարեփոխումներին, որոշ երկրներում մեղադրական դատավճիռների մակարդակը մնում է նույնը կամ նույնիսկ նվազում է: Կանանց նկատմամբ բռնության անարձագանք մնացած դեպքերի վերաբերյալ միջազգային ուսումնասիրության շրջանակներում (Johnson et al. 2008) աշխարհի 11¹² երկրների շուրջ 23,000 կանայք ենթարկվել են հարցման՝ 16 տարեկանից սկսած սեռական զուգընկերների և այդպիսիք չհանդիսացող այլ անձանց կողմից ֆիզիկական և սեռական բռնության հետ կապված իրենց փորձի վերաբերյալ: Ուսումնասիրության հեղինակները հանգել են այն եզրակացության, որ, ընդհանուր առմամբ, կանանց 20%-ից քիչն է ոստիկանությանը հաղորդել բռնության վերջին դեպքի մասին և, որ, բացառությամբ երեք երկրների, կանայք ավելի հաճախ հաղորդում են բռնության այն դեպքերի մասին, որոք կատարվել են զուգընկեր չհանդիսացող անձի կողմից: Յետագոտված բոլոր երկրներում արձանագրվել է ուգընկեր չհանդիսացող անձի կողմից ֆիզիկական բռնություն գործադրելու դեպքերը ավելի հաճախ են հաղորդվել, քան սեռական բռնության դրսևորումները: Բոլոր դեպքերի 1-ից 7%-ի դեպքերում է ոտնձգողին մեղադրանք առաջադրել, իսկ զուգընկերոջ կամ այդպիսին չհանդիսացող անձի կողմից բռնության դեպքերի միայն 1-ից 5% էմ բացառությամբ մեկ երկրի, հանգեցրել ոտնձգողի դատապարտման:

Մի շարք ուսումնասիրություններում վերլուծվել է կանանց համար արդարադատության մատչելիությունը (մոտ 15 տարվա ընթացքում)՝ պատշաճ ջանասիրության սկզբունքի իրականացման բազմաթիվ ցուցիչների կիրառմամբ, և պարզվել է, որ ընտանեկան բռնությանը քրեական արդարադատության արձագանքման թերությունները պայմանավորված են, մասնավորապես, մեղադրանքները կարճելու աճող միտումով (մոտ երկու երրորդը), թեև բռնության դեպքերի մասին հաղորդման ցուցանիշներն աճել են, ընդ որում դատարանները ևս (հիմնականում) պատիժը պայմանականորեն չեն կիրառել (Brankovic 2013, 2016):

ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցների միջնաժամկետ հորիզոնական գնահատման մեջ (2022 թ. կետ 450) ընդգծվել է, որ անարձագանք մնացած **ընտանեկան բռնության և բռնաբարության դեպքերի մակարդակը ընդհանուր առմամբ բարձր է ողջ Եվրոպայում**, և անհրաժեշտ է ջանքեր գործադրել դրանց հիմնական պատճառները բացահայտելու համար: Այս հարցի վերաբերյալ իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ (Kelly and Regan 2001; Regan and Kelly 2003; Kelly, Lovett and Regan 2005; HMCPSI 2002; Hester 2006; Lovett and Kelly 2009; Jewell and Wormith 2010; Sleath and Smith, 2017; Westermarland, McGlynn, and Humphreys 2018; McPhee, Hester, Lilley-Walker and Bates 2022): Այստեղ կարևոր է ընդգծել, որ ԿՆԲ-ի պետական արձագանքը գնահատելու համար միջազգային մակարդակով ցուցիչների ընդհանուր խումբ ստեղծելուն նվիրված իր աշխատանքում, որը թույլ կտար համեմատություններ կատարել տարբեր երկրներում և գնահատել առաջընթացը ժամանակի ընթացքում, Կանանց նկատմամբ բռնության հարցերով ՄԱԿ-ի նախկին հա-

12 Յետագոտության մեջ ընդգրկված երկրներն են՝ Ավստրալիա, Կոստա Ռիկա, Չեխիա, Դանիա, Հունաստան, Հունկոնգ, Իտալիա, Մոզամբիկ, Ֆիլիպիններ, Լեհաստան և Շվեյցարիա:

տուկ զեկուցողը (Ertürk 2008) առաջարկել է անարձագանք դեպքերի ցուցիչը դիտարկել որպես արդարադատության մատչելիության հիմնական ցուցիչներից մեկը¹³ և բացատրել է, որ այն պահանջում է ամենամյա կտրվածքով հետևել բռնության դեպքերի մասին հաղորդումների, քրեական հետապնդման և դատապարտման մակարդակին: Անարձագանք դեպքերը բարդ, բազմաշերտ ցուցանիշ են:

- Բռնության դեպքերի մասին հաղորդումների թվի աճը կարող է դիտվել որպես սոցիալական հանդուրժողականության նվազման և արդարադատության մատչելիության իրավունքից օգտվելու կասանց պատրաստականության աճի ցուցանիշ:
- Քրեական հետապնդման ցուցանիշները աճը կարող է արտացոլել ոչ միայն հաղորդումների թվային աճը, այլև վկայի իրավական և դատավարական բարեփոխումների դրական ազդեցության մասին:
- Նմանապես, մեղադրական դատավճիռների մակարդակը պետք է մնա նվազագույն հաստատուն ցուցանիշի վրա, իսկ դատավարական բարեփոխումների արդյունավետ լինելու դեպքում աճ գրանցի: Այն չպետք է ավելի ցածր լինի, քան մյուս հանցագործությունների դեպքում, մանավանդ, որ շատ դեպքերում ոտնձգողի ինքնությունը հայտնի է:

Իր զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն հաճախ մատնանշում է քրեական արդարադատության արձագանքման թերությունները և կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի հետ կապված անարձագանք դեպքերի բարձր տոկոսին նպաստող ցանկացած գործոնի բացահայտման և վերացման անհրաժեշտությունը (տես հաջորդ բաժինը): ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդվածին համապատասխան նման միջոցները պետք է զուգորդվեն ըստ սեռի տարանջատված վարչական և դատական տվյալների կանոնավոր հավաքագրմամբ, որոնք հավաստի և համեմատելի են ամբողջ դատական շղթայում: Պորտուգալիայի ստորև ներկայացվող օրինակը ցույց է տալիս, թե ինչպես են տվյալների հավաքագրման բարելավումները օգնել բացահայտելու այդպիսի թերությունները:

2009 թվականին Պորտուգալիայում նախատեսվեց իրավապահ մարմիններից (ոստիկանությունից և ազգային գվարդիայից) և դատական համակարգից տվյալների հավաքագրման իրավական պարտավորություն՝ քրեական դատավարության ողջ շղթան վերակառուցելու համար՝ սկսած այն պահից, երբ ոտնձգության ենթարկված անձը բողոք/հաղորդում է ներկայացնում ոստիկանություն, մինչև այն դատարան հանձնելը (ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Պորտուգալիայի վերաբերյալ, 2019 թ): Իր զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն հաճախակի հանձնարարել է երկրներին ներդաշնակեցնել կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ առանձին տվյալների հավաքագրումը դատական շղթայում:

Պորտուգալիայում քրեական արդարադատության ոլորտում (առաջին ատյանի դատարանները) են արձանագրվում ընտանեկան բռնության, բռնաբարության, ինչպես նաև ԿՆԲ-ին առնչվող այլ հանցագործությունների համար դատապարտումների վերաբերյալ տվյալները: Ոստիկանություն հաղորդում ներկայացնելուց մինչև դատարանի դատավճիռի մասին տվյալների հավաքագրման Պորտուգալիայում ներդրված համակարգերի միջոցով հնարավոր է հետևել այդ գործերի ընթացքին, ինչն էլ արտացոլվել է ԳՐԵՎԻՈՒ-ի զեկույցում: Այդ տվյալները վկայում են **ընտանեկան բռնության գծով մեղադրական դատավճիռների չափազանց ցածր ցուցանիշի մասին**. արձանագրված դեպքերի միայն 7%-ն է ավարտվում դատապարտմամբ: 2016 թվականին ընտանեկան բռնության մասին 27 005 հաղորդումներից միայն 3 646-ն է հանգեցրել դատական վարույթի, և միայն 1 984-ով են առաջին ատյանի դատարանները մեղադրական դատավճիռներ կայացրել: Մեղադրական դատավճիռների ցածր ցուցանիշներին նպաստող գործոնները հետևյալն են. նախնական քննությանն փոխում գտնվող 4163 վարույթներից 2796-ով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ կամ հանրային դատախազի պահանջով՝ սեփական նախաձեռնությամբ կամ ոտնձգողի կամ ոտնձգության ենթարկված անձի

13 Ցուցիչը «տվյալների մի տարր է, որն ամփոփում է մեծ քանակությամբ տեղեկատվություն մեկ թվի մեջ, որպեսզի ցույց տա ժամանակի ընթացքում փոփոխությունը» (Beck, 1999). «Գործընթացի ցուցիչները» վերաբերում են քաղաքականության գործիքներին, ծրագրերին և հատուկ միջամտություններին. պետությունների և անհատների կողմից իրավունքների պաշտպանության և իրականացման համար ձեռնարկվող գործողություններին (ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակ, 2006թ., Ertürk 2008թ.):

հայցի հիման վրա: Այն դեպքերում, երբ մեղադրական դատավճիռ է կայացվել, ազատագրված պատիժների ավելի քան 90%-ը պայմանականորեն չի կիրառվել (նույն աղբյուր): Յետևաբար, ինչպես նշվում է ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման տարբեր զեկույցներում, կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ համապարփակ և հիմնավոր, ըստ սեռի տարանջատված վիճակագրությունը կարևոր է ապացույցների վրա հիմնված և գենդերազգային քաղաքականություն մշակելու համար՝ կանանց նկատմամբ բռնությունը արդյունավետորեն կանխելու և դրա դեմ պայքարելու համար:

Այլ երկրներում ընտանեկան բռնությանը քրեական արդարադատության արձագանքի մարտահրավերները

ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցներում նշված՝ ԸԲ արձագանքման թերությունները և համապատասխան հանձնարարականները կարող են օգտակար լինել Հայաստանի իշխանություններին՝ ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության հարցի համատեքստում:

- **Ոստիկանության պրոակտիվ դերը ապացույցների հավաքման գործում՝ ոտնձգության ենթարկված անձանց հաղորդումներին անվերապահորեն վստահելուց խուսափելու համար**

ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցներում հետևողականորեն պարզաբանվել է ապացույցներ հավաքելու հարցում, մինչ գործը դատախազություն ուղարկվելը, իրավապահ մարմինների դերը՝ պայմանավորված քրեական հետապնդման հանգեցրած դեպքերի և դատապարտման հանգեցրած դատավճիռների քանակական ցածր ցուցանիշներով (2022թ, կետ 444): Ավստրիայի, Ֆրանսիայի, Նիդեռլանդների և Իսպանիայի վերաբերյալ զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն ընդգծել է ոտնձգության ենթարկված անձի հաղորդմանը զուգահեռ իրավապահ մարմինների կողմից պրոակտիվ կերպով բոլոր անհրաժեշտ ապացույցները մանրազնին հավաքելու կարևորությունը: Դա հատկապես կարևոր է Ստամբուլի կոնվենցիայի 55-րդ հոդվածով նախատեսված ԿՆԲ դեպքերով ex officio արդյունավետ քրեական հետապնդում ապահովելու համար: Մասնավորապես, իրավապահ մարմինների կողմից ապացույցների հավաքումը ենթադրում է վնասվածքների փաստագրում (ոտնձգության ենթարկված կնոջ համաձայնությամբ), դեպքի վայրի լուսանկարում, ԴՆԹ-ի նմուշների ձեռք բերում, հարևաններից և ցանկացած այլ վկաներից ցուցմունքների ստացում: Ոստի, ԳՐԵՎԻՈՒ-ն խորհուրդով/ հորդորել է այդ երկրների իշխանություններին միջոցներ ձեռնարկել՝ բարելավել ԿՆԲ գործերով ապացույցների հավաքագրումը, նվազեցնելով ոտնձգության ենթարկված անձի ցուցմունքներին ապավինելու պրակտիկան:

- **Քրեական հետապնդումների և մեղադրական դատավճիռների վերաբերյալ անբավարար տվյալներ**

ԳՐԵՎԻՈՒ-ն (2022թ., կետ 446) հետևողականորեն ուշադրություն է հրավիրել ԿՆԲ բոլոր ձևերի առնչությամբ քրեական հետապնդման և մեղադրական դատավճիռների ցածր ցուցանիշների խնդրի վրա: Շվեդիայի և Թուրքիայի վերաբերյալ իր զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն ընդգծել է, որ անբավարար տվյալները թույլ չեն տալիս գնահատել, թե արդյոք գործերն իրականում անցնում են քրեական արդարադատության ողջ շղթայի երկայնքով: ԳՐԵՎԻՈՒ-ն հիշեցրել է, որ դատվածության ցածր մակարդակը խարխուլ է ոտնձգության ենթարկված անձանց վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ ուղերձներ հղելով, որ բռնություն գործադրած անձինք պատասխանատվության չեն ենթարկվի, որն, իր հերթին, նպաստում է իրավապահ մարմիններին նման դեպքերի հաղորդման ցածր ցուցանիշներին:

- **Դատապարտումների ցածր ցուցանիշներին նպաստող գործոններ**

ԳՐԵՎԻՈՒ-ն (նույն տեղում՝ 447 և 448 կետեր) ուսումնասիրել է այն գործոնները, որոնք հանգեցնում են քրեական հետապնդման և դատապարտման ցածր ցուցանիշներին: Դրանց թվում են ԿՆԲ վերաբերյալ իրազեկվածության և մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը, դատախազների կամ դատավորների համար մասնագիտացված վերապատրաստում չանցկացնելը, գործը կազմելու վերաբերյալ ուղեցույցների բացակայությունը, ոտնձգության ենթարկված անձանց ցուցմունքներին՝ որպես առաջնային ապացույցների չափից շատ վստահելը, ինչպես նաև սեռական բռնության և բռնաբարությունների հարցում գենդերային կողմնակալությունը և կարծրատիպերի ազդեցությունը: Արդարադատության շղթայում մասնագետների փոխկապակցվածությունը վտանգ է առաջացնում, որ նախնական քննության փուլում թերությունները կա-

րող են վնասակար ազդեցություն ունենալ քրեական հետապնդման գործընթացի վրա: Ավստրիայի և Չեռնոգորիայի վերաբերյալ զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն մատնանշել է դատախազների կողմից իրավապահ մարմինների նկատմամբ վերահսկողության թերացումների պրակտիկան, մասնավորապես երբ չեն կարգադրում լրացուցիչ քննություն անցկացնել և մեղադրանքի առաջադրման իրենց որոշումները հիմնում են սահմանափակ ապացույցների վրա: Ավստրիայի դեպքում առկա է դատախազության կողմից ԸԲ գծով քրեական գործեր չհարուցելու միտում: Մինչդեռ Չեռնոգորիայի դեպքում դատախազությունը նման դեպքերը հաճախ որպես զանցանք է որակում:

- **Ապահովել, որ պատիժը համարժեք լինի արարքի ծանրությանը**

ԳՐԵՎԻՈՒ-ն (տույն տեղում՝ կետ 449) ընդգծել է, որ քրեական արդարադատությունը ԿՆԲ-ի միակ համարժեք արձագանքը չէ, այլ համապարփակ արձագանքի մի մասն է, որը նախատեսվում է Կանխարգելում, Պաշտպանություն, Քրեական հետապնդում և համապարփակ Քաղաքականություն: ԳՐԵՎԻՈՒ-ն ուշադրություն է հրավիրել այլընտրանքային պատասխանատվության միջոցների կիրառման խնդրահարույց հարցին, այն է՝ իրավախախտների նկատմամբ քրեական պատասխանատվություն չի կիրառվում: ԳՐԵՎԻՈՒ-ն, մասնավորապես, մտահոգություն է հայտնել Ավստրիայում և Բելգիայում ԸԲ և հետամտման գործերով այլընտրանքային միջոցների լայն կիրառման վերաբերյալ: Այն նաև մատնանշել է, որ Իսպանիայում բռնություն գործադրող անձանց սովոր մասի նկատմամբ ազատազրկում չի կիրառվում, ընդ որում նրանցից չի պահանջվում նաև մասնակցել ոտնձգողների համար հատուկ ծրագրերին: Թուրքիայի վերաբերյալ զեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն իշխանություններին կոչ է արել երաշխավորել, որ քաղաքացիական ոլորտում կիրառվող պաշտպանական որոշումների կիրառումը չփոխարինի կամ չհետաձգի քրեական հետապնդումը: Դրանից ելնելով, ԳՐԵՎԻՈՒ-ն ընդգծել է, որ դատապարտումների բացակայությունը հակասության մեջ է Ստամբուլի կոնվենցիայի ոգուն և սկզբունքներին, որոնք ուղղված են ԿՆԲ բոլոր ձևերի հանդեպ քրեական արդարադատության արդյունավետ արձագանքին: Ոտնձգողների անպատժելիությանը վերջ դնելու և կրկնահանցագործության վտանգը կանխելու նպատակով ԳՐԵՎԻՈՒ-ն հորդորել է իշխանություններին ապահովելու, որ ԿՆԲ գործերով պատիժը համարժեք լինի իրավախախտման ծանրությանը և ապահովի պատասխանատվության միջոցների կանխարգելիչ գործառնությունը:

- **Քրեական դատավարությունում վեճերի այլընտրանքային լուծման (ՎԱԼ) գործընթացների (ներառյալ հաշտեցման) հետ կապված մարտահրավերները.**

ԳՐԵՎԻՈՒ-ն (տույն տեղում՝ կետ 408) նշել է, որ, թեև դիտարկված երկրներից և ոչ մեկը իր օրենքներում չի նախատեսել քրեական դատավարության համատեքստում պարտադիր ՎԱԼ գործընթացներ, սակայն արձանագրել է խնդրահարույց մոտեցումներ, որոնք հակասում են Ստամբուլի կոնվենցիային: Օրինակ՝ ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ Ալբանիայում և Թուրքիայում, որտեղ մասնավոր հետապնդման որոշ դեպքերում քրեական օրենսդրությունը թույլ է տալիս հաշտեցումը՝ առանց այն պարտադիր դարձնելու, ոտնձգության ենթարկված շատ անձինք, համապատասխան ընթացակարգերի և իրենց իրավունքների մասին տեղեկատվության բացակայության պատճառով, այն դեռևս ընկալում են որպես պարտադիր: ԳՐԵՎԻՈՒ-ն մտահոգությամբ նշել է, որ Նիդեռլանդներում և Սերբիայում, որտեղ օրենքը թույլ է տալիս առանձին դեպքերում հետաձգել քրեական հետապնդումը, հետաձգման որոշումները կայացվում են դատախազության կողմից՝ ոտնձգողի համաձայնությամբ՝ առանց ոտնձգության ենթարկված անձի հետ խորհրդակցելու: ԳՐԵՎԻՈՒ-ն տեղեկացել է, որ թեև Ֆինլանդիայում օրենքով չի նախատեսված, որ մեղիացիան փոխարինում է քրեական վարույթին, սակայն իրականում դա հաճախ տեղի է ունենում: Ուստի, ԳՐԵՎԻՈՒ-ն Ֆինլանդիայի իշխանություններին կոչ է արել վերանայել ոստիկանությանը վերապահված լիազորությունը՝ որպես ընտանեկան բռնության գործերով քրեական արդարադատության միջոց մեղիացիան առաջարկելու առումով: Թուրքիայի վերաբերյալ զեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն մտահոգությամբ է նշել այն պրակտիկան, որ դատարաններն մեղիացիա են առաջարկում ի հեճուկս սահմանված արգելանքի կամ պաշտպանական որոշման և օրենքում՝ ամուսնական հարաբերություններում բռնության գործերով մեղիացիայի վերաբերյալ ընդգրկուն բացառությունների: Ուստի այն հորդորել է թուրքական իշխանություններին բարեփոխել օրենքը և ընդլայնել քրեական մեղիացիայի կիրառման անթույլատրելիության հիմքերը՝ չսահմանափակելով դրանք միայն ներկայիս ամուսնու կողմից բռնության կիրառման դեպքերով: ԳՐԵՎԻՈՒ-ն մտահոգված է, որ նշված մոտեցումներն անցանկալի ուղերձ են հղում առ այն, որ ԸԲ-ն հանցավոր արարք չէ, ինչը հա-

կատում է Ստամբուլի կոնվենցիայի նպատակներին: Արձագանքելով այդ մարտահրավերներին, Ալբանիայի, Բելգիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի վերաբերյալ իր զեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն հորդորել է իշխանություններին ձեռնարկել միջոցներ, որոնք կապահովեն կողմերի միջև իշխանության անհավասարակշռության պայմաններում ազատ համաձայնության հնարավորությունը՝ և այնպիսի երաշխիքներ, որոնք լիովին կպաշտպանեն ոտնձգության ենթարկված անձանց իրավունքները, կարիքները և անվտանգությունը. այն նաև հորդորել է Բելգիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի իշխանություններին՝ ապահովել, որ ոտնձգության ենթարկված անձինք ստանան համապատասխան տեղեկատվություն, մասնավորապես մեդիացիայի ոչ պարտադիր բնույթի վերաբերյալ: ԳՐԵՎԻՈՒ-ի մի քանի զեկույցներում բացահայտված մեկ այլ ընդհանուր մարտահրավերը իրավաբան մասնագետների կողմից բռնության դիսամիկայի և ԿՆԲ գործընթացներում ՎԱԼ-ի կիրառման հետ կապված վտանգների անտեսումն է: ԳՐԵՎԻՈՒ-ն մտավախություն է հայտնել, որ մի շարք երկրներում, այդ թվում՝ Բելգիայում, Ֆրանսիայում և Նիդեռլանդներում, որտեղ կամավոր մեդիացիան թույլատրվում է, քրեական արդարադատության մասնագետները կարող են չպատկերացնել ընտանեկան բռնության դիսամիկան և, հետևաբար, անտեսել, որ ոտնձգության ենթարկված անձը անկարող կլինի հրաժարվել մեդիացիայից՝ վախենալով ոտնձգողի կողմից ապագա բռնությունից կամ հաշվեհարդարից: Ուստի, ԳՐԵՎԻՈՒ-ն կոչ է արել Բելգիայում, Ֆրանսիայում, Սերբիայում և Թուրքիայում վերապատրաստումներ կազմակերպել իրավաբանների, այդ թվում՝ դատավորների, դատախազների, ոստիկանության ծառայողների, մեդիատորների և իրավաբանների համար, ինչպես նաև մշակել հստակ ընթացակարգեր և ուղեցույցներ մասնագետների համար Ֆինլանդիայում և Նիդեռլանդներում:

3.3. Ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիությունը Հայաստանում. քրեական արդարադատության ոլորտի արձագանքը

Ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ այս բաժնում ներկայացվում են Հայաստանում ԸԲ օրենքի ընդունումից առաջ և հետո ընկած ժամանակահատվածին վերաբերող տվյալները, ներառյալ ոստիկանություն հաղորդված բռնության դեպքերի վերաբերյալ առկա տվյալները, ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տվյալները (հրապարակված ՄԻՊ-ի 2019 և 2020թթ. զեկույցներում):

Ուսումնասիրության այս մասի նպատակն է վերլուծել, թե ինչպես են գործերն անցնում քրեական դատավարության մի փուլից մյուսը՝ նպատակ ունենալով բացահայտել, թե արդարադատության շղթայի որ մասերում են տեղի ունենում ձգձգումներ, որտեղ են առկա թերություններ և խոչընդոտներ, և պարզելու, թե որտեղ են դեպքերը ամբողջությամբ դուրս մնում արդարադատության շղթայից:

Հայաստանի քրեական արդարադատության շղթայում գործերի ընթացքը հետևելու առումով լուրջ մարտահրավեր է տվյալների բացակայությունը: Հասանելի են միայն սահմանափակ տվյալներ, և քրեական դատավարության տարբեր փուլերում գործերին հետևելը միշտ չէ, որ հնարավոր է: Նաև դատական գործընթացը կարող է շատ երկար տևել և մեկ տարում նախաձեռնված վարույթը կարող է ավարտվել մեկ այլ տարում, որը թույլ չի տալիս որոշելու այն գործերի տոկոսը, որոնք արձանագրվել են տարվա ընթացքում, սակայն որևէ սանկցիայի չեն հանգեցրել: Հետևաբար, ստորև ներկայացված արդյունքներին պետք է վերապահումով վերաբերվել:

Մինչև ԸԲ օրենքի ընդունումը ոստիկանությունում շատ սահմանափակ տվյալներ կային հաղորդված բռնության դեպքերի և դրանց գծով քրեական վարույթների վերաբերյալ: ՄԱԿ-ի կոնվենցիոնալ մարմինների՝ Հայաստանին ուղղված առաջարկություններում, այդ թվում՝ ԿՆԽՎԿ կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներում (2016թ.), ընդգծվել է ԸԲ գործերով տվյալների սահմանափակությունը: 2014-2017 թվականների առկա տվյալների հիման վրա (տես Աղյուսակ 4. Truchero 2017) կարելի է արձանագրել հետևյալը.

1. Նկատվել են որոշակի հուսադրող միտումներ՝ **ոստիկանություն հաղորդված դեպքերի, ինչպես նաև նախաձեռնված քրեական վարույթների թիվը 2014-ի համեմատ 2016թ. փոքր-ինչ աճել է:**

2. Չնայած այդ դրական միտումներին, քրեական վարույթներ **են նախաձեռնվել հաղորդված դեպքերի ընդհանուր թվի միայն փոքր մասով**.
3. Ինչպես երևում է Աղյուսակ 4-ում՝ **քրեական վարույթները հիմնականում կարճվել են**:

Աղյուսակ 4. Ոստիկանությանը հաղորդված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ տվյալներ, (տարանջատված ըստ ոտնձգության ենթարկված անձ-ոտնձգող հարաբերությունների). նախաձեռնված քրեական վարույթները և դրանց արդյունքները (կարճվել է, դադարեցվել և այլն), 2014-2016թթ.

	2014թ.	2015թ.	2016թ.
Ոստիկանություն հաղորդված ԸԲ դեպքեր	678	784	756
Նախաձեռնված քրեական վարույթներ (հաղորդված դեպքերի ընդհանուր քանակից)	57	150	311 ¹⁴
Ոտնձգության ենթարկված անձ-ոտնձգող հարաբերություններ	հայտնի չէ		
ամուսնու կողմից կնոջ նկատմամբ բռնություն		471	471
կնոջ կողմից ամուսնու նկատմամբ բռնություն		15	20
երեխաների կողմից ծնողների նկատմամբ բռնություն		106	99
ծնողների կողմից երեխաների նկատմամբ բռնություն		65	66
արական սեռի զուգընկերոջ կողմից իգական սեռի զուգընկերոջ նկատմամբ բռնություն		հայտնի չէ	3
բռնություն ընտանքի այլ անդամի կողմից		127	97
Բռնության տեսակ		հայտնի չէ	
Ֆիզիկական			699
սեռական			4
այլ			53
Քրեական վարույթը կարճվել է	հայտնի չէ		206 ¹⁵
Քրեական վարույթը կասեցվել է	հայտնի չէ		7

Կազմվել է ՀՀ ոստիկանության և Քննչական կոմիտեի կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված տվյալների հիման վրա (հրապարակված՝ Truchero 2017 թ.):

ԸԲ օրենքի ընդունումից առաջ ընկած ժամանակահատվածի համեմատ՝ 2019-2020 թվականներին ոստիկանության կողմից հավաքված տվյալները (2019 և 2020 թվականների ՄԻՊ զեկույցներում) ենթադրում են, որ **ընտանեկան բռնության քննության և հետապնդման թերությունները պահպանվում են** (տես Աղյուսակ 5):

14 Վարույթները նախաձեռնվել են 2003 թ.-ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-106, 109-114, 117-121, 124, 131-133, 137-142, 144, 165-174, 185-186 և այլ հոդվածներով (Truchero 2017):

15 40 վարույթը կարճվել է արդարացման հիմքով, իսկ 166-ի դեպքում կարճվել է ոչ արդարացման հիմքով: Վեց վարույթ կասեցվել է, քանի որ իրավախախտների նկատմամբ նախաքննություն էր իրականացվում (նույն աղբյուրից):

Աղյուսակ 5: Ոստիկանության կողմից տրամադրված տվյալներ՝ ընտանեկան բռնության քննված դեպքերը՝ տարանջատված ըստ ոտնձգության ենթարկված անձ-ոտնձգող հարաբերությունների և բռնության տեսակի, 2019-2020թթ.:

	2019թ.	2020թ.
Քննված ԸԲ դեպքերի ընդհանուր թիվ, որից.	485	540
Ոտնձգության ենթարկված անձ- ոտնձգող հարաբերություններ.		
ամուսնու կողմից կնոջ նկատմամբ բռնություն	329	366
կնոջ կողմից ամուսնու նկատմամբ բռնություն	10	22
երեխաների կողմից ծնողների նկատմամբ բռնություն	53	57
ծնողների կողմից երեխաների նկատմամբ բռնություն	41	43
արական սեռի զուգընկերոջ կողմից իգական սեռիզուգընկերոջ նկատմամբ բռնություն	2	4
բռնություն ընտանքի այլ անդամի կողմից	50	43
Բռնության տեսակ		
Ֆիզիկական	469	541
հոգեբանական	14	25 ¹⁶
տնտեսական	2	
Նախաձեռնված քրեական վարույթներ (քննված դեպքերի ընդհանուր թվից), որոնցից.	126 (26%)	150 (28%)
Մինչդատական վարույթում դադարեցված/մերժված վարույթներ (նախաձեռնված վարույթների ընդհանուր թվից) ¹⁷	93 (74%)	111 (74%)
Դատարան ուղարկված գործեր (նախաձեռնված վարույթների ընդհանուր թվից)	33 (26%)	39 (26%)

16 Ոստիկանության ծառայողները որոշ դեպքերում առերևույթ արձանագրել են և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական բռնություն:


17 Տվյալների մեկնաբանման համար օգտագործված հավելյալ տեղեկատվությունը ստացվել է իրավաբան Նինա Փիրումյանի հետ (նախկինում՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակից) հարցազրույցի ընթացքում: Ինչպես պարզաբանեց տիկին Փիրումյանը, (Pirumyan, 2022), «դադարեցված/մերժված» եզրույթը վերաբերում է 33 քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված դատավարական ինստիտուտին (որը գործում էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը): 35-րդ հոդվածը նախատեսում էր քրեական գործ հարուցելու մերժման կամ հարուցված քրեական գործի դադարեցման հետևյալ պատճառները.

«Քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե՝

- 1) բացակայում է հանցագործության դեպքը.
- 2) արարքի մեջ հանցակազմ չկա.
- 3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.
- 4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.
- 5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.
- 6) անցել են վաղեմության ժամկետները.
- 7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.
- 8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.
- 9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.
- 10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանցամասնների կապակցությամբ գործը վերսկսելու համար.
- 11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.
- 12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.
- 13) ընդունվել է համաներման ակտ:

Քրեական վարույթի նախաձեռնումներով է (քննված վարույթների ընդհանուր թվից)	359 (74%)	390 (72%)
Մերժման պատճառներ		
Մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը գործող ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ (ոտնձգության ենթարկված անձը/ ոտնձգության ենթարկված անձի կողմը չի բողոքում)	353 (98%)	386 (99%)
Մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը գործող ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ (անձը մահացել է) ¹⁸	3	1
Մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը գործող ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ ¹⁹	2	
Մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը գործող ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ ²⁰	1	
Մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը գործող ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ ²¹		3

Կազմվել է 33 ոստիկանության կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված տվյալների հիման վրա (հրապարակված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի 2019 և 2020 թթ. զեկույցներում): *ՔԴՕ=Քրեական դատավարության օրենսգրքը (որն ուժի մեջ էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը):



Գծապատկեր 1. Ոստիկանության կողմից հետաքննված բռնության դեպքերը Հայաստանում, 2019-2020 թթ.

3.3.1. Ոստիկանության տրամադրած տվյալների հիման վրա կատարված եզրակացություններ

Հաշվի առնելով առկա տվյալները, ինչպես նաև ՄԻՊ-ի մեկնաբանությունը (2019 և 2020 թվականների զեկույցներում) և հարցազրույցներում տրված լրացուցիչ բացատրությունները²² կարելի է անել հետևյալ եզրա-

18 Ինչպես նշվեց նախորդ ծանոթագրության մեջ, Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով (որը գործում էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը) սահմանված էր հետևյալը. «անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանցանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.»:

19 «Դատարանը կամ դատախազը կամ քննիչը՝ դատախազի համաձայնությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ կամ 74-րդ հոդվածներով (որը գործում էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը) նախատեսված դեպքերում կարող են կարճել հարուցված քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը»:

20 Համաներման մասին ակտն ընդունվել է:

21 Տուժողի և կասկածյալի կամ մեղադրյալի հաշտության դեպքում՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

22 Հարցազրույց Նինա Փիրումյանի հետ, 2022թ. (նախկինում՝ ՄԻՊ գրասենյակի աշխատակից)։

կացությունները: Հարկ է ընդգծել, որ ինչպես արդեն նշվել էր, սույն ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններին նախորդող ժամանակահատվածում, որոնք ուժի մեջ էին մտել 2022 թվականի հուլիսի 1-ին (տե՛ս 1.1. բաժինը. մեթոդաբանություն, ընտրանք և տվյալների աղբյուրներ): Հետևաբար, ստորև բերված վերլուծությունը (այս և հաջորդ բաժիններում) վերաբերում է քրեական օրենսդրության այն դրույթներին, որոնք ուժի մեջ էին մինչև փոփոխությունները:

- 1. Քննված գրեթե բոլոր դեպքերը վերաբերում են ֆիզիկական բռնությանը** (97% 2019թ. և 100% 2020թ.), և հիմնականում ոտնձգող ռոտնձգության ենթարկված անձի ամուսինն է: Հայտնի է, որ ֆիզիկական բռնությունը հաճախ զուգակցվում է հոգեբանական բռնությամբ (97% in 2019 and 100% in 2020), ընդ որում թեև հոգեբանական բռնությունը Հայաստանի 2003 թ.-ի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի համաձայն սկզբունքորեն կարող է հետապնդվել (հոդված 119²³), տվյալները ցույց են տալիս, որ դա գործնականում հազվադեպ է տեղի ունենում: Մեր կարծիքով քննչական պրակտիկան առերևույթ արտացոլում է այն մոտեցումը, որ քրեական հետապնդումն արդարացված է միայն ֆիզիկական բռնության դեպքում: Ինչպես մեկնաբանվել է ՄԻՊ-ի կողմից (2019թ), դա պայմանավորված է որոշակի հասարակական ընկալումներով, ըստ որի՝ բռնության մասին ոտնձգության ենթարկված անձի հաղորդումը իրավապահ մարմիններին արդարացված է համարվում ֆիզիկական բռնության դեպքում, ինչը պայմանավորված նաև է բռնության այլ ձևերի նկատմամբ համարժեք քրեաիրավական արձագանք ապահովող օրենսդրության բացակայությամբ:
- 2. Ավելին, քննվող գործերի մեծ մասը նախնական քննության փուլից առաջ չի անցնում.** նախաձեռնված քրեական վարույթների մեծ մասը կարճվում է նախաքննության փուլում (երկու տարիներին էլ՝ 74%), և դատարան դրանք չեն հասնում: Դա մտահոգիչ միտում է: Ինչպես նշվեց վերևում, հարուցված քրեական գործը մինչդատական փուլում կարճելու հիմքերը նախատեսված են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործած ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով²⁴:
- 3. Քրեական վարույթ նախաձեռնելու մերժման պատճառների մասին տեղեկությունները վկայում են, որ գրեթե բոլոր դեպքերում հիմնական պատճառն այն է, որ** ոտնձգության ենթարկված անձի կողմից բողոք չի ներկայացվում: Ինչպես նշվել է փորձագետների նախորդ վերլուծություններում (Truchero, 2017), ԸԲ դեպքերի մեծ մասի քրեական հետապնդումն իրականացվում է թեթև մարմնական վնասվածքների կամ ծեծի հոդվածների դրույթներով, որնց համար մասնավոր հետապնդում է նախատեսված: Վարույթի քննությունը և քրեական հետապնդումը կարող են ամբողջովին կախված լինել ոտնձգության ենթարկված անձի հայցից՝ ոտնձգողներին պատասխանատվության ենթարկելու պատասխանատվությունը ղնելով ոտնձգության ենթարկված անձի վրա:

2019 և 2020 թվականների ՄԻՊ զեկույցների տվյալները վկայում են, որ 2019 թվականին Քննչական կոմիտեի կողմից ընդհանուր առմամբ քննվել է ԸԲ հետ կապված 635 քրեական գործ, ընդ որում 468-ի մասով վարույթն ավարտի է հասցվել: 2020 թվականին Քննչական կոմիտեի վարույթում գտնվում էր 730 քրեական գործ, որից 453-ը հարուցվել էր 2020 թվականին: Արդյունքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 6-ում:

23 2003 թ.-ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով ասվում է. «Ցանկացած այնպիսի գործողությունը, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

24 Նախաքննության փուլում նախաձեռնված վարույթները կարճելու որոշ պատճառները (Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի հիման վրա) նշված են վերը նշված ծանոթագրություններում: Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածն (որ գործում էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը) ամբողջությամբ բերված է 17-րդ ծանոթագրության մեջ:

Աղյուսակ 6: Քննչական կոմիտեի տրամադրած տվյալները, 2019-2020թթ.

	2019թ.	2020թ.
Քննված ԸԲ դեպքերի ընդհանուր թիվ	635	730
²⁵ Կարճված/ավարտի հասցված ²⁶ քրեական վարույթներ, որից.	468	507
Քրեական վարույթը դադարեցվել է, որից.	326 (70%)	358 71%
Արդարացման հիմքով կարճված քրեական վարույթներ (դադարեցված վարույթների ընդհանուր թվից)	197 40%	126 35%
Ոչ արդարացման հիմքով կարճված քրեական վարույթներ (դադարեցված գործերի ընդհանուր թվից).	1029 (60%)	232 65%
Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	128	144
Չարկադիր բուժում նշանակելու համար դատարան ուղարկված	14	5
Դադարեցված վարույթներ, որից.	33	25
Կասկածյալի՝ փախուստի դիմելու հիմքով	18	14
Այլ հիմքով	15	11

Կազմվել է ՄԻՊ-ի 2019-2020թթ. զեկույցների հիման վրա:

ՄԻՊ-ի 2020 թվականի զեկույցում նաև նշվում է Քրեական օրենսգրքի որ հողավածների հետ են կապված քննված դեպքերը (ՄԻՊ-ի 2019 թվականի զեկույցում այդպիսի տվյալները հասանելի չէին): Այս տեղեկատվությունը արժեքավոր է, քանի որ այն հնարավորություն է տալիս պարզել, թե կոնկրետ որ իրավախախտումների հետ են առավել հաճախ կապված բռնության արարքները, տե՛ս ստորև բերված եզրակացությունները:

3.3.2. Քննչական կոմիտեի տրամադրած տվյալների հիման վրա եզրակացություններ

1. Քննչական կոմիտեի տրամադրած տվյալները (ինչպես հրապարակվել են ՄԻՊ-ի 2019 և 2020 թվականների զեկույցներում) ցույց են տալիս, որ 2019 թվականին կարճվել/ավարտի է հասցվել 468 վարույթ, իսկ 2020 թվականին՝ 507 վարույթ: Դրանցից շատերը **դադարեցվել են** (70% 2019-ին և 71% 2020-ին): Այս համատեքստում հավելվենք, որ ՄԻՊ զեկույցներում ներկայացված թվերն ու վերլուծությունները հիմնված են իրավասու մարմինների (ոստիկանություն, քննչական կոմիտե և գլխավոր դատախազություն) տրամադրած պաշտոնական տեղեկատվության/տվյալների վրա. տե՛ս ստորև): Այս մարմինների պաշտոնական տվյալների մեջ կան որոշակի տարբերություններ կամ անհամապատասխանություններ, որոնք հավանաբար առաջացել են սահմանված տվյալների կատեգորիաների տարբերությունների և/կամ քրեական արդարադատության «շղթայում» ընդգրկված տարբեր մարմինների/կառույցների կողմից հավաքված տվյալների ներդաշնակ չլինելու պատճառով: Սա նկատի ունենալով, ցանկալի կլիներ բարելավել տվյալների հավաքագրման համակարգերը և ներդաշնակեցնել իրավապահ մարմինների և դատական համակարգի կողմից տվյալների հավաքագրումը, ներառյալ ոստիկանությունը, Քննչական կոմիտեն, դատախազությունը և դատարանները (տես ավելին «Ուսումնասիրության առաջարկություններ» բաժնում):

25 Ինչպես պարզաբանեց Փիրումյանը (2022թ.), «կարճված» եզրույթը նշանակում է, որ վարույթ չի ընթանում, այսինքն՝ վարույթը դադարեցվել է մինչդատական փուլում և գործը դատարան չի ուղարկվել:

26 «Ավարտի հասցված վարույթ» եզրույթը նշանակում է, որ նախաքննությունն ամբողջությամբ կատարվել է, և գործն ուղարկվել է դատարան (Փիրումյան, 2022թ.).

2. Քննչական կոմիտեի կողմից քննված հանցանքների կոնկրետ տեսակների ուսումնասիրությունը (որոնք Նշված են ՄԻՊ-ի 2020 թ. զեկույցում) հանգեցնում է հետևյալ եզրակացությունների. 2020 թվականին հարուցված 453 քրեական գործից չորսը վերաբերել են սպանության հանցակազմին (Քրեական օրենսգրքի 104-րդ հոդված): Քրեական գործերի շուրջ երկու երրորդը վերաբերել է հետևյալ երկու հանցանքներին²⁷. 242 դեպք (53%) ծեծի (118-րդ հոդված²⁸), 51-ը (11%)՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի հանցակազմերին (137-րդ հոդված²⁹): ՔՕ 137-րդ հոդվածը նախատեսում է սպառնալիքը կյանքի կոչելու իրական վտանգի ապացույց, ինչը բարձր շեմ է: 118-րդ հոդվածի հաճախակի օգտագործումը համահունչ է իրավական փորձագետների եզրակացություններին (Truchero 2017; Mann 2019) առ այն, որ Հայաստանում բռնության գործերի մեծ մասի քրեական հետապնդումն իրականացվել է այդ հոդվածով:
3. Ընդհանուր առմամբ 31 գործ առնչվել է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումները դիտավորությամբ չկատարելուն (Քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մաս): Դա հուսադրող փաստ է, քանի որ առնվազն մի քանի դեպքերում ԱՄՈՆ-ն կամ պաշտպանական որոշումը խախտած իրավախախտների նկատմամբ քննություն է իրականացվել: Սակայն, բազմաթիվ իրավախախտումներ, ամենայն հավանականությամբ, չեն արձանագրվել և/կամ չեն բացահայտվել: Ինչպես ցույց են տալիս տվյալները (տե՛ս պաշտպանության միջոցների կիրառման մասին բաժինը), ոտնձգության ենթարկված անձի կողմից հաղորդվել է տարբեր խախտումների մասին, սակայն ոստիկանության կողմից շատ քչերն են պրոակտիվորեն բացահայտվել: Դա պետք է դիտվի որպես մտահոգիչ հանգամանք՝ հաշվի առնելով, որ որոշումների խախտումը կարող է ա բռնության ավելի ծանր դրսևորման հանգեցնել: Հայտնի չէ նույնիսկ, թե արդյոք ոտնձգության ենթարկված բոլոր անձանց ահազանգել/տեղեկացրել են, որ նոր խախտումների մասին պետք է հաղորդել ոստիկանություն:
4. Ուշագրավ է (և ոչ ողջունելի), որ ընդամենը 10 դեպք է առնչվել ֆիզիկական սուր ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելու հանցակազմերին (Քրեական օրենսգրքի 119-րդ հոդված): Ինչպես Նշվեց, այս դրույթը կարող է կիրառվել հոգեբանական բռնության հետապնդման համար, սակայն, ինչպես ցույց են տալիս տվյալները, դա գործնականում հազվադեպ է տեղի ունենում:
5. Քանի որ 119-րդ հոդվածով սահմանված հոգեկան տառապանք պատճառելու վերաբերյալ քննության և քրեական հետապնդման արդյունքների մասին տեղեկատվությունը հասանելի չէ, կարելի է, (հիմնվելով ԳՐԵՎԻՈՒ-ի եզրահանգումների վրա), ավելի ընդհանուր դիտարկում անել՝ հորդորելով ապագա օրենսդրին լրացուցիչ ջանքեր իրականացնել օրենսդրական մակարդակում հոգեբանական բռնության համար պատասխանատվություն սահմանելու առումով: Ելակետային գնահատման զեկույցներից շատերում ԳՐԵՎԻՈՒ-ն (2022թ, կետ 347) արձանագրել է, որ այն երկրներում, որտեղ հոգեբանական բռնությունը նախատեսված է այլ իրավախախտումների շարքում, օրինակ՝ պարտադրանքը կամ սպառնալիքը, այն հանցավոր վարքագիծ դիտարկվելու համար պետք է հաղթահարի նման ընդհանուր իրավախախտումների համար սահմանված բավականին բարձր շեմը : Ընդ որում, դրանք հիմնականում հնարավորություն են տալիս ընթացք տալ առանձին մեկուսացված արարքներին,

27 Կիրառվել են նաև բազմաթիվ այլ հանցանքներն օրինակ՝ ծանր ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելը (2003 թ-ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ ՔՕ 119 հոդված), ինքնասպանության դրդելը (ՔՕ 111 հոդված), դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը (Հոդված 117), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՔՕ 112 հոդված) և այլն:

28 2003 թ-ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը (Ծեծը) սահմանում է. «Ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»: 117-րդ հոդվածը (Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը) սահմանում է «Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»:

29 2003 թ-ի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածը սահմանում է. «Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել՝ պատժվում է ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

այլ ոչ թե կրկնվող և երկարատև բնույթ կրող իրավախախտումներին, որոնց հիմքում ընկած արարքները անպայման չէ, որ առանձին վերցված հատեն քրեականացման շեմը: Հայաստանը կարող է օգուտ քաղել ԳՐԵՎԻՈՒ-ի եզրակացությունից, որ նման ընդհանուր իրավախախտումները չեն արտացոլում զուգընկերոջ կողմից հոգեբանական բնության ենթարկված անձանց վնասը: Հետևաբար, այդ դրույթները կիրառելի չեն Ստամբուլի կոնվենցիային համահունչ՝ հոգեբանական բնության արարքը քրեականացնելու համար:³⁰

6. **Ինչպես ներկայացված է Աղյուսակ 6-ում, վարույթների մեծ մասը դադարեցվել է:** Դադարեցված վարույթների ընդհանուր թվից 60%-ը կարճվել է ոչ արդարացման հիմքով 2019թ.-ին և 65%-ը՝ 2020թ.-ին: Ինչպես պարզաբանել են իրավաբան-փորձագետները (Փիրումյան 2022թ), արդարացման հիմքերի առկայության դեպքում անձը, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, ստանում է արդարացվածի կարգավիճակ՝ փոխհատուցման իրավունքով:³¹ Արդարացման հիմքերը ներկայացված են ստորև (Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-3-րդ կետեր)։

- 1) քրեական օրենսգրքով պատժելի որևէ հանցավոր արարքի բացակայություն.
- 2) ենթադրյալ արարքը հանցակազմ չի պարունակում: Սա նշանակում է, որ ենթադրյալ արարքը չի պարունակում բոլոր անհրաժեշտ տարրերը (քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության **means rea** կամ **actus reus**):
- 3) ենթադրյալ արարքը, որը հանգեցրել է վնասի, քրեական օրենսդրությամբ հանցավոր չի դիտարկվում.

Արդարացման հիմքերը ներառում են նաև հետևյալը (35-րդ հոդվածի 2-րդ մաս). «քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը՝ կասեցման, եթե ապացուցված չէ մեղադրյալի մասնակցությունը կատարված հանցագործությանը, եթե սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները»: Օրինակ, ինչպես պարզաբանեց Փիրումյանը (նույն տեղում), ԸԲ արարքը կարող է ֆիզիկական ուժեղ ցավ առաջացրած չլինի և, հետևաբար, այն չի պարունակի ծեծի (հոդված 118) կամ ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելու (հոդված 119) հանցակազմ:

ՄԻՊ-ի 2019 և 2020 թվականների զեկույցները պարունակում են նաև կարևոր տեղեկություններ, որոնք տրամադրվել են Գլխավոր դատախազության կողմից (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7: Գլխավոր դատախազության կողմից տրամադրված տվյալներ

	2019թ.	2020թ.
Ընտանեկան բնության գծով նախաձեռնված քրեական վարույթների ընդհանուր թիվ, որից.	458	214
Մեղադրական եզրակացությունն ուղարկվել է դատարան	108	39
Գործն ուղարկվել է դատարան՝ հարկադիր բուժում նշանակելու միջնորդությամբ	6	
Վարույթը դադարեցվել է և քրեական հետապնդումը կարճվել է կամ չի հարուցվել, որից.	269 59%	111 52%
Քրեական հետապնդումը դադարեցնելու կամ կարճելու կամ կասեցնելու պատճառները.		

30 Ստամբուլի կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն, մշակողները համաձայնել են քրեական պատասխանատվություն նախատեսելուց անկացած դիտավորյալ վարքագծի համար, որը լրջորեն վնասում է մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով: Այս դրույթը վերաբերում է վարքագծին, այլ ոչ թե մեկ արարքին: Այն նպատակ ունի բացահայտելու ժամանակի ընթացքում տեղի ունեցող բռնարար վարքագծի հանցավոր բնույթը ընտանիքի ներսում կամ դրսում: (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, 179 և 181 կետեր):

31 Այսպես, Քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (որն ուժի մեջ էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը). «Արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ»:

ՔԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ ³²	104	28
ՔԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	94	
ՔԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	62	80
ՔԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	3	
ՔԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ		2
ՔԴՕ 37-րդ հոդվածով նախատեսված կարգով	6	1
Գործի վարույթը կասեցվել է, որից.	14	11
ՔԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված հիմքով	5	4
ՔԴՕ 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքով	9	7
Քրեական գործի նախաքննությունը դեռ շարունակվում է		52

Կազմվել է ՀՀ ոստիկանության կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված տվյալների հիման վրա (հրապարակված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի 2019 և 2020 թթ. զեկույցներում): *ՔԴՕ=Քրեական դատավարության օրենսգիրք (որն ուժի մեջ էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը):

3.3.3. Գլխավոր դատախազության տրամադրած տվյալների հիման վրա եզրակացություններ

1. Գլխավոր դատախազության տրամադրած վերոնշյալ տվյալները փաստում են, որ 2019 թվականին քրեական վարույթների 59%-ը կարճվել է, մինչդեռ 2020 թվականին կարճվել է վարույթների 52%-ը: Քրեական հետապնդումը կարճելու, դադարեցնելու կամ կասեցնելու հիմնական պատճառները ոտնձգության ենթարկված անձի / տուժողի և ոտնձգողի/մեղադրյալի միջև հաշտությունն է կամ ոտնձգության ենթարկված անձի կողմից բողոք չներկայացնելը:
2. ՄԻՊ-ի 2020 թվականի զեկույցում ներկայացված են նաև քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունների կիրառման վերաբերյալ տվյալներ: 2017 թվականի օրենսդրական փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտել 2018 թվականին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը լրացվել է 4-րդ մասով, որը սահմանում է, որ անկախ ոտնձգության ենթարկված անձի /տուժողի կողմից բողոք ներկայացնելուց, 183-րդ հոդվածի մասով նախատեսված հանցագործությունների դեպքում դատախազն իրավասու է հարուցել ընտանեկան բռնության հետ կապված քրեական գործ, եթե անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցագործություն կատարած անձից կախված լինելու պատճառով ոտնձգության ենթարկված անձը չի կարող պաշտպանել իր օրինական շահերը: 2019 թվականին այս հանցակազմով դատախազի կողմից նախաձեռնվել է 25 քրեական վարույթ (ՄԻՊ 2019թ), իսկ 2020 թվականին՝ 31 քրեական վարույթ (ՄԻՊ 2020թ.):
3. Թեև Գլխավոր դատախազության այս վերջին պրակտիկան ոտնձգության ենթարկված որոշ անձանց առնչությամբ կարող է նպաստել արդարադատության մատչելիության բարելավմանը, ուսանելի է այս առումով անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պարկտիկային: Իրավաբանփորձագետների պնդմամբ՝ *Ex officio* քրեական հետապնդման պահանջը բխում է այնպիսի գործերից,

32 Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածն ամբողջությամբ (որը ուժի մեջ էր մինչ 2022 թվականի հուլիսի 1-ը) բերված է վերը նշված 17-րդ ծանոթագրության մեջ (տե՛ս «Ոստիկանության տրամադրած տվյալների հիման վրա եզրակացություններ» բաժինը):

ինչպիսիք են *Opuz-ն ընդդեմ Թուրքիայի* և *Bevacqua-ն և S-ն ընդդեմ Բուլղարիայի*, որտեղ Դատարանը հաստատեց, որ մասնավոր հետապնդումը հնարավորություն չի տալիս ապահովել ԸԲ դեպքերը պատշաճ ջանասիրությամբ քրեական հետապնդման ենթարկելու պետությունների պարտավորությունները, (Truchero 2017): *Opuz-ի* գործով (տե՛ս ավելի՛ն՝ Duban and Radacic 2017), Դատարանը ներկայացրեց այն գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն *ex officio* քրեական հետապնդում իրականացնելիս. իրավախախտման բնույթը, արդյո՞ք ոտնձգության ենթարկված անձին պատճառվել է ֆիզիկական կամ հոգեբանական վնաս, արդյո՞ք ոտնձգողի կողմից զենք է օգտագործվել, հարձակումից հետո ոտնձգողի կողմից սպառնալիքներ հնչեցվել են թե ոչ, հարձակումը ոտնձգողի կողմից ծրագրված է եղել, թե ոչ, այդ տանը ապրող երեխաների վրա ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), ոտնձգողի կողմից կրկին բռնություն գործադրելու հավանականությունը, ոտնձգության ենթարկված անձի կամ որևէ այլ անձի, ով ներգրավված է եղել կամ հետագայում կարող է ներգրավվել միջադեպին, առողջությանը և անվտանգությանը սպառնացող շարունակական վտանգը, ոտնձգողի հետ ոտնձգության ենթարկված անձի փոխհարաբերությունների ներկա վիճակը և ոտնձգության ենթարկված անձի կամքին հակառակ՝ քրեական հետապնդումը շարունակելու ազդեցությունը. հարաբերությունների պատմությունը, հատկապես, նախկինում բռնության դեպքերը, և ամբաստանյալի քրեական պատմությունը, մասնավորապես նրա կողմից նախկինում կիրառված ցանկացած բռնությունը: Յետևաբար, *ex officio* քրեական հետապնդում սկսելու որոշում կայացնելիս հիմնական որոշիչ հանգամանքները վերաբերում են ոտնձգողի վարքագծին և արարքի լրջության աստիճանին, այլ ոչ թե ոտնձգության ենթարկված անձի անօգնական վիճակին:

4. Վերոգրյալից կարելի է ենթադրել, որ, ամենայն հավանականությամբ, առանց **ex officio** քրեական հետապնդում ապահովելու, ինչպես պահանջում են միջազգային չափանիշները (և համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի, ինչպես նշվեց վերևում), ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիությունը չի բարելավվի: Տարբեր երկրներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոտնձգության ենթարկված անձինք կարող են որոշել հրաժարվել իրենց բողոքից բազմաթիվ պատճառներով, ներառյալ՝ պայմանավորված ոտնձգողի կողմից վրեժխնդրության ենթարկվելու վախով, նրանից ունեցած տնտեսական կախվածությամբ, երեխաներին կորցնելու վախով, համապատասխան կառույցների նկատմամբ վստահության բացակայությամբ և այլն: Ինչպես նշվեց, ԿՆԽԿՎ կոմիտեն 2017թ. թիվ 35 ընդհանուր հանձնարարականում նույնպես ընդգծել է պետության պարտավորությունը՝ ապահովելու **ex officio** քրեական հետապնդում և կանխարգելիչ պատասխանատվության միջոցներ (տե՛ս. «Պետության պոզիտիվ պարտավորությունները քրեական հետապնդման և պատժի գծով» ներդիրը): Այդ համատեքստում կարևոր է ընդգծել, որ Քրեական դատավարության օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունները (որն ուժի մեջ է մտել 2022թ. հուլիսի 1-ին) էական փոփոխություններ են մտցրել ԸԲ հատկանիշներ պարունակող իրավախախտումների **ex officio** քրեական հետապնդման գործընթացի առումով:³³ Յետագա ուսումնասիրության ընթացքում կարևոր կլինի դիտարկել, թե ինչպես են գործնականում կիրառվում **ex officio** քրեական հետապնդման այս նոր դրույթները:
5. Առկա տվյալների հիման վրա հնարավոր չէ եզրակացնել, թե գործնականում ինչպես է իրականացվում ոտնձգության ենթարկված անձի և ենթադրյալ բռնարարի հաշտեցման գործընթացը: Յենվելով ԳԲԵ-

33 Քրեական դատավարության օրենսգրքի (2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած) 11-րդ հոդվածը (Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը) սահմանում է հետևյալը.
«1. Քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կամ մասնավոր կարգով՝ հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից ելնելով:
1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է մասնավոր կարգով, իսկ մյուս բոլոր հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:
2. Եթե նույն անձին վերագրվող արարքների մի մասը ենթակա է քրեական հետապնդման հանրային կարգով, իսկ մյուս մասը՝ մասնավոր կարգով, ապա քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:
3. Անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով՝
1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով.
2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

ՎԻՈ-ի զեկույցների վրա (ինչպես բացատրվեց վերևում), կարևոր կլինի հետագայում ուսումնասիրել, թե արդյոք գործնականում միջոցներ են ձեռնարկվել համաձայնության ազատությունն ապահովելու համար՝ ուշադրություն դարձնելով իշխանության անհավասարակշռություններին ուսնձգության ենթարկված անձանց՝ իրավունքները, կարիքները և անվտանգությունը ապահովելու երաշխիքներին, ինչպես ուսնձգության ենթարկված անձանց ամապատասխան տեղեկատվությամբ ապահովելուն, մասնավորապես հաշտեցման ոչ պարտադիր բնույթի մասին:

6. Վերևում առանձնացված մարտահրավերները լավագույնս հնարավոր է լուծել՝ սահմանելով ընտանեկան բռնությունը որպես հատուկ, առանձին քրեական հանցագործություն, Եվրոպայի խորհրդի իրավական փորձագետների առաջարկություններին համահունչ (օրինակ՝ Truchero 2017):

Տեքստում ներկայացված տվյալները հանգեցնում են նմանատիպ եզրակացությունների:

3.3.4. Ոստիկանության տվյալների այս ծրագրի շրջանակներում ստեղծված բազաները

ԸԲ կանխարգելման և ուսնձգության ենթարկված անձանց պաշտպանելու ոստիկանության պարտականությունները սահմանված են ԸԲ օրենքի 15-րդ հոդվածով: Բացի այդ, ոստիկանության ծառայողները և տեսուչները պարտավոր են լրացնել յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ սահմանված ձևերը: Նշված ձևերի ներդրումը շատ կարևոր քայլ է Հայաստանում ԸԲ գրանցված դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրություն ստեղծելու համար:

Ոստիկանության ծառայողների կողմից ձեռքով լրացված այս ձևերի հիման վրա ստեղծվել են էլեկտրոնային շտեմարաններ, որոնք ներառում են 2019-2021 թվականների ընթացքում արձանագրված դեպքերը: Այդ տվյալները (ոստիկանության տվյալների բազաները) վերլուծվում են ստորև:

Հարցազրույցների ընթացքում հնարավոր չի եղել պարզաբանում ստանալ այս շտեմարաններում ներառված մի շարք կարևոր կատեգորիաների նշանակության վերաբերյալ, ընդ որում բազմաթիվ հարցերի պատասխանները ձևերում բացակայում էին: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ոստիկանության տվյալների բազաները ամբողջական պատկեր չեն տալիս: Ստորև ներկայացվում են ոստիկանության տվյալների շտեմարաններում և այլ պաշտոնական աղբյուրներում պարունակվող տեղեկատվության միջև որոշակի անբացատրելի անհամապատասխանությունները (ՄԻՊ-ի զեկույցները տե՛ս Աղյուսակ 1-ը):

Օրինակ, ոստիկանության տվյալների բազաներում պարզապես նշված է «ընտանեկան բռնության դեպքեր»: Հարցազրույցների ընթացքում հաստատվեց, որ դրանք ոստիկանություն հաղորդված դեպքեր են՝ արձանագրված վերը նշված ձևերում: Կարելի է ենթադրել, որ ոստիկանության տվյալների շտեմարանները ներառում են ոչ միայն հանցակազմ պարունակող դեպքեր, այլև՝ ըստ ԸԲ օրենքի՝ ոստիկանության կողմից քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված կանոնակարգերի կիրառման դեպքեր (օրինակ՝ նախազգուշացում կամ ԱՄՈ կայացում): Հետագայում շատ կարևոր կլինի հստակ տարբերակում դնել այդ երկուսի միջև՝ քրեական վարույթների և այն գործերի, որոնցում ոստիկանությունը հիմնվել է ԸԲ օրենքի վրա:



Աղյուսակ 8-ում ներկայացված են ոստիկանության տվյալների բազաներում ներառված տվյալների և 2019 և 2020 թվականների ՄԻՊ զեկույցներում ներառված տվյալների միջև անհամապատասխանությունները (տե՛ս Աղյուսակ 8, 2-րդ սյունակ), որտեղ ՄԻՊ-ը հղում է կատարում է քննված դեպքերի վերաբերյալ ոստիկանությունից ստացված տվյալներին: Հատկանշական են որոշ անհամապատասխանություններ. 2019 թվականին ոստիկանության տվյալների շտեմարաններում արձանագրված, ոստիկանությանը հաղորդված դեպքերի թիվը՝ 1-ին սյունակում, ավելի փոքր է, քան ՄԻՊ զեկույցի, 2-րդ սյունակում նշված 2019 թվականին քննված դեպքերի թիվը: Կարելի է ենթադրել, որ քննված դեպքերի թվի մեջ են մտնում նաև նախորդ տարում հաղորդված այն դեպքերը, որոնց քննությունը շարունակվել է նաև հաջորդ տարի: 2020 թվականին իրավիճակը հակառակն է, քննված գործերը շատ ավելի քիչ են, քան հաղորդված/արձանագրված դեպքերը: Ենթադրաբար, շատ դեպքեր չեն քննվել: Հետագայում կարևոր կլինի ուսումնասիրել, թե ԸԲ հաղորդումների որ մասը չի հանգեցրել դրա քննության:

Աղյուսակ 8. Հաղորդված/արձանագրված և քննված դեպքերի տվյալների համեմատություն

	Ոստիկանության տվյալների բազաներ. Հաղորդված/արձանագրված դեպքեր	Ոստիկանության տրամադրած տվյալները ՄԻՊ զեկույցներում քննված դեպքեր
2019թ.	300	485
2020թ.	1240	540

Ոստիկանության տվյալների շտեմարանները նաև կարևոր տեղեկություններ են պարունակում դատարանում քննված գործերի վերաբերյալ (գծապատկերներ 2 և 3): Դատարանում քննված գործերի թիվը չափազանց փոքր է՝ հաշվի առնելով, որ համապատասխան տարիների ընթացքում ոստիկանություն հաղորդված դեպքերի ընդհանուր թիվը բավականին մեծ է եղել (ինչպես ներկայացված է գծապատկեր 2-ում): Մինևույն ժամանակ, ոստիկանությունը կարող է ամբողջական տվյալներ չունենալ դատարանում քննված քրեական գործերի ընդհանուր թվի վերաբերյալ, քանի որ որոշ դեպքերում քննությունը կարող է նախաձեռնել և վարել Քննչական կոմիտեն: Հետևաբար, հաշվի առնելով, որ դատարանում մեղադրանքը պաշտպանելու համար պատասխանատու է դատախազը, դատախազությունը, մեծ հավանականությամբ, կարող է տեղեկություններ ունենալ նման գործերի ընդհանուր թվի մասին (Փիրումյան 2022):


Գծապատկերներ 2 և 3. Ոստիկանությանը հաղորդումներ ներկայացնելը և արդարադատության մատչելիությունը



Աղբյուրը՝ ոստիկանության տվյալների բազաներ


Լրացուցիչ արժեքավոր տեղեկությունները վերաբերում են ոստիկանության կողմից նախաձեռնված (ենթադրաբար) քրեական վարույթներին (տե՛ս գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Արդյո՞ք քրեական վարույթներ սախաձեռնվել են



Աղբյուրը՝ ոստիկանության տվյալների բազաներ

Գծապատկեր 5. Բռնության տեսակ



Աղբյուրը՝ ոստիկանության տվյալների բազաներ

Ոստիկանության տվյալների բազաները նաև ցույց են տալիս, որ ամենից հաճախ արձանագրվում է **ֆիզիկական բռնությունը, հոգեբանական բռնությունը՝ հազվադեպ, իսկ բռնության այլ ձևերը (տնտեսական, սեռական) գրեթե երբեք** (սահմանված ձևում ոստիկանության ծառայողները և տեսուչները կարող են նշել բռնության ձևերի վերաբերյալ մեկից ավելի պատասխան): Արձանագրված տվյալները վկայում են, որ ոստիկանության ծառայողները հոգեբանական բռնությունը ըստ երևույթի չեն բացահայտում/ճանաչում: Ուսնձգության ենթարկված անձ-ոսնձգող հարաբերությունների վերաբերյալ տվյալները ներառում են բազմաթիվ խմբեր, որոնք դժվար է այստեղ ներկայացնել:

Ուսնձգողների բնութագրիչները ներառում են տարիքային խումբը, կրթական և աշխատանքային կարգավիճակը, հաշմանդամության կարգավիճակը և հոգեկան առողջության հետ կապված տեղեկությունները (այս բոլոր գործոնները ներառված են գործի վերաբերյալ ձևում, որը ոստիկանության ծառայողը պետք է լրացնի): Ուսնձգողների մեծ մասն ունի միջնակարգ կրթություն (տե՛ս Աղյուսակ 9):

Ուսնձգողի սեռի մասին տեղեկությունները որոշ դեպքերում բացակայում են: Ուսնձգողների ընդհանուր թվից, որոնց սեռը գրանցված է (1 890՝ 2019-2021 թվականներին), 269-ը (14%) իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 1612-ը՝ արական (86%):

Աղյուսակ 9. Ոտնձգողի կրթական կարգավիճակը

	Տարրական	Բազային	Միջնակարգ	Նախնական մասնագիտական	Միջնակարգ մասնագիտական	Բարձրագույն
2019թ.	8	14	211	4	15	38
2020թ.	26	84	873	11	60	154
2021թ.	11	24	286	4	20	48

Աղյուսակ 10. Ոտնձգողի զբաղվածության կարգավիճակը

	Ոտնձգողն աշխատանք ունի	Ոտնձգողը գործազուրկ է
2019թ.	42	237
2020թ.	134	967
2021թ.	64	317

Աղյուսակ 11. Ոտնձգողի մոտ մտավոր խնդիրների առկայություն

	Ոտնձգողի մոտ առկա են մտավոր խնդիրներ	Ոտնձգողի մոտ մտավոր խնդիրներ առկա չեն
2019թ.	62	28
2020թ.	272	119
2021թ.	70	102

Ոստիկանության տվյալների բազաները ներառում են նաև ոտնձգության ենթարկված անձի սեռի, կրթական և աշխատանքային կարգավիճակի, ինչպես նաև հաշմանդամության մասին տեղեկություններ: Սեռի մասին տվյալներ գրանցված են 1873 ոտնձգության ենթարկված անձանց վերաբերյալ, և նրանց մեծ մասը իգական սեռի ներկայացուցիչ է (1569 կամ 84%, որից 12-ը անչափահաս են), իսկ 304-ը՝ արական սեռի (16%):

Աղյուսակ 12. Ոտնձգության ենթարկված անձանց կրթական կարգավիճակը

	Տարրական	Բազային	Միջնակարգ	Նախնական մասնագիտական	Միջնակարգ մասնագիտական	Բարձրագույն
2019թ.	11	10	199	2	28	44
2020թ.	34	82	791	5	89	201
2021թ.	6	20	258	5	32	70

Աղյուսակ 13. Ոտնձգության ենթարկված անձանց զբաղվածության կարգավիճակը

	Ոտնձգության ենթարկված անձն աշխատանք ունի	Ոտնձգության ենթարկված անձն աշխատանք չունի
2019թ.	52	232
2020թ.	148	938
2021թ.	50	325

Ոստիկանության տվյալների բազաները արժեքավոր տեղեկություններ են պարունակում ընտանիքում երեխաների թվի մասին՝ ըստ տարիքային խմբերի, սակայն չեն ներառում վերաբերելի տվյալներ՝ արդյոք երեխաները ընտանեկան բռնության ականատես են եղել, թե ոչ:

Աղյուսակ 14. Ընտանիքում երեխաների թիվը՝ ըստ տարիքային խմբերի

	Տարիքային խումբ	Երեխաների թիվը
2019 թ.	մինչև 10 տարեկան	164
2019 թ.	10-ից 13 տարեկան	43
2019 թ.	14-ից 18 տարեկան	54
2020 թ.	մինչև 10 տարեկան	498
2020 թ.	10-ից 13 տարեկան	165
2020 թ.	14-ից 18 տարեկան	250
2021 թ.	մինչև 10 տարեկան	152
2021 թ.	10-ից 13 տարեկան	45
2021 թ.	14-ից 18 տարեկան	65

Ոստիկանների կողմից լրացվող ձևը նաև հարց է պարունակում՝ արդյո՞ք բռնությունն առաջին անգամ է տեղի ունեցել:

Աղյուսակ 15. Տեղեկություն, թե արդյոք ԸԲ-ն առաջին անգամ է բացահայտվել ոստիկանության կողմից

	Բռնության դեպքերի հաճախականությունը	Թիվը
2019 թ.	առաջին անգամ	188
2019 թ.	երկու և ավելի անգամ	47
2020 թ.	առաջին անգամ	3
2020 թ.	երկու և ավելի անգամ	5
2021 թ.	առաջին անգամ	20
2021 թ.	երկու և ավելի անգամ	18

Ոստիկանության տվյալների բազաները նաև օգտակար տեղեկություններ են պարունակում, թե արդյոք դեպքերը հաղորդում է ոսնձգության ենթարկված անձը, թե երրորդ կողմը (անձ կամ կազմակերպություն):

Աղյուսակ 16. Արդյո՞ք դեպքը հաղորդվել է կազմակերպության թե ֆիզիկական անձի կողմից

	Կազմակերպություն	Ֆիզիկական անձ
2019 թ.	71	90
2020 թ.	375	311
2021 թ.	84	150

Ոստիկանության կողմից տրված նախազգուշացումների և անհետաձգելի միջամտության որոշումների վերաբերյալ տվյալները, առերևույթ թերի են, քանի որ 2019 և 2020 թվականների ՄԻՊ զեկույցներում ներկայացվածների հետ համեմատ թվերը շատ ավելի ցածր են, որի պատճառով այստեղ ներկայացված չեն:

3.3.4.1 Ոստիկանության տվյալների բազաների հիման վրա կատարված եզրակացություններ

1. Ընդունելով, որ ոստիկանության տվյալների բազաների տվյալները հավաստի են, կարելի է եզրակացնել, որ 2020 թվականին (Արցախյան պատերազմի և COVID-19 համաճարակի գագաթնակետ տարի) գրանցվել է ընտանեկան բռնության վերաբերյալ հաղորդված դեպքերի ընդհանուր թվի զգալի աճ: Այդ տարում **հաղորդված/արձանագրված դեպքերի թիվը նախորդ տարվա (2019) համեմատ չորս անգամ ավելի է եղել:**
2. Հուսադրող է, որ **կազմակերպությունները/հաստատությունները ոստիկանությանը համեմատաբար հաճախ են տեղեկացնում ԸԲ դեպքերի մասին.** 2019-ին նրանք հաղորդել են 71, 2020-ին՝ 375 և 2021-ին՝ 84 նման դեպքերի մասին:

3. Առավել ուշագրավ է, որ ընդհանուր առմամբ 3 տարվա ընթացքում (2019-2021 թթ., գծապատկեր 2) ոստիկանությունը հաղորդվել /գրանցվել է 1940 դեպք, սակայն դատարանում քննված գործերի թիվը չնչին է եղել՝ ընդամենը 46 (գծապատկեր 3): Այս թվերին պետք է վերապահումով վերաբերել. արձանագրված դեպքերը, հնարավոր է, ներառում են քրեական դատավարության շրջանակներում քննված գործերը, ինչպես նաև այն դեպքերը, որտեղ ոստիկանությունը ղեկավարվել է ԸԲ օրենքի դրույթներով, սակայն ոստիկանության գնահատմամբ քրեական գործ հարուցելու հիմքեր չեն եղել, բացի այդ, դատարանում քննված գործերի քանակի վերաբերյալ տվյալները կարող են ամբողջական չլինել: Այնուամենայնիվ, այն փաստը, որ ոստիկանությունն արձանագրել է դատարան հասած ընդամենը 46 գործ, հարցեր է առաջացնում՝ ոսնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության, հնարավոր է նաև, քրեական վարույթ նախաձեռնելու չափազանց բարձր շեմի վերաբերյալ: ՄԻՊ-ի զեկույցների տվյալների վերլուծությունը (տե՛ս նախորդ բաժինը) հստակ ցույց է տալիս, որ ԸԲ դեպքերի մեծ մասը նախաքննության/հետաքննության փուլից այն կողմ չի անցնում: Քրեական հետաքննության և քրեական հետապնդման արժանի համարվող դեպքերի սակավաթիվ լինելն ուղերձ է պարունակում, որ ոսնձգողները պատասխանատվության չեն ենթարկվի, որն, իր հերթին, կարող է հանգեցնել հետագայում ոստիկանություն նման դեպքերի մասին հաղորդման ցածր ցուցանիշների:
4. Չանտեսելով զգուշավորության անհրաժեշտության մասին խորհուրդը, անհրաժեշտ է նշել, որ մի շարք այլ բացահայտված գործոններ նույնպես լուսաբանում են, թե ինչու են այդքան քիչ գործեր հասնում դատարան: **Դեպքերի մեծ մասում ոստիկանությունը քրեական վարույթ չի նախաձեռնում** (տե՛ս գծապատկեր 4): 2019 թվականին հաղորդվել/արձանագրվել է 400 դեպք, սակայն, 74%-դեպքերում քրեական վարույթ չի նախաձեռնվել: 2020 թվականին, թեև հաղորդված/արձանագրված դեպքերի ընդհանուր թիվը շատ ավելի մեծ է եղել (1240), դրանց 69%-ով քրեական վարույթ նույնպես չի նախաձեռնվել: 2021 թվականին արձանագրված դեպքերի 62%-ով (ընդհանուրը՝ 300) քրեական վարույթ չի նախաձեռնվել: Ինչպես նշվեց, ԸԲ դեպքերը հետապնդելու համար ամենից հաճախ օգտագործվել է 2003 թ.-ի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը (ծե՛ծ), ընդ որում այդ իրավախախտումը վերաբերում է առանձին միջադեպերի, որոնք, առանձին վերցրած, քրեական հետապնդման համար անհրաժեշտ հանցակազմ չեն պարունակում (Truchero 2017): Միևնույն ժամանակ, բավականաչափ լուրջ չհամարվող դեպքերի համամասնության նվազումը (2019-ի 74%-ից մինչև 2021-ին 62%) կարող է դիտվել որպես հուսադրող միտում:
5. Բռնության տեսակի մասին տվյալները ենթադրում են, որ ոստիկանության ծառայողները հիմնականում չեն **նույնականացնում/ճանաչում հոգեբանական բռնությունը**:
6. Ոստիկանության տվյալների բազայում բռնության տեսակների, ոսնձգության ենթարկված անձանց և ոսնձգողների բնութագրերի վերաբերյալ տվյալները հետևողականորեն չեն տարանջատվում ըստ ոսնձգողի սեռի, ոսնձգության ենթարկված անձի սեռի և ոսնձգության ենթարկված անձ -ոսնձգող հարաբերությունների, ուստի հնարավոր միայն սահմանափակ եզրակացություններ կարող են արվել: Ոսնձգողի և/կամ ոսնձգության ենթարկված անձի սեռի մասին տեղեկությունները որոշ դեպքերում բացակայում են: Այս տեղեկատվությունը ընդհանուր առմամբ հասանելի է եղել 1890 ոսնձգողի և 1873 ոսնձգության ենթարկված անձի վերաբերյալ. **ոսնձգողները հիմնականում արական (1612 կամ 86%), իսկ ոսնձգության ենթարկված անձինք՝ իգական սեռի էին (1569 կամ 84%, որից 12-ը՝ անչափահաս)**:
7. Տվյալների բազաները պարունակում են նաև տեղեկատվություն ինչպես ոսնձգության ենթարկված անձի, այնպես էլ ոսնձգող ի տարիքային խմբի, կրթական և աշխատանքային կարգավիճակի մասին, ինչպես նաև արժեքավոր տվյալներ ընտանիքում երեխաների թվի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, **2019-2021 թվականների վիճակագրության մեջ արձանագրված է մինչև 18 տարեկան 1436 երեխա**: Սակայն, ինչպես նշվեց վերևում, ոստիկանության տվյալների բազաները տեղեկատվություն չեն պարունակում, թե արդյոք այդ երեխաները եղել են ընտանեկան բռնության ականատես: Չավանաբար, նրանցից շատերը բռնության ականատես են եղել, որի ազդեցությունը նրանց կյանքի և բարեկեցության վրա անկանխատեսելի է:

8. Ոսնձգողների շրջանում **հոգեկան առողջության խնդիրների մասին վկայող թվերը** բավականին մեծ էին: Ընդհանուր առմամբ, 2019-2021 թվականներին 404 ոսնձգող ի մոտ եղել են հոգեկան առողջության խնդիրներ: Դա հարց է առաջացնում, թե ում կողմից և ինչպես է պարզվել, որ ոսնձգող ը հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունի կամ չունի: Եթե այդ տվյալները ներկայացնում են ոստիկանության ծառայողների գնահատականը, անհասկանալի է մնում, թե արդյոք վերջիններս իրավասու են նման գնահատականներ տալ:
9. Ձևը, որը պարտավոր են լրացնել ոստիկանության ծառայողները, տեսուչները, պարունակում է տեղեկատվություն այն մասին, թե **արդյոք բռնությունն առաջին անգամ է տեղի ունեցել, թե ոչ**: Ցավոք, գործերի հիմնական մասում այս տեղեկատվությունը բացակայում է (2019-2021 թվականներին գրանցվել է 1940 դեպք, սակայն այս տեղեկատվությունը ներառված է ընդամենը 281 դեպքի առնչությամբ): Նման տեղեկատվությունը չափազանց կարևոր է, քանի որ ԸԲ օրենքի համաձայն, նախազգուշացում տալու (ԱՄՌ-ի փոխարեն) համար համապատասխան պայմաններից մեկն այն է, որ բռնությունը ոստիկանության կողմից առաջին անգամ արձանագրված լինի: Մասնավորապես, ԸԲ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ «նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ ամբերույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն»: Ոստիկանության տվյալների բազաներում տեղեկատվության բացակայությունը այն մասին, թե արդյոք ոստիկանությունն առաջին անգամ է արձանագրել բռնությունը, թե ոչ, խնդրահարույց է, քանի որ այս կարևոր հարցի հետ կապված սխալը կարող է արդարացնել ԱՄՌ-ի փոխարեն նախազգուշացում տալը:

4. ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ընտանեկան բռնության ենթարկվելու փաստերի եվ բռնությանը ինստիտուցիոնալ/դատական արձագանքի խորը ուսումնասիրություն

Ինչպես նշվեց նախորդ գլուխներում, Հայաստանում ընտանեկան բռնությունից տուժած կանայք բախվում են արդարադատության և պաշտպանության մատչելիության խոչընդոտների (որոնք ներկայացվել են ԸԲ օրենքում, ներառյալ ԱՄՌ-ների և պաշտպանական որոշումների մատչելիությունը):

Այս բաժնում իրականացվում է ոսնձգության ենթարկված անձանց՝ **ընտանեկան բռնության ենթարկվելու փաստերի**, դրսևորումների, հաճախականության, ծանրության, ոսնձգության ենթարկված անձանց և նրանց երեխաների վրա դրա ազդեցության **խորը վերլուծություն**, ինչպես նաև **բռնության նկատմամբ ինստիտուցիոնալ և դատական արձագանքի ուսումնասիրություն**: Նման վերլուծության միջոցով հնարավոր է պատկերացում կազմել ընդհանուր պատկերի մասին և այդպիսով գնահատել, թե արդյոք երկրի իշխանությունները համարժեք կերպով են արձագանքում բռնությանը: Ուսումնասիրության այս հատվածը նպատակ ունի լրացնել և խորացնել նախորդ գլուխների բացահայտումները, և այն անդրադառնում է ԸԲ օրենքի ընդունումից հետո ընկած ժամանակահատվածին:

4.1. Հարցաշարի բովանդակությունը³⁴

Ուսումնասիրության առաջին մասի համար մշակվել են մանրամասն հարցաշարեր, որոնք ուղղված են կանանց նկատմամբ բռնության փաստերի խորը վերլուծությանը, ներառելով՝

1. Հոգեբանական, ֆիզիկական, սեռական և տնտեսական բռնության կոնկրետ դրսևորումներ.
2. Անհետաձգելի պաշտպանության կիրառման ցուցիչներ.
3. Ոսնձգության ենթարկված անձանց վրա բռնության հետևանքները՝ հուզական/հոգեկան խնդիրներ, ֆիզիկական վնասվածքներ.

³⁴ Մեթոդաբանությունը և ընտրանքը նկարագրված են վերևում (տե՛ս «Մեթոդաբանություն, ընտրանք և տվյալների աղբյուրներ» բաժինը): Ինչպես պարզաբանվեց, հարցաշարերից բացի, օգտագործվել են որակական հետազոտության որոշ դրսևորումներ:

4. Բռնության պատմություն. տևողություն, հաճախականություն, ծանրություն, (հնարավոր) թեժացում և բռնության բնութագրիչներ (որքան ժամանակ է տևել բռնությունը. որքան ժամանակ առաջ է տեղի ունեցել բռնության առաջին միջադեպը, որքան հաճախ է տեղի ունեցել բռնությունը, արդյո՞ք բռնությունը սրվել է վերջին շրջանում).
5. Երեխաները որպես ԸԲ ականատեսներ և/կամ ոտնձգության ենթարկվածներ (արդյո՞ք երեխաներն ականատես են եղել իրենց մոր նկատմամբ բռնության, եթե այո, ապա որքան հաճախ, արդյոք երեխաները երբևէ եղել են անմիջական ոտնձգության ենթարկված անձ և արդյոք որպես հետևանք, առաջացել են հոգեկան առողջության խնդիրներ):
6. Ընտանեկան բռնության ցուցիչները բնարարի և ոտնձգության ենթարկված անձի ընտանիքում:

Վերլուծության երկրորդ մասը նվիրված էր բռնությանը ինստիտուցիոնալ և դատական արձագանքին, ներառյալ.

1. Ոստիկանության միջամտություններ. նախազգուշացումների և ԱՄՌ-ների կայացման և դրանց մոնիտորինգի/հսկողության գործընթացում ոստիկանության գործունեության ուժեղ և թույլ կողմերը, վտանգի գնահատումը, ձեռնարկված միջոցներ՝ ոտնձգության ենթարկված անձանց և նրանց երեխաներին պաշտպանելու և միջամտությունների ընթացքում նրանց նոր հոգեկան տրավմայի հավանականությունը նվազեցնելու համար, ապացույցների հավաքման պրոակտիվ մոտեցման կիրառում, ոտնձգության ենթարկված անձանց նկատմամբ վերաբերմունք (զոհակենտրոն մոտեցում):
2. Ոտնձգության ենթարկված անձանց համար քրեաիրավական պաշտպանության հասանելիությունը. քրեական արդարադատության ոլորտի արձագանքը, ներառյալ դատական գործընթացի արդյունքները, Քրեական օրենսգրքի դրույթները, որոնք կիրառվում են նախաքննության, հետաքննության և քրեական հետապնդման ժամանակ, ոտնձգության ենթարկված անձանց կողմից բողոքները հետ վերցնելու պատճառները, ձեռնարկված միջոցներ՝ դատական վարույթի ընթացքում նոր հոգեկան տրավմայի հավանականությունը նվազեցնելու համար, մասնագետների վարքագիծը քրեական արդարադատության շղթայի տարբեր փուլերում՝ նախաքննությունից, հետաքննությունից և քրեական հետապնդումից մինչև դատաքննություն (մասնագիտական և ոչ կողմնակալ վերաբերմունք):
3. Քաղաքացիական դատավարության արդյունքները՝ կապված խնամակալության և տեսակցության հետ:

4.2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ոտնձգության ենթարկված անձանց՝ ընտանեկան բռնության ենթարկվելու փաստերի խորը վերլուծություն

Նախ, ոտնձգության ենթարկված անձանց նկատմամբ գործողված բռնության տեսակի կտրվածքով կիրառվել է պարզեցված ցուցիչ (տե՛ս Աղյուսակ 18): Ինչպես երևում է Աղյուսակ 18-ից, հոգեբանական, ֆիզիկական, տնտեսական և սեռական բռնությունը միահյուսված են: Բռնության այս բոլոր ձևերն ավելի մանրամասն պարզաբանված են այլ բաժիններում: Ոտնձգող ը հիմնականում ոտնձգության ենթարկված անձի հետ բնակվող ամուսինը/քաղաքացիական ամուսինն է(Աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Ոտնձգության ենթարկված անձ/ոտնձգող հարաբերություններ

Ոտնձգողը ոտնձգության ենթարկված անձի հետ հետևյալ հարաբերություններում է	
Ամուսին (համատեղ բնակվում են)	37
Քաղաքացիական ամուսին (պաշտոնակես ամուսնացած չեն, սակայն համատեղ են բնակվում)	30
Ամուսին/քաղաքացիական ամուսին (համատեղ չեն ապրում/բաժանված են)	14
Որդի	2
Սեռական զուգընկեր (համատեղ չեն բնակվում, սակայն սեռական հարաբերություններում են)	1

Աղյուսակ 18. Կանանց նկատմամբ կիրառված բռնության դրսևորումները

Բռնության ձև	
Չոգեբանական	86
Ֆիզիկական	83
Տնտեսական	71
Սեռական	35

Այնուհետև, ուսումնասիրվել է, թե արդյոք կանայք ենթարկվել են բռնության այնպիսի դրսևորումների կամ սպառնալիքների, որոնք վկայում են անհետաձգելի պաշտպանության կիրառման անհրաժեշտության մասին:


Աղյուսակ 19. Անհետաձգելի պաշտպանության անհրաժեշտության մասին վկայող ցուցիչներ

	Այո	Ոչ	Չայտնի է
Ոտնձգողը սպառնացել է սպանել ոտնձգության ենթարկված անձի ն	71	11	4
Ոտնձգողը ոտնձգության ենթարկված անձի ն գումար չի տալիս, ընդ որում ոտնձգության ենթարկված անձը սեփական եկամուտ չունի	36	31	19
Ոտնձգողը առնվազն մեկ անգամ ոտնձգության ենթարկված անձի ն դուրս է վճռել իրենց տնից/բնակարանից	35	37	14
Ոտնձգության ենթարկված անձը նախկինում հայտնվել է հիվանդանոցում ոտնձգողի կողմից հասցրած մարմնական վնասվածքների պատճառով	34	40	12
Ոտնձգության ենթարկված անձը նախկինում հայտնվել է հիվանդանոցում բռնության հետ կապված հոգեբանական խնդիրների պատճառով	16	56	14
Ոտնձգության ենթարկված անձը բռնության պատճառով ինքնասպանության փորձ է կատարել	15	57	14

4.2.1. Ֆիզիկական բռնության դրսևորումները, հետևանքները և հաճախականությունը


Քանի որ ԸԲ ինստիտուցիոնալ և դատական արձագանքը հիմնականում կամ առավելապես կենտրոնացած է միայն ֆիզիկական բռնության վրա, դրա դրսևորումները և հետևանքները ավելի խորն են ուսումնասիրվել (տե՛ս 6-րդ և 7-րդ գծապատկերները):

Գծապատկերներ 6 և 7. Ֆիզիկական բռնության դրսևորումները և դրա հետևանքները



Պարզվել է, որ ֆիզիկական բռնությունը տեղի է ունեցել հաճախակի, նույնիսկ, եթե այն բաղկացած է եղել ենթադրյալ աննշան դրվագներից, ինչպիսիք են ապտակները, տես գծապատկեր 8:


Գծապատկեր 8. Ֆիզիկական բռնության հաճախականությունը



4.2.2. Սեռական բռնության դրսևորումներ

Ամուսնու/քաղաքացիական ամուսնու կողմից սեռական բռնությունն այն թեման է, որի մասին ոտնձգության ենթարկված կանայք շատ հազվադեպ են խոսում: Ոսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոտնձգության ենթարկված անձինք վստահում են Կանանց աջակցման կենտրոնի աշխատակիցներին, քանի որ նրանցից ոմանք պատմել են սեռական բռնության փաստի մասին:

Գծապատկեր 9. Սեռական բռնության դրսևորումներ



4.2.3. Տնտեսական բռնության դրսևորումներ

Ոտնձգողից տնտեսական կախվածությունն այն գործոններից է, որը նվազեցնում է ոտնձգության ենթարկված անձանց «բռնության ցիկլից» խուսափելու հնարավորությունը: Ուսումնասիրությունը, հետևաբար, ներառում էր հարցեր՝ արդյոք ոտնձգության ենթարկված անձն ունի իր եկամտի աղբյուր(ներ), թե ոչ: Ակնհայտ է, որ նրանցից շատերը տնտեսապես կախված են ոտնձգողից: Սակայն, անկախ այն հանգամանքից՝ ոտնձգության ենթարկված անձինք սեփական եկամուտներ ունեն, թե ոչ, նրանք ենթարկվում են տնտեսական բռնության տարբեր ձևերի (Աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Արդյո՞ք ոտնձգության ենթարկված անձն ունի սեփական եկամուտ³⁵

Ոչ, նա տնտեսապես լիովին կախված է ոտնձգողից	38
Այո, նա աշխատում է	30
Այո, ընկերներն ու հարազատները երբեմն նրան գումար են տալիս	12
Նա տնտեսապես կախված է ոտնձգողից, և ընկերներն ու հարազատները երբեմն նրան գումար են տալիս	2
Նա աշխատում է և ընկերներն ու հարազատները երբեմն նրան գումար են տալիս	2

35 Այս հարցը ենթադրում է մեկից ավելի հնարավոր պատասխան:

Աղյուսակ 21. Կնոջ ծախսերի և տնտեսական գործունեության վերահսկողություն. տնտեսական բռնության դրսևորումներ
Բռնարարը՝

	Այո	Ոչ	Հայտնի չէ
Արգելում է փող ծախսել կամ սահմանափակում է այդ հնարավորությունը	72	11	3
ստիպում է մուրալ/փող խնդրել	68	11	7
թույլ չի տալիս ծանոթանալ ընտանիքի ընդհանուր բյուջեին (կամ իմանալ, թե որքան է նա վաստակում, եթե միայն ինքն է է աշխատում)	66	12	8
հրաժարվում է տալ կենցաղային ծախսերի համար անհրաժեշտ գումարը, նույնիսկ այն դեպքում, երբ ինքը գումար է ծախսում անձնական կարիքների համար (ալկոհոլի, ծխախոտի և այլի)	65	13	8
Նրանից գումարը է խլում (եթե կինն աշխատում է կամ գումար է ստանում հարազատներից/ընկերներից)	61	15	10
արգելում է աշխատանք գտնել/համոզում է թողնել աշխատանքը/խանգարում է պահպանել աշխատանքը	59	25	2
շանտաժի է ենթարկում փողի միջոցով, օրինակ, գումար է տալիս միայն այն պայմանով, որ նա բավարարի իր պահանջերը կամ ցանկությունները	54	15	17
արգելում է սովորել/շարունակել ուսումը	44	30	12

4.2.4. Հարկադրող վերահսկողություն. ինչպե՞ս են ոտնձգողները ահաբեկում, վերահսկում և մեկուսացնում ոտնձգության ենթարկված կանանց:

Սեռական զուգընկերոջ բռնությունը չպետք է դիտարկվի որպես բռնության սուր, զուսպ կամ մեկուսացված դրսևորում: 1970-ականներից սկսած հետազոտողները փորձել են բացահայտել վարքագծի օրինաչափությունները և ոտնձգողների կողմից կիրառվող մարտավարությունը՝ ոտնձգության ենթարկված անձի հանդեպ իշխանություն և վերահսկողություն ձեռք բերելու համար (տե՛ս Իշխանության և վերահսկողության անիվը, մշակված Ընտանեկան բռնությանը միջամտության ծրագրի կողմից):³⁶ Ավելի ուշ Stark-ը (2007թ. շրջանառության մեջ դրեց «հարկադրող վերահսկողության» հասկացությունը, համաձայն որի սեռական զուգընկերոջ բռնությունը շարունակական է, քրոնիկ բնույթ է կրում և ամենօրյա է: Այն հիմնված է կնոջ նկատմամբ ներկայիս կամ նախկին սեռական զուգընկերոջ կողմից վերահսկողություն ձեռք բերելու և պահպանելու մարտավարության վրա: Այդ հասկացությունը օգտագործվում է որպես ուսումնասիրության ներկա մասի տեսական հենքը:

Stark-ը (նույն տեղում) հարկադրանքը սահմանում է որպես որոշակի արձագանք պարտադրելու կամ վերացնելու նպատակով ուժի կամ սպառնալիքների կիրառում, մինչդեռ վերահսկողությունը վերաբերում է զրկելու, շահագործման և հրամանի կառուցվածքային ձևերին, որոնք անուղղակիորեն հարկադրում են հնազանդվել: Stark-ը հարկադրական հսկողությունը սահմանում է որպես վարքագիծ, որի նպատակը ոտնձգության ենթարկված անձի ազատությունը խլելն է, նրան սեփական ինքնության զգացումից զրկելը: Ոտնձգության ենթարկված անձի հարկադրող վերահսկողության հիմնական հետևանքը «ծուղակի մեջ զցելու փորձն է, որը Bwugava et al (2017) աշխատությունում ներկայացվում է որպես «սեռական զուգընկերոջ նկատմամբ դաժան վերաբերմունքի ամենակործանարար արդյունք»:

36 Տես ավելին՝ Գիտելիքի վիրտուալ կենտրոն՝ «ՄԱԿ Կանայք» կազմակերպության կառույցները ընդդեմ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության, <https://www.endvawnow.org/fr/articles/1775-history.html>

Բռնարարները ֆիզիկական բռնություն են գործադրում, թեև նման բռնությունը միշտ չէ, որ առկա է հարկադրող վերահսկողության պայմաններում: Հարկադրող վերահսկողությունը հիմնված է երեք հավասարապես կարևոր մարտավարությունների վրա՝ **վերահսկողություն, ահաբեկում և մեկուսացում** (Stark 2007; 2009; Kelly, Sharp and Klein 2014): Վերահսկողությունը բաղկացած է գրկանքների կառուցվածքային ձևերից (օրինակ՝ փողից, սննդամթերքից, գոյատևման այլ միջոցներից), ընտրություն/որոշումներ թելադրելուց և ամօրյա վարքագծի միկրոկարգավորումից՝ հասանելի այլընտրանքներին աջակցության աղբյուրների սահմանափակման միջոցով: Նման վերահսկողությունը հազվադեպ է սահմանափակվում կոնկրետ ժամանակով կամ վայրով. ավելի շուտ այն վարքագծային կարգավորման միջոցով տարածվում է բոլոր այն տարածքների վրա, որտեղ կինը մուտք է գործում, օրինակ՝ աշխատավայրում, դպրոցում, պաշտամունքի վայրերում: Ահաբեկումը սերմանում է վախ, գաղտնիություն, կախվածություն, հնազանդություն, հավատարմություն և ամոթ և կիրառվում է սպառնալիքների, հսկողության և նվաստացման միջոցով: Հսկողության հիմքում մարտավարության շարունակականություն է, որը երաշխավորում է, որ ոտնձգության ենթարկված անձը գիտակցի, որ իրեն հետևում են, կամ որ իր գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը վերահսկվում է այլ եղանակներով, օրինակ՝ հետևելով թե ինչպես է նա անցկացնում ժամանակը: Ստորացումն իրականացվում է կրկնվող արարքների և անհարգալից արտահայտությունների միջոցով, որոնք ամոթ և ինքնամեղադրանք են առաջացնում: Մեկուսացումը ուժեղացնում է վերահսկողությունը, սերմանում է կախվածություն և սահմանափակում օգնության կամ աջակցության հնարավորությունը: Այն ոչ միայն խաթարում է կնոջ ինքնությունը, այլև բռնարարը դառնում է տեղեկատվության և արժևորման հիմնական աղբյուր: Հարկադրող վերահսկողությունը խաթարում է ոտնձգության ենթարկված անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը: Շատ կանանց մոտ առաջանում է այն զգացումը, որ բռնություն գործադրողը ամենուր է և նրանք սկսում են հավատալ ոտնձգողի կողմից իրենց անձին և կարողություններին տրվող բացասական գնահատականներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանցում ներգրավված կանանց մեծ մասը ենթարկվել է պարտադրանքի և վերահսկողության:

Աղյուսակ 22. Վերահսկողություն և հսկողություն

Բռնարարը.

	Այո	Ոչ	Հայտնի չէ
Միակն է, ով որոշում է կայացնում, նրա խոսքը պետք է լինի «վերջինը»	83	0	3
Կնոջը հրամաններ/հրահանգներ է տալիս	83	0	3
Վերահսկում է նրա ամենօրյա կյանքը. ստուգում է, թե որտեղ է նա, վերահսկում է, թե ինչպես է նա հագնվում	73	9	4
Իրեն այնպես է պահում, կարծես կինն իր ծառան է, կամ ստիպում է նրան որևէ բան անելիս թույլտվություն խնդրել	72	7	7
Պնդում է, որ պետք է իմանա, թե ինչ է նա անում, ում է տեսնում, կինը պետք է հաշվետվություն տա իր բացակայությամբ անցկացրած ցանկացած պահի համար	66	13	7
Կատաղի և մշտապես խանդում է	58	23	5
Բարկանում է, երբ նա խոսում է մեկ այլ տղամարդու հետ	53	3	30
Կասկածում է, որ նա անհավատարիմ է	50	17	19
Հետևում է նրան, երբ նա տնից դուրս է, կամ լրտեսում է նրան՝ ստուգելու, թե որտեղ է և ում հետ է հանդիպում	49	10	27
Մեղադրում է նրան դավաճանության մեջ կամ կասկած է հայտնում, որ երեխան իրենից է	39	38	9

Երբեմն կողպում է նրան սենյակում/տանը	39	25	22
Սահմանափակում է նրա տեղաշարժը (օրինակ՝ արգելում է դուրս գալ առանց իր թույլտվության)	39	18	29
Արգելում է այցելել բժշկի/հիվանդանոց գնալ, քանի դեռ նրա վերքերը չեն ապաքինվել	32	28	26
Վերահսկում է էլեկտրոնային սամակագրությունը և/կամ սոցիալական ցանցերում շփումը	28	28	30
Ակնկալում է, որ կինը թույլտվություն խնդրի իրենից բուժօգնության դիմելու համար	23	39	24

Աղյուսակ 23. Մեկուսացում

Արգելում կամ սահմանափակում է կնոջ շփումները ընկերների կամ ընտանիքի հետ	66	9	11
Ամբողջովին մեկուսացնում է նրան ընկերներից, ընտանիքից և սոցիալական ցանցերից	26	39	21
Արգելում կամ սահմանափակում է բջջային հեռախոսից օգտվելը	23	30	33

Աղյուսակ 24. Սպառնալիքներ

	Այո	Ոչ	Չայտնի չէ
Սպառնում է ֆիզիկապես վնասել նրան	72	8	6
Սպառնում է սպանել	60	12	14
Սպառնում է նրան դուրս շարժել տնից/բնակարանից	49	19	18
Օգտագործում է երեխաներին իրեն հուզական շանտաժի ենթարկելու համար, օրինակ՝ սպառնում է խլել կամ վնասել երեխաներին, եթե նա հեռանա իրենից	44	35	6
Սպառնում է զենքով/դանակով	43	30	13
Ձենք/դանակ է օգտագործում նրա դեմ	33	36	15
Սպառնում է երեխաների միջոցով. օգտագործում է երեխաներին վիրավորական/սպառնալիք հաղորդագրություններ ուղարկելու համար:	32	44	9
Սպառնում է վնասել մեկին, ով կարևոր է կնոջ համար (երեխաներին, հարազատներին կամ ընտանի կենդանիներին)	28	28	29
Սպառնում է ինքնասպանություն գործել	20	36	29
Բացահայտ սպառնում է նրա հարազատներին կամ ընկերներին	19	35	31
Նրան սպառնալից հաղորդագրություններ է ուղարկում	16	42	27
Փորձում է վիրավորել մեկին, ում մասին կինը հոգ է տանում	14	33	37

Աղյուսակ 25. Ահաբեկում

	Այո	Ոչ	Հայտնի չէ
Փորձում է դիտավորյալ ահաբեկել կնոջը	75	4	7
Ահաբեկում է նրան բղավելով, սպառալից ժեստերով կամ վարքագծով	72	4	10
Պատժում է նրան	62	9	15
Ոչնչացնում է նրա իրերը կամ ջարդում/ոչնչացնում է տան իրերը	38	28	20

Աղյուսակ 26. Ստորացում, նվաստացում, ամի՞թ զգալու և ինքնամեղադրանքի պարտադրում

	Այո	Ոչ	Հայտնի չէ
Նվաստացնում է կնոջը, երբ իրենք երկուսով են, կամ այլ մարդկանց (երեխաների, հարազատների) ներկայությամբ	83	1	2
Մեղքի զգացում է պարտադրում	83	0	3
Նսեմացնում կամ թերագնահատում է, ստիպում մտածել, որ նա արժեք չունի	82	1	3
Ունի բանավոր ագրեսիայի պոռթկումներ՝ հայիտում է, անպատվում, կնոջը կամ նրա ընտանիքի անդամներին տհաճ անուններով է անվանում	81	2	3
Մեղադրում է կնոջն անմեղաանություն, անպատասխանատու լինելու մեջ կամ ստիպում է մտածել, որ նա շատ տարօրինակ վարքագիծ ունի	79	1	6
Վիրավորում է կամ ստիպում ինքն իրենից ամաչել	79	1	6
Պնդում է, որ կինը «սադրել» է իրեն, որ նա է պատասխանատու իր բռնի պահվածքի համար	73	1	10
Դրդում է նրան խեղաթյուրված կերպով ընկալել բռնությունը, օրինակ՝ անտեսել կամ հերքել այն, կամ արդարացնել իր վարքը («Նա հոգնել է...», «Նա գիտովցած է...»):	72	1	10
Ստիպում է նրան մեղավոր զգալ իր ծնողական պարտականությունները ենթադրաբար չկատարելու համար	72	9	5
Հաճախ քննադատում, թերագնահատում, դատում, ծաղրում է նրան	71	5	10
Ստիպում է նրան նվաստացուցիչ ինչ որ բան անել, կատարել իր անիմաստ կամ անմիտ խնդրանքները	65	9	12
Երկար ժամանակ չի խոսում նրա հետ	45	10	31

4.2.5. Ուտնձգության ենթարկված կանանց հուզական/հոգեկան վերապրումները

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սեռական զուգընկերոջ բռնությունը կարող է լուրջ հետևանքներ ունենալ ուտնձգության ենթարկված անձանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա (Campbell 2002; Garcia-Moreno et al 2005, Heise and Garcia-Moreno 2002, Dube et al. 2005, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ԿՆԲ խորը ուսումնասիրություն, 2006 թ, Martin et al. 2007, ԱՄԿ 2012, Ferrari et al. 2014, Սեռական զուգընկերների բռնության և հոգեկան առողջության հարցերով Լանսետ հոգեբուժական հանձնաժողով 2022, Newnham et al. 2022): Հոգեկան առողջության վրա հետևանքներն են դեպրեսիան, ինքնասպանության փորձերը, հետտրավմատիկ սթրեսային խանգարումները, սթրեսը և անհանգստությունը, քնի/սնվելու և հոգետմատիկ խանգարումները: Ուսումնասիրության այս հատվածը անդրադառնում է ուսումնասիրությանը մասնակից կանանց տարբեր հուզական/հոգեկան դժվարություններին (տե՛ս Աղյուսակ 27):

Աղյուսակ 27. Ոսնձգության ենթարկված անձանց մոտ առաջացած հուզական/հոգեկան դժվարություններ

Հուզական/հոգեկան դժվարություններ, որոնց մասին հայտնում են ոսնձգության ենթարկված անձինք (կամ որևէ խնդիր, որը հոգեբանը/սոցիալական աշխատողը նկատել/նույնականացրել է ոսնձգության ենթարկված անձի հետ խոսելիս)	
Անհանգստություն	75
Վախեր	64
Նյարդային, գրգռված, լարված, անհավասարակշիռ վիճակ	62
Քնելու հետ կապված խնդիրներ	60
Հուսահատության զգացում	59
Ինքնավստահության կորուստ	57
Վատ տրամադրություն կամ տրամադրության հանկարծակի փոփոխություններ	52
Սեփական անձի թերագնահատում, իր «անարժեք/անպետք » լինելու մասին պատկերացում	51
Գլխացավեր, գլխապտույտ, դող, շնչառության դժվարություն	47
Խուճապի նոպաներ	46
Ինքնամեղադրում, մեղքի զգացում	39
Ինքնասպան լինելու մասին մտքեր	27
Կաշկանդվածություն մարդկանց հետ շփվելիս	21
Դեպրեսիա	18
Սեռական խնդիրներ. սեռական կյանքից խուսափում, հաճույքի բացակայություն	17
Աշխատանքի կամ ուսման վրա կենտրոնանալու դժվարություններ	17
Ինքնասպանության փորձեր	15
Տրավմատիկ իրադարձություններից մասին հիշեցնող մարդկանցից կամ վայրերից խուսափում	11
Անտարբերություն, թմրածություն, աշխատանքի կամ սովորելու մոտիվացիայի բացակայություն	11
Ագրեսիվություն, զայրույթի բռնկումներ	10
Ծեծում է երեխաներին կամ հաճախակի բղավում նրանց վրա	8
Այլ մարդկանցից «օտարվածության» զգացում	7
Հեռացում մարդկանցից, մեկուսացում	6
Հաճախակի կոնֆլիկտներ ընկերների, գործընկերների և այլոց հետ	2
Մենդի խանգարումներ՝ ավելորդ քաշ կամ ծայրահեղ նիհարություն	2
Այլ մարդկանց վստահելու և նրանց հետ սերտ հարաբերություններ հաստատելու խնդիրներ	1
Հանգստացնող միջոցների/քնաբեր հաբերի չափից ավելի օգտագործում	1

4.2.6. Բռնության տևողությունը, խստությունը և (հնարավոր) թեժացումը

Տվյալները հաստատում են, որ ընտանեկան շատ դեպքերում բռնությունը վարքագծի անբաժանելի դրսևորում է, այլ ոչ թե պարզապես դրվագ, որը, ինչպես բացատրվեց վերևում, համահունչ է այդ թեմայի վերաբերյալ գրականությունում արտահայտված կարծիքներին:

Ուսումնասիրվել է, թե որքան ժամանակ առաջ է տեղի ունեցել բռնության առաջին դեպքը. քանի ամիս կամ տարի է անցել բռնության առաջին «դրվագից»: Պարզվել է, որ կանայք միջինում բռնության են ենթարկվում 10,5 տարի տևողությամբ, թեև լինում են զգալի տատանումներ՝ բռնության տևողությունը տատանվում է երկու ամսից մինչև 40 տարի:

Առավել հաճախ, բռնության առաջին միջադեպը տեղի է ունենում բռնարարի և ոտնձգության ենթարկված անձի ամուսնությունից/համատեղ կյանքը սկսելուց անմիջապես հետո, և հաճախ այն շարունակվում է կնոջ հղիության ընթացքում (տե՛ս 28-31 աղյուսակները):

Աղյուսակ 28. Արդյո՞ք ինչ-որ իրադարձություն բռնության «խթան» է հանդիսացել. արդյո՞ք ոտնձգության սկիզբը կապվել է որևէ կոնկրետ իրադարձության հետ:

Ամուսնանալուց/ միասին ապրելուց հետո կարճ ժամանակ անց	57 ³⁷
Հղիության շրջանում	48
Այն բանից հետո, երբ նա սկսեց չարաշահել խմիչքը կամ թմրանյութեր ընդունել	31
Իր կյանքում որևէ վատ իրադարձությունից հետո (աշխատանքի կորուստ, մտերիմ մարդու մահ և այլն)	21
Իրենց առաջին կամ երկրորդ երեխայի ծնվելուց հետո	9
Բռնությունը տեղի է ունեցել նույնիսկ նախքան նրանք ամուսնանալը/ միասին ապրելը	2

Աղյուսակ 29. Արդյո՞ք ոտնձգության ենթարկված անձի հղիության ընթացքում նրա նկատմամբ բռնություն/ ոտնձգություն է գործադրվել:

Այո	56
Ոչ	27
Հայտնի չէ/ոտնձգության ենթարկված անձը հղիություն չի տարել	3

Աղյուսակ 30. Արդյո՞ք բռնությունը/ոտնձգությունը վերջին ժամանակներս սրվել է՝ դարձել է ավելի հաճախակի կամ սուր:

Այո	60
Ոչ	26

Աղյուսակ 31. Եթե այո, արդյո՞ք բռնության թեժացումը տեղի է ունեցել որևէ կոնկրետ իրադարձությունից հետո.

Ոտնձգության ենթարկված անձը փորձել է փախչել/հեռանալ ոտնձգողից	46 ³⁸
Ոտնձգության ենթարկված անձը հղիացել է	35
Ոտնձգության ենթարկված անձը դիմել է ամուսնալուծության համար	6
Ոտնձգող վերադարձել է պատերազմից/զինված հակամարտությունից	3

4.2.7. Երեխաները որպես ընտանեկան բռնության ականատես և/կամ ոտնձգության ենթարկված անձ հետևանքները

Բռնության ականատես լինելը վնասակար ազդեցություն է թողնում երեխաների վրա: Այն առաջացնում է վախ, հոգեկան խնդիրներ և բացասաբար է ազդում նրանց զարգացման վրա: Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում (կետ 141) պարզաբանվում է. «Այդ իսկ պատճառով 26-րդ հոդվածում սահմանվում է պարտավորություն՝ ապահովելու, որ բռնության ականատես դարձած երեխաներ ունեցող ոտնձգության ենթարկված անձանց ծառայություններ և օգնություն տրամադրելիս հաշվի առնվեն այդ երեխաների իրավունք-

37 Հնարավոր է մեկից ավելի պատասխան:

38 Հնարավոր է մեկից ավելի պատասխան:

ները և կարիքները: «Ականատես երեխա» հասկացությունը վերաբերում է ոչ միայն այն երեխաներին, ովքեր ներկա են եղել բռնության ժամանակ և անմիջական ականատես են եղել դրան, այլ նաև նրանց, ովքեր լսել են ճիշեր և բռնության այլ հնչյուններ՝ թաքնվելով մոտակայքում կամ ենթարկվել են նման բռնության երկարաժամկետ հետևանքների: Կարևոր է ընդունել և անդրադառնալ երեխաների՝ որպես սույն Կոնվենցիայի շրջանակում ընդգրկված բռնության բոլոր ձևերի ականատեսների, վիկտիմիզացիայի խնդիրն և նրանց՝ օգնություն ստանալու իրավունքին: Այդ իսկ պատճառով, 2-րդ կետով պահանջվում է տարիքին և զարգացմանը համապատասխան ամուր ապացուցողական հիմքերով հոգեցուցիչական միջամտություն, հատուկ հարմարեցված երեխաների կարիքներին՝ անհրաժեշտության դեպքում հաղթահարելու նրանց տրավմատիկ փորձառությունները: Բոլոր առաջարկվող ծառայությունները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն երեխայի լավագույն շահերը:

Ինչպես նշվում է Hester et al. (2007) աշխատությունում, երեխաները, ովքեր ընտանեկան բռնության ականատեսի կարգավիճակում են, բռնության փորձ չունեցող ընտանիքներից սերող հասակակիցների համեմատ կարող են ավելի շատ «հարմարվողականության դժվարություններ» ունենալ: Նրանք կարող են զգալ տարբեր վարքային, ֆիզիկական և հոգեբանական կարճաժամկետ և/կամ երկարաժամկետ ազդեցություններ. ցածր ինքնագնահատական, վախ, անապահովություն և լարվածություն, տխրություն և դեպրեսիա, ուրիշներին վստահելու դժվարություններ, անբավարար սոցիալական հմտություններ, ուսման խնդիրներ, դպրոցական և կենցաղային կյանքում անախորժություն, ծնողների հետ կապված հուզական շփոթություն, գիշերամիզություն, մղձավանջներ և քնի խանգարումներ, ուտելու դժվարություններ և քաշի կորուստ, ինքնամեղադրանք և հոգեկան դառնություն և այլն: Ուսումնասիրություններում նաև ընդգծվում են ճանաչողական (կոգնիտիվ) խանգարումներ և բռնության նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք, որին անհրաժեշտ է հետևողական անձագանքել (Edleson 1999): Երեխա ականատեսների մոտ ավելի հավանական են հուզական և վարքային խնդիրները, ապագայում բռնություն գործադրելու կամ բռնության ենթարկվելու վտանգ (տե՛ս, օրինակ, Wood and Sommers 2011, Kitzmann et al. 2003), դեպրեսիա դեռահասության և հասուն երիտասարդության տարիքում (Russell, Springer, Greenfield 2011; Huang, Chen and Cheung 2021), սրտի հիվանդություններ կամ շաքարախտ մեծահասակ տարիքում (Monnat and Chandler 2015):

Այս ուսումնասիրությունում փորձ է արվել պարզելու, թե արդյոք երեխաները եղել են բռնության ականատես և/կամ ոտնձգության ենթարկված անձ, և արդյոք նրանք տառապել են դրա հետ կապված հուզական խնդիրներից: Ուսումնասիրությունում ներառված կանայք ունեն մեկից ութ երեխա, որոնցից շատերը բռնության տախներին 18 տարեկանից ցածր են եղել:

Աղյուսակ 32: Արդյոք երեխաները երբևէ ականատես են եղել³⁹ բռնության իրենց մոր/խորթ մոր նկատմամբ. արդյո՞ք երեխաները ներկա են եղել բռնության դրսևորման վայրում:

Այո	68
Ոչ	9
Հայտնի չէ/ոտնձգության ենթարկված անձը երեխա չունի	8

Աղյուսակ 33: Եթե այո, ապա որքա՞ն հաճախակի

Առնվազն շաբաթը մեկ անգամ	22
Առնվազն ամիսը մեկ անգամ	15
Համարյա ամեն օր	14
Առնվազն մի քանի ամիսը մեկ անգամ	9
Միայն մեկ անգամ	0
Հայտնի չէ/այլ	8

39 Անկախ նրանից՝ իրավախախտը երեխաների հայրն է, թե երեխաները ներկայումս ապրում են և՛ ոտնձգողի և՛ ոտնձգության ենթարկված անձի հետ, ընդ որում՝ երեխաների հետ կապված հարցերը վերաբերում են նաև ոտնձգության ենթարկված անձի կամ իրավախախտի նախորդ ամուսնությունից երեխաներին, ինչպես նաև որդեգրված/խնամատար երեխաներին:

Աղյուսակ 34: Արդյո՞ք երեխաներից որևէ մեկի մոտ, փոքրիկ հասակում (5-ից 12 տարեկան), նկատվել է հետևյալը.

Ծայրահեղ ամաչկոտություն	66
Ագրեսիա մոր/խորթ մոր, այլ երեխաների նկատմամբ	46
Երեխան դադարել է դայրոց հաճախել	18
Գիշերամիզություն	14
Փախուստ տնից	5

Աղյուսակ 35. Բռնությունից տուժած երեխաներ

Արդյո՞ք ոտնձգողը երբևէ բռնություն է գործարել երեխաների (որևէ մեկի) նկատմամբ		Եթե այո, ապա ո՞ր տեսակի բռնության են ենթարկվել երեխաները և որքան հաճախ:			
		Բռնության ձևեր	Հաճախ	Հազվադեպ	Երբեկ
Այո	54	Հոգեբանական	38	12	0
Ոչ	22	Ֆիզիկական	17	27	0
Հայտնի չէ	1	Սեռական	1	2	11

Բացի բռնությանը ականատես լինելուց (տես Աղյուսակներ 32-33), որոշ երեխաներ նաև իրենք են ենթարկվել բռնության (տես Աղյուսակ 35):

Ելնելով վերը նկարագրված փորձառություններից՝ վեց դեպքերում երեխաները հոգեբույժի/հոգեբանի օգնության կարիք են ունեցել:

4.2.8. Ընտանեկան բռնությունը ոտնձգողի և ոտնձգության ենթարկված անձի ծնողական ընտանիքում

ԿԱԿ-ի մասնագետները միշտ չէ, որ տեղյակ էին, թե արդյոք ոտնձգության ենթարկված անձի կամ ոտնձգողի ծնողական ընտանիքում ընտանեկան բռնություն եղել է, թե ոչ: Սակայն որոշ դեպքերում հայտնի է, որ ոտնձգողի ընտանիքում հայրը ֆիզիկական և/կամ հոգեբանական բռնության է ենթարկել իր մորը և/կամ հենց իրեն, տե՛ս Աղյուսակներ 36 և 37: Ոտնձգության ենթարկված որոշ անձինք իրենց ծնողական ընտանիքներում նույապես ականատես են եղել կամ ուղղակիորեն ենթարկվել են բռնության:

Աղյուսակ 36. Արդյո՞ք ոտնձգողի հայրը.

	Այո	Ոչ	Հայտնի չէ
Բռնության էր ենթարկում ոտնձգողի մորը (հոգեբանական և/կամ ֆիզիկական)	36		50
Բռնության էր ենթարկում ոտնձգողին (հոգեբանական և/կամ ֆիզիկական)	32	22	32

Աղյուսակ 37. Արդյո՞ք ոտնձգության ենթարկված անձի հայրը.

Բռնության էր ենթարկում ոտնձգության ենթարկված անձի մորը (հոգեբանական և/կամ ֆիզիկական)	16	63	7
Բռնության էր ենթարկում ոտնձգության ենթարկված անձի ն (հոգեբանական և/կամ ֆիզիկական)	12	65	9

4.2.9. Եզրակացություններ բռնության տևողության, ծանրության և բնութագրի, ոտնձգության ենթարկված անձանց և երեխաների վրա ազդեցության վերաբերյալ

1. Այսպիսով, այս ուսումնասիրության մեջ ներգրավված կանանց մեծ մասը ենթարկվել է բռնության լուրջ դրսևորումների, այդ թվում՝ սպանության սպառնալիքների (71 դեպք), շատերի մոտ լուրջ հետևանքներ են եղել, այդ թվում՝ ոտնձգողի կողմից հասցված ֆիզիկական վնասվածքների պատճառով հայտնվել են հիվանդանոցում (34 դեպք), ոմանք դաժան վերաբերմունքի հետևանքով առաջացած հոգեբանական խնդիրների պատճառով նույնիսկ հոգեբուժական օգնության կարիք են ունեցել (16 դեպք), հետագայում նրանցից ոմանք ինքնասպանության փորձ են կատարել (10 դեպք): Այդ ամենից կարելի է եզրակացնել, որ բռնությունը վտանգել է նրանց ֆիզիկական և մտավոր կարողությունները, հետևաբար, և նրանց մեծ մասը անհապաղ պաշտպանության կարիք են ունեցել: Ուսումնասիրության համաձայն կանայք հիմնականում պատկանում են բարձր **ռիսկային խմբի, որի մասին են վկայում բռնության տևողության և լրջության և** ոտնձգության ենթարկված անձանց **և նրանց երեխաների վրա դրա ազդեցության մասին վերլուծությունների արդյունքները:** Ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական և սեռական բռնության դրսևորումները հիմնականում սերտաճած են:
2. Բռնության տևողության և ծանրության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ **կանանց մեծ մասը սեռական զուգընկերոջ կողմից ենթարկվել է տևական և լուրջ բռնության: Բռնությունը հիմնականում տարիներ է տևել (միջինում 10,5 տարի, երկու ամսից մինչև 40 տարի):** Բռնության առաջին դրվագը առավել հաճախ (դեպքերից 57-ում) տեղի է ունեցել անմիջապես այն բանից հետո, երբ կինը ամուսնացել է/սկսել է ապրել բռնարարի հետ: Մեկ այլ մտահոգիչ հանգամանքն այն է, որ հաճախ բռնություն տեղի է ունեցել կնոջ հղիության ընթացքում (դեպքերից 56-ում): Շատ դեպքերում բռնությունը գնալով թեժացել է, հատկապես, երբ կինը փորձել է փախչել/հեռանալ բռնարարից (46 դեպք): Այս բացահայտումները համահունչ են «բռնության ցիկլի» վերաբերյալ ուսումնասիրության արդյունքներին, ներառյալ այն փաստերին, որ երբ կինը փորձում է լքել բռնարարին նա մեծ վտանգի է առջև է կանգնում: Քանի որ կանանց մեծ մասը երկար ժամանակ է բռնության ենթարկվել, նրանց մոտ առաջացել են հոգեկան առողջության խնդիրներ: Ինչպես պարզել են ԿԱԿ-ի համապատասխան վերապատրաստում անցած մասնագետները, **ոտնձգության ենթարկված անձանց մոտ առկա են բազմաթիվ հուզական/հոգեկան խնդիրներ:** Այստեղ թվարկված են միայն այն խնդիրները, որոնք առավել տարածված են. անհանգստություն, վախ, նյարդային, գրգռված, լարված, անհավասարակշռված վիճակ, անքնություն, հուսահատության զգացում, ինքնավստահության կորուստ, տրամադրության կտրուկ փոփոխություններ, անարժեք/անպետք լինելու զգացում, խուճապի նոպաներ, ինքնամեղադրանք, մեղքի զգացում և ինքնասպանության մտքեր:
3. **Ֆիզիկական բռնությունը հաճախ է տեղի ունենում (32 դեպքում՝ մոտավորապես շաբաթը մեկ անգամ),** և չի արձանագրվել որևէ դեպք, երբ ֆիզիկական բռնությունը տեղի է ունեցել միայն մեկ անգամ: Ֆիզիկական բռնությունը որոշ դեպքերում դրսևորվում է շնչահեղձության (20 դեպք) և խեղդամահիության (20 դեպք) փորձի տեսքով, ինչը կյանքից զրկելու/մահացու բռնության վտանգի գործոն է: Ոտնձգության ենթարկված անձանցից շատերը (ներկայումս կամ նախկինում) բռնության հետևանքով ստացել են ֆիզիկական վնասվածքներ, այդ թվում՝ կապտուկներ, կտրվածքներ և քերծվածքներ (79 դեպք), գլխի վնասվածք (43 դեպք), քթի, ատամների կամ ծնոտի կտրվածք (8 դեպք), ձեռքի/ոտքի կտրվածք (5 դեպք), և այրվածքներ (3 դեպք):
4. Կանանց մեծ մասը (38 դեպք) տնտեսապես կախված է եղել բռնարարից: Անկախ նրանից, թե կինն եկամուտ է ունեցել աշխատանքից, թե այլ աղբյուրներից, օրինակ՝ հարազատների և ընկերների ֆինանսական օգնության շնորհիվ, գումարը բռնարարն է վերահսկել (72 դեպք): Բռնարարը տարբեր մարտավարություններ է կիրառել՝ սահմանափակելու ոտնձգության ենթարկված անձի համար գումարի հասանելիությունը և վերահսկելու նրա և/կամ ընտանիքի տնտեսական գործունեությունը և բյուջեն: Այստեղ թվարկված են միայն ամենահաճախ կիրառվող մարտավարությունները՝ վերահսկում է գումարը, որը նա տալիս է ոտնձգության ենթարկված անձի և տնային ծախսերի համար, խլում է նրա մոտ եղած գումարը և այլն:

5. Լայն հասարակությունը և որոշ իրավաբան մասնագետներ սեռական զուգընկերոջ կողմից բռնության շրջափակում հոգեբանական բռնությունը հաճախ ընկալում են պարզեցված ձևով՝ որպես «ամուսնական հակասությունների» ժամանակ հնչեցվող վիրավորանք, հայիոյանք և տհաճ արտահայտություններ: Սակայն այս ուսումնասիրության շրջանակում ընդգրկված կանանց մեծ մասը շատ ավելին է վերապրել, քան պարբերական վիրավորանքները: Նրանք ենթարկվել են դաժան վերաբերմունքի տևական ժամանակ, որը նկարագրվում է որպես «հարկադրող վերահսկողություն» (Stark 2007): Ֆիզիկական բռնությունից բացի, այս ուսումնասիրության շրջանակում ընդգրկված կանայք գոյատևում էին մշտական վախի մթնոլորտում, քանի որ բռնարարները հետևողականորեն փորձել են նրանց նկատմամբ վերահսկողություն սահմանել և պահպանել առօրյա կյանքի բոլոր ոլորտներում: Ունեցողները գործադրել են տարբեր մարտավարությունների պայթյունավտանգ համակցության, որոնցից այստեղ հիշատակվում են միայն նրանք, որոնք առավել հաճախակի են հանդիպում: Մասնավորապես, բռնարարները կիրառել են վերահսկողության և հսկողության մարտավարություն, ներառյալ գրեթե բոլոր դեպքերում՝ հրամաններ/հրահանգներ հնչեցնելը, առօրյա կյանքի վերահսկումը, գտնվելու վայրի հսկողությունը և լրտեսությունը, բացատրությունների պահանջ իրենց բացակայությամբ անցկացրած յուրաքանչյուր պահի համար: Նրանք նաև փորձել են մեկուսացնել կնոջը՝ արգելելով կամ սահմանափակելով նրա շփումները ընկերների և ընտանիքի հետ: Նրանք ապավինել են սպառնալիքներին և ահաբեկումներին, հաճախ՝ կնոջը ֆիզիկական վնաս պատճառելու կամ վիրավորելու կամ սպանելու համար. դիտմամբ վախեցնել նրան բղավելով, վախեցնող ժեստերով կամ վարքագծով: Բռնարարներից շատերը նվաստացրել են կնոջը, նրա մոտ առաջացնելով ամոթի և ինքնամեղադրանքի զգացում, հաճախ նրանք նպատակաուղղված նվաստացրել են կնոջը՝ նրան մեղավորության զգացում պարտադրելով և ստիպելով անարժան զգալ, և/կամ մեղադրելով նրան խելագար լինելու կամ իր գործողությունները չգիտակցելու մեջ: Ինչպես նկարագրված է գրականության մեջ (տե՛ս, օրինակ, Buzawa et al. 2017), կանայք, ովքեր ենթարկվել են հարկադրող վերահսկողության, իրենց զգում են թակարդած: Հաշվի առնելով բռնության լրջությունն ու տևողությունը՝ զարմանալի է, որ կանանցից շատերը հուզական/հոգեկան խնդիրներ են ունեցել (ինչպես նկարագրված է վերևում):
6. Զափազանց անհանգստացնող է այն փաստը, որ այս ուսումնասիրության մեջ ընդգրկված կանանց **երեխաները նույնպես ենթարկվել են ընտանեկան բռնության՝ որպես ականատես կամ անմիջական** ունեցողության ենթարկված անձ Բռնության սաստկությունը և երկարաժամկետ հետևանքները գնահատելիս պետք է նկատի ունենալ, որ այս ուսումնասիրության մեջ ընդգրկված կանայք ունեցել են մինչև 18 տարեկան 148 երեխա: Դեպքերի մեծ մասում (68) երեխաներ ներկա են եղել բռնության կիրառման վայրում: Նրանցից շատերը հաճախակի են եղել բռնության ականատես (22 դեպքում՝ շաբաթական առնվազն մեկ անգամ, 15 դեպքում՝ առնվազն ամիսը մեկ անգամ): Մտահոգիչ է, որ երեխաներից շատերը, բացի բռնության ականատես լինելուց, ուղղակի ենթարկվել են բռնության. 54 դեպքում բռնարարը հոգեբանական կամ ֆիզիկական բռնություն է գործադրել նաև երեխայի նկատմամբ: Որոշ դեպքերում դա հաճախ է տեղի ունեցել (բռնարարը հոգեբանական բռնություն գործադրել է 38 դեպքում, ֆիզիկական՝ 17 դեպքում): Երեխաների մեծ մասը հուզական ապրումներ են ունեցել: Նրանցից ոմանք նույնիսկ լուրջ հետևանքներ են կրել, ուստի ստիպված են եղել դիմել մասնագետների (հոգեբույժների կամ հոգեբանների) օգնության: Դեռևս պարզ է, թե ինչպես կդասավորվի այդ երեխաների կյանքը, երբ նրանք մեծանան, թեև նախկին ուսումնասիրությունների հիման վրա կարելի է ենթադրել, որ նրանցից շատերը չեն խուսափի երկարաժամկետ հոգեբանական ապրումներից:
7. Որոշ տվյալներ հաստատում են, որ բռնարարներից ոմանք **բռնության են ենթարկվել կամ ականատես են եղել դրան իրենց ծնողական ընտանիքում՝ մանկահասակ տարիքում**: Նրանցից 36-ը ընտանիքներից են, որտեղ հայրը հոգեբանորեն և/կամ ֆիզիկական բռնության է ենթարկել մորը, իսկ 32-ը իրենց հոր կողմից ֆիզիկական և/կամ հոգեբանական բռնության է ենթարկվել: Ուսումնասիրության մեջ ընդգրկված կանանցից մի քանիսը (նրանցից 16-ը) ականատես են եղել հոր հոգեբանական/ֆիզիկական բռնության իրենց մոր նկատմամբ կամ անմիջականորեն ենթարկվել են հոգեբանական/ֆիզիկական բռնության (12 դեպք):

Ուսումնասիրության ստորև մասերում դիտարկվում է, թե ինչպես են պետական կառույցները (ոստիկանությունը, քննիչները և դատական մարմինները) արձագանքում վերը նկարագրված բռնության դեպքերին:

4.3. Ոստիկանության ծառայողների արձագանքը բռնությանը. քաղաքացիական և քրեական օրենսդրության կիրառման ուժեղ և թույլ կողմերը

Այս բաժնում դիտարկվում է ոստիկանության արձագանքը ԸԲ-ին, ներառյալ նրանց կողմից ԸԲ օրենքի կիրառման ուժեղ և թույլ կողմերը (ներառելով, բայց չսահմանափակվելով նախազգուշացումների տրամադրման և ԱՄՈ-ների կայացման պրակտիկայով) և նրանց ներգրավվածությունը քրեական գործերի մեջ: ԿԱԿ մասնագետները նշել են, որ ԸԲ օրենքի ընդունումից ի վեր ոստիկանության աշխատակիցների գործելակերպի որոշակի բարելավում է տեղի ունեցել (նման գնահատականը ստացվել է պատասխանների քանակական և որակական վերլուծության արդյունքում):

Օրինակ, ոստիկանության ծառայողները որպես կանոն հարգել են ոտնձգության ենթարկված անձի իրավունքները և անձի գաղտնիությունը, կազմել են դեպքերի մասին զեկույցներ և, որ կարևոր է, ոտնձգողի ներկայությամբ ոտնձգության ենթարկված անձի ց ցուցմունք չեն վերցրել (տե՛ս Աղյուսակ 38): ԿԱԿ գործընկերների հետ հետագա հարցազրույցներում պարզվեց նաև, որ, նրանց կարծիքով, թեև ԸԲ օրենքի ընդունումից հետո ոստիկանության գործելակերպի բարելավումներ են եղել, սակայն բազմաթիվ թերություններ դեռևս պահպանվել են (տե՛ս հաջորդ բաժինները):

Աղյուսակ 38. Ոստիկանության գործելակերպի ընդհանուր գնահատում


	Այո	Ոչ	Չայտնի չէ
Ոստիկանությունը արձանագրություն է կազմել ԸԲ դեպքի վերաբերյալ	58	6	22
Ոստիկանության աշխատակիցները միջամտության ընթացքում պահպանել են ոտնձգության ենթարկված անձի իրավունքներն ու գաղտնիությունը	58	3	25
Ոստիկանության աշխատակիցներն իրենց հաղորդումներում արձանագրել են հանցագործության դեպքին վերաբերող տարրերը (օրինակ՝ ոտնձգության ենթարկված անձի և հասցված վնասվածքները)	48	13	25
Ոստիկանության աշխատակիցը ոտնձգության ենթարկված անձի անձնական կյանքի վերաբերյալ հարցումներ է կատարել, որոնք առնչություն չեն ունեցել և անմիջականորեն կապված չեն եղել վարույթի հետ	3	62	21
Ոստիկանության աշխատակիցը ոտնձգության ենթարկված անձից ցուցմունքներ է վերցրել ոտնձգողի ներկայությամբ	1	58	27

4.3.1. Ոստիկանության դերի կտրվածքով ԸԲ օրենքում նախատեսված դրույթների կիրառումը (հոդված 15)

ԸԲ օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է ընտանեկան բռնությունը կանխելու և ոտնձգության ենթարկված անձանց պաշտպանելու հարցում ոստիկանության մանդատը: Գծապատկեր 10-ում վերլուծված է, թե ինչպես են այս դրույթները կիրառվել գործնականում:⁴⁰ Արդյունքները բավականին հուսադրող են հատկապես ոստիկանությունում ԸԲ կանխարգելման համար պատասխանատու ստորաբաժանումների ստեղծման առումով:

40 ԸԲ օրենքը նաև նախատեսում է, որ ոստիկանությունը պետք է վերապատրաստման դասընթացներ կազմակերպի իր ծառայողների համար (15(4) հոդված), սակայն ԿԱԿ-ի մասնագետների մոտ այդ մասին տեղեկատվությունը բացակայում էր, ուստի այս աղյուսակում այն ներկայացված չէ:


Գծապատկեր 10. ԸԲ օրենքի 15-րդ հոդվածի կիրառումը



4.3.2. Ոսնձգության ենթարկված անձանց և ոսնձգողների հետ շփման ընթացքում ոստիկանության միջամտությունների թերացումները


Չարցաշարին տրված պատասխանները վկայում են ԸԲ դեպքերին ոստիկանության արձագանքման մեջ բազմաթիվ թերությունների մասին, առաջին հերթին վտանգի գնահատման առումով: Չարկ է նշել, որ որոշ դեպքերում վտանգների գնահատման ձևն ընդհանրապես չի լրացվել (տե՛ս գծապատկեր 11):

Գծապատկեր 11. Վտանգների գնահատումը ոստիկանության կողմից




Ոստիկանության միջամտությունների այլ թերությունները ներկայացված են ստորև գծապատկերներում: Դրանք տեղի են ունեցել ոստիկանության բոլոր միջամտությունների ընթացքում, քանի որ որոշ դեպքերում ոստիկանությունը մի քանի անգամ է միջամտել:


Գծապատկեր 12. Կարծրատիպային կամ ոտնձգության ենթարկված անձի ն մեղադրող վերաբերմունք



Գծապատկեր 13. Ոչ ֆորմալ հաշտեցման փորձեր



Գծապատկեր 14. Բռնության լրջության անտեսում կամ ոտնձգության ենթարկված անձի կողմից իրավապահ գործընթացը շարունակելու հիասթափեցում



Հարցաշարին տրված պատասխանները ցույց են տալիս, որ ոստիկանության աշխատակիցները հաճախ միջոցներ չեն ձեռնարկում կանխելու/վազեցնելու ոտնձգության ենթարկված անձի և երեխաների կրկնակի վիկտիմիզացիան (տե՛ս Աղյուսակ 39) և փաստերի հավաքման հարցում պրոակտիվ մոտեցում չեն ցուցաբերում: Բացի այդ, դեպքերից 29-ում ոստիկանության աշխատակիցը չի փորձել հարցազրույց վերցնել հարևաններից, ընկերներից, ընտանիքից կամ այլ անձանցից, ովքեր կարող էին տեղյակ լինել բռնության մասին կամ լսել, թե ինչպես է բռնությունը տեղի ունենում:

Աղյուսակ 39. Արդյո՞ք ոտնձգության ենթարկված անձի և ոստիկանության միջև շփման ժամանակ տեղի է ունեցել հետևյալից որևէ մեկը

	Այո
Ոտնձգության ենթարկված անձը մի քանի անգամ հրավիրվել է ոստիկանություն և ստիպված է եղել կրկնել իր ցուցմունքները	44
Ոստիկանության ծառայողները ոտնձգության ենթարկված անձի և կարգադրել են ներկայաՆալ ոստիկանության բաժին՝ գրավոր հաղորդումը տալու	35
Ոտնձգության ենթարկված անձը տեղեկացված չի եղել իր իրավունքների և օգնության աղբյուրների մասին (ՀԿ-ներ, ապաստարաններ)	9
Ոստիկանության ծառայողն ոտնձգողի ներկայությամբ ցուցմունքներ է վերցրել երեխաներից	2

4.3.3 Եզրակացություններ քրեական գործերով ոտնձգության ենթարկված անձանց հետ շփման ընթացքում ոստիկանության գործելակերպի թերությունների մասին

Հարցաշարի պատասխանները վկայում են ոստիկանության գործելակերպի հետևյալ թերությունների մասին.

1. **Վտանգների գնահատման թերություններ.** Ոստիկանության աշխատակիցները հաճախ հաշվի չեն առնում ոտնձգության ենթարկված անձի կողմից՝ իրեն և երեխաներին սպառնացող վտանգի/վտանգի մասին տրված գնահատականը և երբեմն վտանգների գնահատման ձևն ընդհանրապես չեն լրացնում:

2. **Անուղղակիորեն կամ բացահայտ կերպով կարծրատիպային կամ** ոտնձգության ենթարկված անձին **մեղադրող վերաբերմունքի արտահայտում**. Հատկանշական է, որ ոստիկանության որոշ աշխատակիցներ ակնարկել են, որ ոտնձգության ենթարկված անձը ցանկանում է «քանդել ընտանիքը» կամ «երեխաներին թողնել առանց հոր», իսկ նրանցից ոմանք արտահայտել են այնպիսի վերաբերմունք, որը լրիվ այլ ենթատեքստ ունի, օրինակ՝ ոտնձգության ենթարկված անձին մեղադրել են «պասիվ» լինելու կամ «տնից ավելի շուտ չիռանալու» համար:
3. **«Ոչ ֆորմալ հաշտություն»**. ոտնձգության ենթարկված անձի հետ շփումների ժամանակ ոստիկանության աշխատակիցները երբեմն ասել են, որ ամուսնու հետ մնալը ոտնձգության ենթարկված անձի շահերից է բխում:
4. **Բռնության լրջության անտեսում, նախորդ բռնության անտեսում**, ոտնձգության ենթարկված անձի **իրավական գործընթացը շարունակելու առումով հուսահատեցում**. ոստիկանության աշխատակիցները հաճախ չեն կարևորում բռնության, հարկադրանքի և սպառնալիքների հոգեբանական ազդեցությունը և անտեսում են բռնության նախորդ դեպքերի վերաբերյալ ոտնձգության ենթարկված անձի տեղեկությունները: Երբեմն, թեև ավելի հազվադեպ, նրանք բռնությունը նաև բնութագրում են որպես ոչ լուրջ, և հուսահատեցնում ոտնձգության ենթարկված անձի ն, ասելով, որ նա գնալու տեղ չունի, կամ որ դատական գործընթացը երկար կտևի:
5. **Անբավարար միջոցներ՝** ոտնձգության ենթարկված անձի **հետագա հնարավոր զոհականացումը նվազեցնելու համար**. հաճախ ոտնձգության ենթարկված անձի և կանչում են ոստիկանության բաժին՝ կրկնելու նախկինում տված ցուցմունքները:
6. **Փաստերի հավաքման թերություններ, մանրակրկիտ արձանագրություններ չկազմելը**. Ի լրումն վերը նշված հարցաշարերի պատասխանների, ԿԱԿ-ի մասնագետները հարցազրույցների ժամանակ նշել են, որ ոստիկանության արձանագրությունները հաճախ թերի են և ոչ հստակ տեղեկություններ են պարունակում դեպքերի վերաբերյալ, ինչը խոչընդոտ է գործի հաջող քննության համար:

Ներկայացված արդյունքները վկայում են ոստիկանության աշխատակիցների գործելակերպում բարելավումների անհրաժեշտության մասին: Հայաստանում ոտնձգության ենթարկված անձանց կողմից բողոքները այդքան հաճախ հետ վերցնելու պատճառները վերլուծելիս պետք է հաշվի առնել, որ ոտնձգության ենթարկված անձինք ոստիկանության հետ շփումների ընթացքում (ինչպես երևում է վերը ներկայացված արդյունքներից) բախվել են դատողական և կարծրատիպային վերաբերմունքի, ընդ որում ոստիկանության աշխատակիցները երբեմն ակտիվորեն հուսահատեցրել են նրանց, նվազեցրել բռնության լրջությունը կամ արդարացրել այն: Նման ուղերձները կարող են ազդել ոտնձգության ենթարկված անձանց վրա և խաթարել նրանց վստահությունը ոստիկանության նկատմամբ: Ավելին, ոստիկանության աշխատակիցների քննադատական մոտեցումը կարող է ոտնձգության ենթարկված անձանց հուսալքել՝ իրավական քայլերը շարունակելու և դատարանում արդարադատություն փնտրելու, կամ որևէ կառույցից օգնություն և աջակցություն խնդրելու առումով: Ստորև ներկայացված դեպքը, որը ներկայացրել էին ԿԱԿ-ի մասնագետները, ոստիկանության նման մոտեցման օրինակ է: Այն միտված չէ ոստիկանության գործելակերպի մասին ընդհանուր պատկերացում կազմելուն, քանի որ համապատասխան եզրակացությունները չեն կարող ընդհանրացվել, այլ ընդամենը լուսաբանում են տեղի ունեցածը:

Օրինակ. Գործի համառոտ նկարագրություն. «բռնության ցիկլ»

«Ոտնձգության ենթարկված անձը բռնությունից խուսափելու համար փախել էր տնից: Դեպքի մասին ոստիկանություն հաղորդում ներկայացնելիս նրա ձեռքը կոտրված էր՝ ամուսնու կողմից դատան ծեծի հետևանքով: Ոստիկանությունը նախազգուշացում էր կիրառել և՛ ոտնձգության ենթարկված անձի, և՛ նրա ամուսնու նկատմամբ և ոտնձգության ենթարկված անձին հետ էր պահել որևէ բողոք ներկայացնելուց: Կանանց աջակցման կենտրոնը ոտնձգության ենթարկված անձին տրամադրել էր իրավական և հոգեբանական աջակցում, և հետագայում, օրենքին համապատասխան, անհետաձգելի միջամտության որոշում էր կայացվել: Կենտրոնի աշխատակիցները նշել են, որ ոտնձգողի հարազատն աշխատել է ոստիկանությունում, և նրա «միջամտության» պատճառով ոստիկանները կողմնակալ ձևով են մոտեցել դեպքին: Միջամտությունների ընթացքում ոստիկանները փորձել են հաշտեցնել ոտնձգության ենթարկված անձի և ոտնձգողի հետ, նվազեցրել և արդարացրել են բռնությունը՝ ոտնձգության ենթարկված անձի և մեղադրելով «ընտանիքը քանդելու» մեջ և անելով այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «եթե չհաշտվեք կարող եք այլևս երեխաներին չտեսնել», «նա ապահովում է երեխաների կյանքը, ուզում եք, որ երեխաներն առանց հո՞ր պարեն»:

Կանանց աջակցման կենտրոնի իրավաբանների օգնությամբ ոտնձգության ենթարկված անձը ստացել է տեսակցության իրավունք, սակայն յուրաքանչյուր տեսակցության ժամանակ նա կրկին բռնության է ենթարկվել ամուսնու կողմից: Երեխաների նկատմամբ խնամակալության հաստատման դործընթացը երկար է տևել, և ամուսինը ոտնձգության ենթարկված անձի սպառնացել է, որ նա երբեք չի տեսնի երեխաներին: Ամուսնու նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում. թեև ոտնձգության ենթարկված անձը երկար տարիներ ենթարկվել է ընտանեկան բռնության, գործը հարուցվել է միայն բռնության վերջին դեպքի առնչությամբ: Որոշ ժամանակ անց ոտնձգության ենթարկված անձը որոշել է հետ վերցնել իր բողոքը: Ի վերջո, ոտնձգության ենթարկված անձը վերադարձել էր ամուսնու մոտ»:

Կանանց աջակցման կենտրոն, Երևան

4.4. Ինչպե՞ս են կատարվում նախազգուշացումները և անհետաձգելի միջամտության որոշումները

ԸԲ օրենքի համաձայն՝ ոստիկանության ծառայողները պատասխանատու են պաշտպանության երկու միջոցների կիրառման համար՝ նախազգուշացումների (հոդված 6) և անհետաձգելի միջամտության որոշումների (հոդված 7): Նրանց հանձնարարված է նաև հսկել և վերահսկել այդ միջոցների իրականացումը: ԿԱԿ-ի մասնագետները տեղեկություն չունեին վերլուծված դեպքերում ոտնձգողների նկատմամբ տրված նախազգուշացումների ճշգրիտ քանակի մասին, սակայն ասացին, որ ընդհանուր առմամբ, ելնելով իրենց պրակտիկայից, **նախազգուշացումները շատ հաճախ են կիրառվում:** Նրանց գնահատականները համահունչ են այս ուսումնասիրության մեջ ավելի վաղ ներկայացված այլ արդյունքներին (տես՝ Ոստիկանության կողմից նախազգուշացումների և անհետաձգելի միջամտության որոշումների կատարման վերաբերյալ եզրակացությունները):

ԱՄՈ. վերլուծված 86 դեպքերից 41-ում կայացվել է ԱՄՈ (դրանցից հինգում՝ նույն ոտնձգողի նկատմամբ տարբեր ժամանակահատվածներում կայացվել է երկու ԱՄՈ): ԿԱԿ-ի կողմից տրամադրված հարցաշարերի պատասխանները ցույց են տալիս նախազգուշացումների և ԱՄՈ-ների կիրառման հետ կապված հետևյալ խնդիրները.

1. ԸԲ օրենքի համաձայն՝ ոստիկանությունը առաջին անգամ հաղորդվող բռնության դեպքի պարագայում իրավասու է որոշել կիրառել նախազգուշացում՝ ԱՄՈ-ի հիմքերի բացակայության դեպքում նախազգուշացում :
2. Առկա տվյալները վկայում են, որ **ոստիկանությունը հաճախ մանրակրկիտ չի քննում գործերը.** պատշաճ կերպով չի կիրառում ռիսկերի գնահատման ձևը, հաշվի չի առնում ոտնձգության (երկարատև) պատմության հետ կապված փաստերը, ինչպես նաև երբեմն հաշվի չի առնում նախկինում տեղի ունեցած լուրջ միջադեպերի փաստերը, օրինակ՝ ոտնձգության ենթարկված անձին խեղդամահ անելու փորձերը: Նման խնդիրների պատճառով ԿԱԿ-ի մասնագետները հարցաշարերում բացատրել են, որ իրենց կարծիքով

որոշ դեպքերում ԱՄՌ-ի փոխարեն ոստիկանության ծառայողները նախազգուշացում են կիրառում, թեև ԱՄՌ-ն առավել տեղին կլիներ: Նախազգուշացման կիրառումը որպես հետագա չարաշահումները կանխելու առաջին քայլ, կարող է նպատակահարմար չլինել կամ նույնիսկ վատ հետևանքներ ունենալ, ոտնձգության ենթարկված անձանց թողնելով առանց անհրաժեշտ պաշտպանության: Յետևաբար, անհրաժեշտ են բարելավումներ նախազգուշացումների/ԱՄՌ-ների կիրառումը կարգավորող ընթացակարգերում:

3. Ուսումնասիրվել է կիրառվող ԱՄՌ-ի տեսակը: Ուտնձգողին **տանից հեռացնելը շատ հազվադեպ է կիրառվել (միայն երկու դեպքում)**: Դեպքերի մեծամասնությունում ԱՄՌ-ները նախատեսում էին ոտնձգության ենթարկված անձի հետ հաղորդակցության արգելք (ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետ) և ոտնձգության ենթարկված անձին և նրա երեխաներին/նրա խնամքի տակ գտնվող անձանց մոտենալու արգելք (ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ): ԱՄՌ-ի տրամադրման գործընթացում հաշվի չեն առնվել ոտնձգողի վերահսկիչ վարքագծի կամ նրա կողմից հոգեբանական բռնության որևէ ձևի դրսևորման հանգամանքը:
4. Առկա տվյալների հիման վրա հնարավոր չի եղել եզրակացնել, թե գործնականում որ չափանիշների վրա են ոստիկանության ծառայողները հիմնվել ԱՄՌ կայացնելիս, այսինքն՝ արդյո՞ք դրա համար պահանջվել է լուրջ կամ նույնիսկ կյանքին սպառնացող բռնության վտանգ: Այս առումով, իշխանությունները կարող են հաշվի առնել ԳՐԵՎԻՌ-ի (2022 թ. 463-464 կետեր) հանձնարարականն առ այն, որ **անհետաձգելի սահմանափակման որոշումները** (ինչպես դրանք կոչվում են Ստամբուլի կոնվենցիայում) **կայացվում են անմիջական վտանգի դեպքում**: Սա չի ենթադրում, որ պետք է առկա լինի կյանքին սպառնացող կամ բռնության այլ լուրջ դրսևորում, ինչը վտանգի առկայությունն անընդունելի բարձր շեմ է ենթադրում: Ուստի, ԱՄՌ կարող է կայացվել նաև բռնության ավելի թեթև դրսևորումների դեպքում: Երկրորդ, դրանք չպետք է կախված լինեն ոտնձգության ենթարկված անձի կամքից և պետք է կայացվեն **ex officio**, որպես պետական սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված բռնության ցանկացած դրսևորում կանխելու պետական պարտականության մաս:
5. Երբեմն **ԱՄՌ-ները անմիջապես չէին կայացվել**, ընդ որում որոշ դեպքերում ոտնձգության ենթարկված անձի և պատճենը չէր տրամադրվել: Պատճենը միայն ԿԱԿ-ի փաստաբանների պնդմամբ է տրվել ոտնձգության ենթարկված անձին: Բացի այդ, ոստիկանության աշխատակիցները ԿԱԿ-ին չէին տեղեկացրել ԱՄՌ-ների կայացման մասին, ինչպես պահանջում է ԸԲ օրենքը:
6. **Նախազգուշացումների և ԱՄՌ-ների կատարումը ոստիկանության կողմից վատ է հսկվել/վերահսկվել: Թեև** ԸԲ օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ մասը պահանջում է որ ԱՄՌ-ներում Նշվեն ԱՄՌ-ի խախտման համար օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, սակայն որոշ դեպքերում դրանք չեն Նշվել: Ոստիկանության կողմից ոչ բավարար հսկողության/վերահսկողության պատճառով հնարավոր չէ երաշխավորվել, որ ԱՄՌ-ները կարող են հասնել իրենց նպատակին:

Ուսումնասիրության ներքո դիտարկվում են նաև դատարանի կողմից կայացվող պաշտպանական որոշումները: Սակայն ԿԱԿ-ի կողմից արձանագրվել է միայն ութ դեպք, երբ ոտնձգության ենթարկված անձը դիմել է պաշտպանական որոշում ստանալու համար, և այդ որոշումը դատարանի կողմից կայացվել է: Դրանցից յոթի դեպքում ԿԱԿ-ն աջակցել է ոտնձգության ենթարկված անձի և դիմելու գործընթացում՝ փաստաթղթերը կազմելով: Մի դեպքում ոտնձգողը խախտել էր պաշտպանական որոշման պահանջները: ԱՄՌ-ի կամ պաշտպանական որոշման խախտման համար որևէ սանկցիա չի կիրառվել, թեև այս կապակցությամբ նախաձեռնվել են մի քանի գործեր (տես հաջորդ բաժինը):

4.5. Կանանց համար արդարադատության մատչելիությունը. քրեական արդարադատության ոլորտի արձագանքը

Դեպքի հակիրճ նկարագրությունը՝ ֆեմիցիդ/գենդերային հիմքով սպանություն. արդյո՞ք կնոջ կյանքը հնարավոր էր փրկել

«Կինը, որն ունեցել է երեք երեխա, 20 տարի շարունակ ենթարկվել է ընտանեկան բռնության: Նա լքել էր ամուսնուն և իր հետ տարել էր երեխաներին. Այնուհետև նա զանգահարել էր ոստիկանություն, որը կայացրել էր անհետաձգելի միջամտության որոշում՝ 20 օր ժամկետով: Սակայն ոտնձգողը բազմիցս խախտել էր այդ որոշումը և ոտնձգության ենթարկված անձի ուղարկել լուրջ սպառնալիքներ պարունակող հաղորդագրություններ, ով այդ մասին հայտնել էր ոստիկանությանը:

Մեկ դրվագում ոտնձգողը ասորճանակից կրակել էր ավագ որդու ուղղությամբ: Ոստիկանները ոչինչ չէին արել, իրավախախտին նույնիսկ ձեռնաշղթաներ չէին հագցրել: Ոստիկանությունը ոտնձգության ենթարկված անձի ն առաջարկել էր քրեական վարույթ նախաձեռնելու հայցով դիմել դատարան, ինչը նա արել էր: Սակայն քննիչները անտեսել էին նրա բողոքները և ամիսներ շարունակ հետաձգել գործը՝ պատճառաբանելով, որ քննությունը դեռ ընթացի մեջ է:

Մի օր ոտնձգողը, ով այդպես էլ պատասխանատվության չէր ենթարկվել իր բռնության համար և չէր առերեսվել իշխանությունների հետ, գնացել էր իրենց տուն և նռնակով պայթեցրել իրեն և ոտնձգության ենթարկված անձի ն՝ որի հետևանքով երկուսն էլ մահացել էին»:

Կանանց աջակցման կենտրոն, Երևան

Ընտանեկան բռնության այս դեպքը հանգեցրել էր կնոջ սպանության: Ամուսնու դեմ գործն ուղարկվել էր դատարան, սակայն ԿԱԿ-ը վարույթի մասին տեղեկություններ չունի: Դեպքի նկարագրությունը վկայում է ոստիկանության և իրավաբանների արձագանքի լուրջ թերությունների մասին:

Չարց կարող է առաջանալ, թե արդյո՞ք ֆեմիցիդի/գենդերային հիմքով սպանությունների զոհերից գոնե մի քանիսը կարող էին փրկվել: Որևէ մեկ առանձին գործողությամբ ֆեմիցիդը կանխել հնարավոր չէ, սակայն քրեական արդարադատության ոլորտը կարող է ուղերձ հղել, որ ընտանեկան բռնության հանդեպ հանդուրժողականություն չի դրսևորվելու: Այս բաժնում անդրադարձ է կատարվելու ընտանեկան բռնության (լուրջ) դեպքերի առնչությամբ քրեական արդարադատության ոլորտի արձագանքին: Չայաստանում առկա տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս գործերով քրեական վարույթների մեծամասնությունը ոտնձգողի նկատմամբ որևէ իրավական պատասխանատվության միջոցի չի հանգեցնում: Այս բաժնում ուսումնասիրվում է, թե երբ, ինչպես և ինչու են գործերը դադարեցվում կամ այլ կերպ «կորում» քրեական արդարադատության գործընթացում:

Ընդհանուր առմամբ **վերլուծվել է 64 քրեական գործ**⁴¹: Գործերը վերաբերում էին կանանց, ովքեր 2018 թվականի հոկտեմբերից մինչև 2021 թվականի դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում առաջին անգամ դիմել էին Երևանի Կանանց աջակցման կենտրոն՝ օգնություն խնդրելու: Բռնարարը եղել է ամուսինը/քաղաքացիական ամուսինը, իսկ երկու դեպքում՝ ոտնձգության ենթարկված անձի որդին: Ոտնձգության ենթարկված անձանց օգնել էին ընտանեկան բռնության մասին մասնագիտացված գիտելիքներ ունեցող իրավաբանները, ԿԱԿ-ի սոցիալական աշխատողները և այլ մասնագետները: Չեղանբար, Չայաստանում ոտնձգության ենթարկված այլ անձանց համեմատ աջակցության մակարդակը շատ ավելի բարձր էր:

- **Գործերի մեծ մասը (40) քննվել/քրեականորեն հետապնդվել է ծեծի հատկանիշով՝ 2003 թ.-ի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով**⁴²: Երկու դեպքում, գործի քննությունը/քրեական հետապնդումը, բացի ծեծի հոդվածից իրականացվել է մի քանի այլ քրեական հոդ-

41 Մի քանի ոտնձգողների նկատմամբ երկու կամ նույնիսկ երեք քրեական գործ է հարուցվել. յուրաքանչյուր դեպք հաշվառվել է առանձին:

42 118-րդ հոդվածի համաձայն՝ ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:


վածներով (117, 137, 147, 113 հոդվածներ): Այլ գործերը քննվել են հետևյալ հոդվածներով.

- չորս գործ՝ 117-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը)
- չորս գործ՝ 353 հոդվածի 1-ի կետով (անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումը դիտավորյալ չկատարելը): Քանի որ այս իրավախախտումը կապված է ԱՄՌ-ի կամ պաշտպանական որոշման խախտման հետ, հարկ է նաև նշել, որ այդ խախտումները կատարվել են բազմիցս.
- երեք գործ՝ 119-րդ հոդվածով (ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելը, դրանցից մեկում՝ նաև 117-րդ հոդվածով).
- երեք գործ՝ 137-րդ հոդվածով (Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք, դրանցից մեկում՝ նաև 112 և 113-րդ հոդվածներով).
- երկու գործ՝ 113-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը)
- երկու գործ՝ 131-րդ հոդվածով (մարդուն առևանգելը); դրանցից մեկում՝ նաև 34-138(1) հոդվածով (բռնաբարության փորձ):.
- Մեկ գործ կապված էր հետևյալներից յուրաքանչյուրի հետ.
- Հոդված 104 (սպանություն)
- Հոդված 110 (ինքնասպանության հասցնելը)
- Հոդված 34-104 (սպանության փորձ)
- Հոդված 34-138, մաս 1 (բռնաբարության փորձ)
- Հոդված 140 (սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը)
- Հոդված 112 (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, նաև 113 և 137-րդ հոդվածներով)
- Հոդված 113 (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը)
- Հոդված 147 (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը):

4.6. Հետաքննության, նախաքննության կամ դատարանում գործի քննության ընթացքում հայտնաբերված թերությունները

Վերլուծված քրեական գործերից շատերը կարճվել են ոտնձգության ենթարկված անձի կողմից բողոքը հետ վերցնելու կապակցությամբ: Ուսումնասիրության շրջանակներում ավելի մանրամասն վերլուծության ենթարկվեցին գործերի կարճման բարձր մակարդակի հնարավոր պատճառները: Վերլուծության արդյունքները ներկայացված են գծապատկեր 15-ում:

Գծապատկեր 15. Ոստնձգության ենթարկված անձի կողմից բողոքը հետ վերցնելու որոշման պատճառները



Ուսումնասիրվել է նաև իրավակիրառողների գործելակերպը՝ նախաքննության և գործի քննության փուլում (այդ թվում՝ նախաքննության մեջ ներգրավված ոստիկանության ծառայողների, քննիչների, դատախազների և դատավորների):

Աղյուսակ 40. Ընտանեկան բռնության, հետևանքների և լրջության նվազեցում, հոգեբանական բռնության և երեխաների կողմից բռնության ականատես լինելու հետևանքները

Ոստնձգության ենթարկված անձի և չեն ուղարկել հոգեբանական գնահատման՝ նախկինում կատարված բռնության հետևանքները պարզելու համար	36
Ոստնձգության, պարտադրանքի և սպառնալիքների հոգեբանական ազդեցության դիսամիկան հաշվի չի առնվել	34
Ոստնձգության ենթարկված անձի հուզական վիճակին կամ նրա վախերին ուշադրություն չի դարձվել	32
Չեն կիրառվել ընտանեկան բռնությանն ականատես լինելու պատճառով երեխաների հոգեբանական տրավմայի գնահատման մեխանիզմները	34
Ոստնձգողի կողմից հարկադրանքը և ոստնձգության ենթարկված անձի նկատմամբ վերահսկողությունը հաշվի չի առնվել	26

Աղյուսակ 41. Ոստիկանության աշխատակցի կողմից ակնարկելը, որ ոստնձգության ենթարկված անձի և ոստնձգողի միջև հաշտեցումը նախընտրելի տարբերակ է


«Նա ձեր ամուսինն է, ներքե նրան ևս մեկ անգամ»	26
«Ավելի լավ է միասին մնաք և ընտանիքը չքանդեք»	27
«Ի՞նչ եք անելու առանց տղամարդու»	22
«Ուզում եք, որ ձեր երեխաներն առանց հո՞ր ապրեն»	15

Աղյուսակ 42. Մեղադրական/քննադատական վերաբերմունք, կողմնակալություն և կարծրատիպեր

Ոստնձգության ենթարկված անձին մեղադրող վերաբերմունք. ոստնձգության ենթարկված անձը մեղադրվում է ոստնձգողին «սադրելու» համար	30
Ոստնձգության ենթարկված անձը մեղադրվում է «պասիվ լինելու» և «ավելի շուտ չհեռանալու» համար	30

Կանանց նկատմամբ կարծրատիպային վերաբերմունք, օրինակ՝ «կինը պետք է հնազանդ լինի»	29
Հարցաքննության ժամանակ այնպիսի տպավորության ստեղծում, որ ԸԲ-ի համար «կինն է մեղավոր»	28
Ոտնձգության ենթարկված անձի ցուցմունքը դիտարկվել է որպես «ոչ արժանահավատ», քանի որ «կանայք հաճախ ստում են»	25
Ընտանեկան բռնության արդարացում	13
Եթե ոտնձգության ենթարկված անձը մի քանի անգամ հեռացել է բռնարարից է և հետ վերադարձել՝ համարվում է, որ նա «արժանի չէ պետական կառույցների օգնության»	8

Գծապատկեր 16. Ոտնձգության ենթարկված անձի՝ դատական գործընթացը չչարունակելու առումով հուսահատեցում՝



Ուսումնասիրվել է նաև, թե արդյոք դատախազները կիրառել են քրեական գործ հարուցելու հնարավորությունը (նախատեսված է մինչ 2022 թ.-ի հուլիսի 1-ը ուժի մեջ եղած Քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասով), եթե ոտնձգության ենթարկված անձը չի կարողացել պաշտպանել իր օրինական շահերը անօգնական վիճակի կամ ենթադրյալ ոտնձգողից կախված լինելու պատճառով, և եթե այո, ապա որքան հաճախ:⁴³ ԿԱԿ-ը մեզ տեղեկացրեց, որ դատախազությունը **կիրառել էր այդ դրույթը հինգ դեպքերում**, ինչպես նաև որ համակարգված ձևով չի ստուգվել՝ արդյոք ոտնձգության ենթարկված անձինք գտնվում են անօգնական վիճակում կամ տնտեսապես կախված են բռնարարից:

Ուսումնասիրված գործերի մեծ մասը դատարան չի հասել, ուստի դատական իշխանության արձագանքի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ արդյունքները սակավ են: ԿԱԿ-ի գնահատմամբ դատավորը երբեմն կարծրատիպային կամ ոտնձգության ենթարկված անձի ն մեղադրող հայտարարություններ է անում: Դատական վարույթի ընթացքում ոտնձգության ենթարկված անձանց և նրանց երեխաների պաշտպանության հետ կապված լուրջ խնդիրներ չեն արձանագրվել: Երկու դեպքում առցանց հարցաքննություն կազմակերպելու փաստաբանների դիմումը մերժվել է (հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2020 թվականի հունիսից փոփոխված 209.1 հոդվածի վրա): Քրեական դատավարության արդյունքները համառոտ ներկայացված են Ադյուսակ 43-ում:

43 Ինչպես ավելի վաղ նշվել է ուսումնասիրության մեջ, Քրեական դատավարության օրենսգրքի այս դրույթը (որը գործում էր մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը), սահմանում էր, որ անկախ ոտնձգության ենթարկված անձի/բռնության ենթարկված անձի կողմից բողոք ներկայացնելուց, 183-րդ հոդվածի մասով նախատեսված հանցագործությունների դեպքում դատախազն իրավասու է հարուցել ընտանեկան բռնության հատկանիշով քրեական գործ, եթե անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցագործություն կատարած անձից կախված լինելու պատճառով ոտնձգության ենթարկված անձը չի կարող պաշտպանել իր օրինական շահերը: Նման դեպքերում քրեական գործը հարուցվում և քննվում է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր ընթացակարգով, ընդ որում տուժողի և մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում:

Աղյուսակ 43: Քրեական դատավարության արդյունքները

Քրեական դատավարության փուլ	Գործերի քանակ
Նախաքննությունը դեռ շարունակվում է (ներառյալ այն դեպքերը, երբ հանցագործությունը վերաորակվել է, կամ ոտնձգողի կողմից կատարվել է նոր հանցագործություն)	9
Գործը դադարեցվել է ոտնձգության ենթարկված անձի կողմից բողոքը հետ վերցնելու պատճառով	23
Գործը դադարեցվել է անբավարար ապացույցների պատճառով	4
Մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (այդ թվում՝ այն գործերը, որոնցով դատական նիստ դեռևս չի անցկացվել)	11
Գործը դադարեցվել է դատարանում՝ հաշտության պատճառով	6
Գործը դադարեցվել է դատարանում՝ վաղեմության ժամկետն անցնելու պատճառով	1
Դատարանում կայացված դատավճիռ՝ արդարացում	2
Դատարանում կայացվել է հետևյալ դատավճիռը.	5
Մեղադրյալը դատապարտվել է ազատազրկման	1
Մեղադրյալը տուգանվել է	3
Սահմանվել է պայմանական ազատազրկում՝ վեց ամիս ժամկետով՝ մեկ տարի փորձաշրջանով	1

4.7. Եզրակացություններ՝ քրեական արդարադատության ոլորտի արձագանքը

- Այս մասի արդյունքները համահունչ են այս ուսումնասիրության այլ մասերի արդյունքներին, որոնք ցույց են տալիս, որ ընտանեկան բռնության հետ կապված հարուցված քրեական վարույթներից շատերը **Նախաքննությանից** այն կողմ չեն անցնում:
- Չորս տարվա ընթացքում հարուցված 64 քրեական գործերից միայն 7-ն են հանգեցրել մեղադրական դատավճիռի:** Մեղադրյալներից երկուսն արդարացվել են: Մեղադրյալներից միայն մեկն է դատապարտվել ազատազրկման (դատապարտվել է 137 հոդվածով՝ սպանության, առողջությանը կամ գույքին ծանր վնաս պատճառելու սպառնալիք): Այս առանձնահատուկ դեպքի հետագա վերլուծության արդյունքում պարզվել է, որ կինը 16 տարի շարունակ ընտանեկան բռնության է ենթարկվել ամուսնու կողմից, այդ թվում՝ հղիության ընթացքում: Մեղադրյալներից մեկը 113-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) պայմանական ազատազրկման է դատապարտվել վեց ամիս ժամկետով՝ մեկ տարի փորձաշրջանով: Մեղադրյալներից երեքը տուգանվել են՝ մեկը՝ Քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով (բնակավայրի անձեռնմխելիությունը խախտելը), տուգանքը կազմել է 50.000 ՀՀ դրամ (մոտ 122 եվրո): Նրանցից մեկը տուգանվել է ոտնձգության ենթարկված անձին ծեծելու համար (հոդված 118), գանձված գումարը՝ 100.000 ՀՀ դրամ (մոտ 244 եվրո): Ես մեկ մեղադրյալ տուգանվել է անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումները բազմաթիվ անգամ) խախտելու համար (Քրեական օրենսգրքի 353.1 հոդվածով), տուգանքի գումարը կազմել է 400.000 ՀՀ դրամ (մոտ 979 եվրո): Արդյունքները վկայում են տուժողներ համար արդարադատության մատչելիության լուրջ խնդիրների և դատարանների մեղմ պատժիչ քաղաքականության մասին: Բացի այդ, դատական գործընթացները՝ նախաքննության փուլից մինչև առաջին ատյանի դատարանի որոշում, երկար են տևում, հիմնականում՝ 2-3 տարի: Երկարատև վարույթը, հանգեցնում է ոտնձգության ենթարկված անձանց կրկնակի վիկտիմիզացիայի բարձր մակարդակի:

3. **Տուգանքները չեն կարող դիտվել որպես ընտանեկան բռնության դեմ կանխարգելիչ պատժամիջոց:** Դրանք չափազանց հազվադեպ են կիրառվում, ինչն էլ հարցեր կարող է առաջացնելով դրանց նպատակահարմարության վերաբերյալ: Ստամբուլի կոնվենցիան (48-րդ հոդվածի 2-րդ մաս) պահանջում է, որ մասնակից պետությունները երաշխավորեն, որ ոտնձգողին պարտադրված ցանկացած տուգանք չպետք է անուղղակիորեն հանգեցնի ոտնձգության ենթարկված անձի ֆինանսական դժվարություններին և այդպիսով անուղղակի պատիժչհանդիսանա ոտնձգության ենթարկված անձի համար (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 253): Ինչպես պարզվեց ուսումնասիրության ընթացքում, ոտնձգության ենթարկված անձանցից շատերը տնտեսապես կախված էին ոտնձգողից և, հետևաբար, կարող էին անուղղակիորեն պատժվել իրենց նկատմամբ կատարված բռնության համար:
4. Ինչպես երևում է (Ադյուսակ 43), 23 քրեական գործ (64-ից) կարճվել է ոտնձգության ենթարկված անձի կողմից բողոքը հետ վերցնելու պատճառով: **Ex officio** քրեական հետապնդման բացակայությունը կարևոր գործոններից մեկն է, որը նպաստում է վերը նկարագրված դատական անբավարար արդյունքներին: Ինչպես նշվել է ԳԲԵՎԻՈՒ-ի զեկույցում (2022թ., 479-480 կետեր), Ստամբուլի կոնվենցիայի 55-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական բռնության, սեռական բռնության, ներառյալ բռնաբարության, հարկադիր ամուսնության, ԿՍՕՄ-ի և պարտադրված հղիության արհեստական ընդհատման կամ ամլացման քննությունը կամ քրեական հետապնդումը չպետք է ամբողջությամբ կախված լինեն ոտնձգության ենթարկված անձի կողմից ներկայացված հաղորդումից կամ բողոքից և դատավարությունը կարող է շարունակվել նույնիսկ այն դեպքում, եթե ոտնձգության ենթարկված անձը հետ վերցնի իր բողոքը⁴⁴: Վերոհիշյալ իրավախախտումների մասով գործի քննությունը և վարույթը չպետք է ոտնձգության ենթարկված անձի վրա դնեն նման վարույթ հարուցելու և դատավճիռ կայացնելու ապահովման բեռը՝ ելնելով այդ իրավախախտումների առանձնահատուկ տրավմատիկ բնույթից (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 279):
5. **Ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը (ընդհանուր 64 դեպքից 40-ը) քննվել/քրեորեն հետապնդվել են 118-րդ հոդվածով**, որը սահմանվում է որպես բռնի գործողությունների կատարում, որոնք չեն հանգեցրել թեթև վնասվածքների (ինչպես նախատեսված է 117-րդ հոդվածով): Իրավաբան-փորձագետների պարզաբանմամբ (Mann 2019) Հայաստանի Վճռաբեկ դատարանը համարել է «որ ծեծը ոտնձգության ենթարկված անձի և բազմաթիվ (մեկից ավելի) հարվածներ հասցնելն է, որը հանգեցրել է ֆիզիկական ցավի»:⁴⁵ Այսպիսով, ծեծը բռնություն ենթադրող հանցագործության նվազագույն շեմն է, որին չբավարարող արարքը քրեորեն հետապնդվել չի կարող (նույն տեղում):
6. Այս եզրակացությունները համահունչ են սույն ուսումնասիրության այլ մասերում ներկայացված տվյալներին, որոնք ցույց են տալիս, որ ԸԲ դեպքերի առնչությամբ ամենից հաճախ վկայակոչվում է 2003 թ.-ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը: Ինչպես պարզաբանել են Եվրախորհրդի իրավաբան փորձագետները՝ վերլուծելով ԸԲ և համապատասխան դատախարակական պրակտիկայի հետ կապված քրեական դրույթները (Truchero 2017), Հայաստանի օրենսդրությունում ԸԲ հանցագործության սահմանված չլինելու պարագայում անձի առողջությանը վնաս պատճառելուն վերաբերող դրույթները շարունակում են հանդիսանալ այն հիմնական հանցանքները, որոնց համար ԸԲ գործադրողը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել: Հայաստանի քրեական օրենսդրությունը պետք է առնվազն ապահովի, որ ծեծը (հոդված 118) չօգտագործվի որպես ԸԲ գործեր մեծ մասի համար «ստանդարտ արձագանք» (նույն տեղում): Հաշվի առնելով իրավաբան փորձագետների նկատառումները՝ կարևոր է ընդգծել, որ ուսումնասիրության այս բաժնում վերլուծված 64 քրեական գործերից **միայն մեկով է այս հոդվածով քրեական գործ հարուցվել**, որի արդյունքում մեղադրյալը դատապարտվել է և տուգանվել (մոտ 94 եվրոյի համարժեք գումարով): ԿԱԿ-ի գործընկերները բացատրեցին, որ այս հոդվածի համաձայն գործերը հաճախ հարուցվում են ընտանեկան բռնության վերջին դրվագի կամ վերջին երկու դրվագների առն-

44 Թեև Ստամբուլի կոնվենցիայի 78-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները կարող են վերապահում կատարել 55-րդ հոդվածի 1-ին մասի նկատմամբ կապված 35-րդ հոդվածով սահմանված ֆիզիկական բռնության՝ ֆիզիկական բռնության թեթև դրսևորումների հետ:

45 Տե՛ս Վճռաբեկ դատարանի հ. ԱՐԴ/0176/01/11, գործ Արևիկ և Ծովինար Սահակյանների, 1 նոյեմբերի 2012 թ., պարբերություն 18:

չությամբ, թեև բռնությունը տևել է տարիներ շարունակ: Ինչպես նշեցին ԿԱԿ-ի մասնագետները, տևականության հանգամանքը (բռնության նախորդ պատմությունը) դատական պրակտիկայում հաշվի չի առնվում: Truchero (2017) աշխատությունում վերլուծությունը նույնպես վկայում է, որ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը (Ծեծը), ը կետորոնացած է «առանձին դրվագների», այլ ոչ թե երկարատև ժամանակահատվածում մի շարք բռնի գործողությունների վրա, հետևաբար ԸԲ դեպքերի մեծամասնության դեպքում կիրառելի չէ: Մասնավորապես, Truchero-ն (նույն տեղում) պարզաբանում է, որ դատական պրակտիկայում արարքը ծեծ որակելու համար (118-րդ հոդվածի համաձայն), վարքագիծը պետք է պարունակի բռնության երկու կամ ավելի գործողություն: Արևիկ և Ծովիևար Սահակյանների գործով Վճռաբեկ դատարանը փաստացիորեն արձանագրել է «ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ծեծը ոտնձգության ենթարկված անձի և բազմաթիվ (մեկից ավելի) հարվածներ հասցնելն է՝ հանգեցնելով ֆիզիկական ցավի»: Truchero-ն (նույն տեղում) եզրակացնում է, որ «հանցակազմի նման կառուցումը չի կարողանում ընդգրկել ընտանեկան բռնության դեպքերը բնութագրող այն տարրերը, որոնք սովորաբար ներառում են երկար ժամանակի ընթացքում մի շարք գործողություններ, որոնցից յուրաքանչյուրն ինքնին չի կարող պատժվել (օրինակ՝ մեկ ապտակ): Բռնությանը իրավական արձագանքը Հայաստանում հիմնված է հանցավոր գործողության ավանդական ընկալման վրա, որը կետորոնացած է առանձին իրադարձությունների միջև պատճառահետևանքային կապի վրա: Այս մոտեցումը չափազանց դժվար է դարձնում արդյունավետորեն հետապնդելու վարքագծի այնպիսի դրսևորումները, որոնք ներառված են ընտանեկան բռնության սահմանման մեջ»: Այլ իրավական փորձագետներն (Հակոբյան 2016թ.) նույնպիսի եզրակացությունների են հանգել ԸԲ դեպքերի քրեական օրենսդրության և դատական պրակտիկայի առնչությամբ՝ ընդգծելով, որ հանցագործությունը որակելիս հաշվի չի առնվում կրկնվող ընտանեկան բռնությունը: Մեղադրական եզրակացությունում ճանաչվում է միայն այն արարքը, որի մասին հաղորդվել է ձերբակալությունից անմիջապես առաջ և որն ապացուցված է «իրեղեն ապացույցներով», օրինակ՝ բժշկական եզրակացությամբ: Բազմաթիվ են դեպքերը, երբ նախկինում գործադրված ֆիզիկական և հոգեբանական բռնությունը չի ազդել դեպքի որակման վրա, և բռնություն գործադրողին մեղադրել են բռնության միայն մեկ դրվագում» (նույն տեղում):

7. ԸԲ գործերը հազվադեպ են հարուցվում հոգեկան տառապանքի հետ կապված կիրառելի դրույթի հատկանիշներով (2003 թ.-ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդված): Իրավաբան փորձագետները պարզաբանել են, որ **Քրեական օրենսգրքը չի սահմանում «հոգեկան տառապանքը», իսկ 119-րդ հոդվածում բացակայում է որևէ հղում այն միջոցներին կամ գործողություններին, որոնք ոտնձգողը կարող է կիրառել այդ հոդվածով նախատեսված տառապանքին հասնելու համար:** Նման անորոշությունը խոչընդոտում է այս դրույթի կիրառմանը: Բացի այդ, 119-րդ հոդվածի ձևակերպումը հանգեցնում է միայն մեկուսացված միջադեպերի դիտարկմանը, մինչդեռ Ստամբուլի կոնվենցիայի 33-րդ հոդվածը, որը կոչվում է «Հոգեբանական բռնություն» նպատակ ունի բացահայտելու ժամանակի ընթացքում ընտանիքում կամ ընտանիքից դուրս տեղի ունեցող բռնարար վարքագծի հանցավոր բնույթը: Հետևաբար, 119-րդ հոդվածն ընտանեկան բռնության դեպքերում անարդյունավետ է, երբ շարունակական սահաբեկումը, տնտեսական բռնությունը կամ հարկադրանքը կարող են մեկնաբանվել որպես «պահանջվող արդյունքը (հոգեկան տառապանք) ապացուցելու տեսանկյունից ոչ կիրառելի»:
8. Դատական արդյունքների վերաբերյալ եզրակացությունները (ինչպես ներկայացված է Ադյուսակ 43-ում) ցույց են տալիս, որ **դատաիրավական պրակտիկայում՝ քրեական հետապնդում իրականացնելու համար կիրառվող դրույթները, չեն համապատասխանում ընտանեկան բռնությանը արդյունավետ արձագանքելու նպատակին:** Օրինակ՝ Քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածը, որը վերաբերում է սպանության սպառնալիքին, պահանջում է այդ սպառնալիքի հնարավոր իրականացման իրական վտանգի ապացույց, որը չափազանց բարձր շեմ է արդյունավետ հետապնդում իրականացնելու համար (Truchero 2017), մինչդեռ մյուս հոդվածները նախատեսված են բռնության առանձին դեպքերը հետապնդելու համար, և, հետևաբար, կիրառելի չեն բռնության դրսևորումները պատժելու համար, երբ առանձին միջադեպերը չեն հասնում քրեական շեմին, ինչպես նշվեց վերևում: Փորձագետների կարծիքով քրեական դրույթները չեն ներառում հոգեբանական բռնության վերաբերյալ Ստամբուլի կոնվենցիայի 33-րդ հոդվածում ներկա-

յացված վարքագիծը, քանի որ որոշակի ժամանակահատվածում վարքագծի հետևանքով առաջացած սպառնալիքի և հոգեկան տառապանքի որոշ ձևեր չեն կարող կարգավորվել 119-րդ և 137-րդ հոդվածներով: Այս համատեքստում հետաքրքիր կարող է լինել Շվեդիայի օրինակը (ԳՐԵՎԻՈՒ 2022թ., կետ 346), որտեղ «կանանց անձեռնմխելիության կոպիտ ոտնահարման» հանցագործությունը ներկայացվել է որպես ընտանեկան բռնության հատուկ հանցագործություն, նպատակ ունենալով արձանագրել կնոջ ներկա կամ նակխկին ամուսնու կամ զուգընկերոջ կողմից գործադրվող հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնության ամբողջականությունը: ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ այս հանցագործությունը համապարփակ է, քանի որ այն վերաբերում է ներկայիս և նախկին ամուսինների և զուգընկերների կողմից սպառնալից կամ բռնի վարքագծին, անկախ նրանից, թե արդյոք ոտնձգության ենթարկված անձը և բռնարարը միասին են ապրել:

9. Դատական քննության անբավարար արդյունքները, ինչպես ներկայացվեց վերևում, կարծես վկայում են այն մասին, որ ընտանեկան բռնության հետևանքով կանանց տառապանքն օրենքի աչքում որպես կանոն մնում է անտեսանելի և անպատժելի: Դատական անարդյունավետ արձագանքը կարող է մտահոգիչ ուղերձ հղել հասարակությանը առ այն, որ ընտանեկան բռնությունը հանցագործություն չէ:
10. Ինչպես այս ուսումնասիրության ընթացքում պարզաբանել էին ԿԱԿ-ի մասնագետները, Չայաստանում գործող քրեական օրենսդրության համաձայն նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ կողմից բռնություն գործադրելու փաստը չի կարող դիտվել որպես ծանրացուցիչ հանգամանք: Այս առումով ուսանելի կարող են լինել միջազգային չափանիշները: Ստամբուլի կոնվենցիայի 46-րդ հոդվածը պահանջում է, որ Ստամբուլի կոնվենցիայով սահմանված իրավախախտումների համար պատասխանատվություն սահմանելիս որպես ծանրացուցիչ հաշվի առնվեն մի շարք հանգամանքներ⁴⁶ (թվարկված «ա»-ից «ը» կետերում) (Ներառյալ, օրինակ այն, որ արարքը կատարվել է ներկայիս կամ նախկին ամուսնու/զուգընկերոջ կողմից): Կախված իրավական համակարգից՝ որոշ ծանրացուցիչ հանգամանքներ կարող են հանդիսանալ հանցագործության տարրերի մաս՝ դրանք որակելով որպես ավելի ծանր հանցագործություն, որը պատժվում է ավելի խիստ պատժով, կամ դրանք կարող են սահմանվել քրեական օրենսդրության հատուկ դրույթներով (ԳՐԵՎԻՈՒ 2022թ., կետ 400): Իրավաբանների պարզաբանմամբ (Փիրումյան 2022 թ.)՝ 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով մերձավոր ազգականի⁴⁷ կողմից կատարված հանցագործությունը դիտվում է որպես ծանրացուցիչ հանգամանք մի շարք հանցակազմերում, ինչպիսիք են սպանությունը, անձին ինքնասպանության հասցնելը, առողջությանը ծանր վնաս պատճառելը, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, առողջությանը թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, հոգեկան ներգործությունը, ֆիզիկական ներգործությունը և այլն: Հետագա հետազոտական ուսումնասիրություններում անհրաժեշտ է հատուկ գնահատել այս դրույթների կիրառումը դատական պրակտիկայում:
11. Այս ուսումնասիրությունում վերլուծվել են այն **պատճառները, որոնից ելնելով շատ տուժողներ որոշում են հետ վերցնել իրենց բողոքը**: Ինչպես և կարելի էր ակնկալել, վերլուծությունը ցույց տվեց, որ ոտնձգության ենթարկված անձինք նման որոշում են կայացնում մի շարք պատճառներով, մասնավորապես՝ չցանկանալով որ իրենց երեխաների հոր նկատմամբ գործ հարուցվի կամ վախենալով բռնարարի հաշվեհարդարից: ԿԱԿ-ի իրավաբաններն ընդգծել են, որ հաճախ կանայք որոշում են հետ վերցնել բողոքը տնտեսական կախվածության և/կամ բռնարարի սպառնալիքների պատճառով, օրինակ այն մտավախությամբ, որ այլևս չեն տեսնի երեխաներին, եթե շարունակեն գործը: Որոշ կանայք նաև վերանայում են իրենց քայլը երկար դատական գործընթացների պատճառով: Նրանք գտնում են, որ երկարատև դատական գործըն-

46 Չայաստանի Չանրապետության քրեական օրենսգրքի (2020թ.) վերանայված նախագծի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի եզրակացությունում ազգային իշխանություններին խորհուրդ է տվրվում ընդունել վերոնշյալ 46-րդ հոդվածի պահանջները:

47 Փիրումյանը (2022 թ.) բացատրում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից գործող Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով «մերձավոր ազգական» հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ. «մերձավոր ազգական՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը»:

թացն աննպատակահարմար է, քանի որ ամենահավանական արդյունքը կլինի այն, որ բռնարարն ընդամենը կտուգանվի, իսկ տուգանքը կվճարվի տնային տնտեսության բյուջեից: ԿԱԿ-ի մասնագետները նաև ասացին, որ որոշ բռնարարներ ոստիկանություն հաղորդում են սովել, կնոջը մեղադրելով երեխաների նկատմամբ բռնության մեջ՝ որպես իրենց դեմ բողոքը հետ կանչելու ճնշման ձև (տե՛ս Ընտանեկան բռնությունը օրենքի աչքում աննշան է թվում բաժինը): Բողոքը հետ կանչելու պատճառները, հետևաբար, բազմաթիվ են: Այլ փաստերը հանգեցնում են այն եզրակացության, որ հավանական է, որ բողոքը հետ վերցնելուն նպաստում է նաև ուժային մարմինների վերաբերմունքը նախաքննության կամ հետաքննության փուլում, երբ բողոքներն առավել հաճախ են հետ կանչվում: Հաշվի առնելով նաև այն փաստը, որ քննությունը և քրեական հետապնդումը կախված են ոտնձգության ենթարկված անձի կամքից, ինչը նրանց պատասխանատու է դարձնում ոտնձգողին արդարադատության ձեռքերը հանձնելու համար⁴⁸, այլ գործոնները, ինչպիսիք են գործի համար պատասխանատու մարմինների ներկայացուցիչների հուսահատեցնող կամ դատապարտող ուղերձները և դատավարության ընթացքում անբավարար պաշտպանությունը, էլ ավելի են վատթարացնում ոտնձգության ենթարկված անձի դիրքերը: Այդ ամենը հանգեցնում է ոտնձգության ենթարկված անձի կրկնակի վիկտիմիզացիայի, հնարավոր է նաև նպաստում է բողոքը հետ կանչելու նրանց որոշմանը: Այդ գործոնների թվում են

- ընտանեկան բռնության, մասնավորապես՝ հոգեբանական բռնության հետևանքների և լրջության աստիճանի նվազեցումը.
- ոտնձգության ենթարկված անձի հուսահատվելը՝ չջարունակելու դատական գործընթացը.
- ակնարկելը, որ ոտնձգության ենթարկված անձի և ոտնձգողի միջև հաշտեցումը նախընտրելի կլինի.
- մեղադրական վերաբերմունք, կողմնակալությունը և կարծրատիպերը.
- ոտնձգության ենթարկված անձանց դատական վարույթի ընթացքում պաշտպանելու և կրկնակի վիկտիմիզացիայի հավանականությունը նվազեցնելու անբավարար միջոցները՝ ոտնձգության ենթարկված անձը, սովորաբար, ստիպված է մի քանի անգամ ցուցմունք տալ, ընդ որում առցանց հարցաքննություն չի կատարվում, թեև, ինչպես բացատրեցին ԿԱԿ-ի մասնագետները, դատավարական օրենսդրության վերջին փոփոխությունները նման հնարավորություն ընձեռում են:

12. Ինչպես պարզաբանեցին մեր իրավաբան գործընկերները, Հայաստանում քրեական դատավարության օրենսգիրքը վերջերս փոփոխվել է ⁴⁹, և այժմ այն թույլ է տալիս **ex officio** քրեական հետապնդում իրականացնել ընտանեկան բռնության հանցակազմ պարունակող արարքների համար (Pirumyan 2022): Հետազոտական ուսումնասիրությունները պետք է վերլուծեն այս դրույթների գործնական կիրառումը դատաիրավական պրակտիկայում և ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության վրա դրանց ազդեցությունը:

48 Ստամբուլի կոնվենցիայի 55-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական բռնության, սեռական բռնության, ներառյալ բռնաբարության, հարկադիր ամուսնության, ԿՍՕԽ-ի և հարկադիր հղիության արհեստական ընդհատման կամ հարկադիր ամացման հետաքննությունը կամ քրեական հետապնդումը չպետք է ամբողջությամբ կախված լինի ոտնձգության ենթարկված անձի կողմից ներկայացված հաղորդումից կամ բողոքից. դատավարությունը կարող է շարունակվել նույնիսկ այն դեպքում, եթե տուժողը հետ վերցնի իր բողոքը: Վերոհիշյալ իրավախախտումների մասով քրեական գործի քննությունը և վարույթը չպետք է ոտնձգության ենթարկված անձի վրա դնեն նման վարույթ հարուցելու և դատավճիռ կայացնելու ապահովման բեռը՝ ելնելով այդ իրավախախտումների առանձնահատուկ տրավմատիկ բնույթից (ԳՐԵՎԻՈ 2022թ., կետ 479):

49 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածը (Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը) սահմանում է.
 1. Քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կամ մասնավոր կարգով՝ հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից ելնելով:
 2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է մասնավոր կարգով, իսկ մյուս բոլոր հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:
 3. Եթե նույն անձին վերագրվող արարքների մի մասը ենթակա է քրեական հետապնդման հանրային կարգով, իսկ մյուս մասը՝ մասնավոր կարգով, ապա քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:
 4. Անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով՝
 1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով.
 2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

13. Վերջապես, այս ուսումնասիրության ներքո վերլուծված գործերը հիմնականում վերաբերում էին դաժան վերաբերմունքին և ընտանեկան բռնությանը՝ բռնարարի կողմից խիստ վերահսկողության և հարկադրանքի պայմաններում, **սակայն այս դեպքերի առնչությամբ հարուցված քրեական գործերը հիմնականում չեն հանգեցրել որևէ իրավական սանկցիային**: Մեծ անհամապատասխանություն կա այս ուսումնասիրության արդյունքում բացահայտված գործերի լրջության (տե՛ս. Ընտանեկան բռնության փաստերի խորը վերլուծություն բաժինը) և դատական գործընթացների արդյունքների միջև, տպավորություն ստեղծելով, որ այդ կանանց կողմից կրած բռնություններն օրենքի աչքում աննշան են երևում:

4.8. Ընտանեկան բռնությունը օրենքի աչքում աննշան է երևում. օրինակներ Կանանց աջակցման կենտրոնի պրակտիկայից

ԿԱԿ-ի մասնագետների կողմից հարցաթերթիկներին տրված պատասխանները ցույց են տալիս քրեական հատվածի արձագանքման ուժեղ և թույլ կողմերը, ներառյալ այն պատճառները, թե ինչու ոտնձգության ենթարկված շատ անձինք հետ են կանչում իրենց բողոքները:

- «Ոտնձգության ենթարկված անձը դանակի 18 հարված է ստացել: Նման ծանր բռնության դեպքերում անմիջապես քրեական գործ է հարուցվում: Սկզբում քրեական մեղադրանք էր առաջադրվել 112 հոդվածով, որից հետո դատաբժշկական փորձաքննության արդյունքներով արարքը վերաորակվել էր սպանության փորձի՝ 34-104 հոդվածի համաձայն: Քննիչն աշխատել է շատ բարեխիղճ, օպերատիվ: Հիմա գործը դատարանում է, դատարանը գործը վարում է կատարյալ ձևով, առանց խտրականության:
- Իրավախախտը ձերբակալվել էր, սակայն դատարանը փոխել էր նախնական կալանքի որոշումը, և նա նոր հանցագործություն էր կատարել՝ ծանր վիրավորել էր ոտնձգության ենթարկված անձին և նրա երկու մերձավոր ազգականներին, որից հետո նա կրկին ձերբակալվել էր և նրա նկատմամբ հարուցվել էր նոր քրեական գործ, որն արդեն երեք տարուց ավել է ընթանում:
- Ընդհանուր առմամբ, Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերը հոգեկան տառապանքի հիմքով շատ հազվադեպ են հարուցվում: Նախ՝ այն ավելի խիստ պատիժ է նախատեսում, երկրորդ՝ պետք է լրացուցիչ հոգեբանական փորձաքննություն անցկացվի, իսկ մասնագիտական հաստատությունները, որոնք կարող են փորձագիտական եզրակացություն տալ, քիչ են: Ունեցել ենք դեպք, երբ քրեական մեղադրանքը սկզբում առաջադրվել է 118 հոդվածով (ծեծ), սակայն դատախազությունը հանցագործությունը վերաորակել է որպես ծանր ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի պատճառում (հոդված 119), ուստի նոր քննություն է կատարվում:
- Գործը հարուցվել էր 118 հոդվածով (ծեծ). ոտնձգության ենթարկված անձը հետ էր վերցրել իր բողոքը, սակայն դատախազը շարունակել էր գործը՝ հիմնվելով քրեական գործ հարուցելու հնարավորության վրա՝ անկախ տուժողի բողոքից, եթե տուժողը գտնվում է անօգնական վիճակում կամ տնտեսական կախվածության մեջ է մեղադրյալից: Սակայն մեղադրյալը առաջին աստիճանի դատարանում արդարացվել էր: Վերաքննիչ դատարանը ոտնձգության ենթարկված անձի վերաքննիչ բողոքի պատճառով բեկանել էր առաջին աստիճանի դատարանի վճիռը: Քանի որ իրավախախտը թույլ չէր տվել ոտնձգության ենթարկված անձին տեսակցել իր երեխաներին, ինչպես նաև մեղադրել էր նրան բռնության մեջ, նա ի վերջո որոշել էր հաշտվել նրա հետ: Գործը ներկայումս վերաքննվում է: Սակայն ոտնձգության ենթարկված անձը նոր դատական նիստի ժամանակ կրկին որոշել էր հաշտվել բռնարարի հետ: Ոտնձգության ենթարկված անձինք հաճախ որոշում են հետ վերցնել բողոքը՝ ամուսնու սպառնալիքների պատճառով, որ իրենք չեն տեսնի իրենց երեխաներին:
- ԿԱԿ-ի պրակտիկայում կան դեպքեր, երբ ամուսինը մեղադրում են իր կնոջը երեխաների նկատմամբ բռնություն գործադրելու մեջ (երբ ոտնձգության ենթարկված անձը ամուսնալուծության դիմում է ներկայացնում կամ ոտնձգողի կողմից գործադրված ֆիզիկական բռնության մասին հաղորդում է ներկայացնում ոստիկանություն): Այս եղանակով, ոտնձգության ենթարկված անձանց վրա

ճնշում է գործադրվում՝ հետ կանչելու իրենց բողոքները: Նման մի դեպքում ոստիկանությունը նախազգուշացում էր կիրառել թե՛ ամուսնու, թե՛ կնոջ նկատմամբ, առանց խորը գնահատելու իրավիճակը: Ոտնձգության ենթարկված անձն այսպիսով դարձել էր մեղադրյալ: Հաճախ նման դեպքերը հանգեցնում են հաշտության: Մեկ դեպքում ամուսինը հայտնել էր ոստիկանություն, որ կինը դանակահարել է իրեն և ծեծի ենթարկել իրենց երեխային (կրա վրա ճնշում գործադրելու նպատակով՝ հետ վերցնելու իր դեմ բողոքը): Կնոջ դեմ որևէ քրեական գործ չէր հարուցվել, սակայն ի վերջո նա որոշել էր հետ վերցնել իր բողոքը:

Պրակտիկ օրինակ՝ Ֆիզիկական (լուրջ դրսևորումների) բռնության ենթարկված կնոջ փորձառությունները քրեական արդարադատության ոլորտում

«Ոտնձգության ենթարկված անձը երկար տարիներ ամուսնու կողմից ենթարկվել է բռնության, այդ թվում՝ ֆիզիկական բռնության լուրջ դրսևորման՝ ամուսինը նրան ապտակել է, ոտքերով հարվածներ է հասցրել, նրան փորձել է խեղդամահ անել: Բռնությունը սկսվել է նրանց ամուսնությունից անմիջապես հետո և շարունակվել է նույնիսկ հղիության ժամանակ: Նա տնտեսապես կախված է եղել ամուսնուց և ենթարկվել է հոգեբանական բռնության տարբեր դրսևորումների՝ մեկուսացում և հսկողություն (ամուսինը վերահսկում էր նրա առօրյա կյանքը, արգելում էր շփվել ընտանիքի և ընկերների հետ, սահմանափակում էր նրա տեղաշարժը, կողպում էր սենյակում): Ոտնձգողը նաև բազմիցս սպառնացել էր սպանել նրան և ենթարկել տնտեսական բռնության. հրաժարվել էր նրան գումար տալ կենցաղային ծախսերի համար, սահմանափակել էր փողի հասանելիությունը և արգելել էր աշխատանք գտնել:

Երեխաները բազմիցս ականատես են եղել բռնության.

Ոտնձգության ենթարկված անձը բողոք էր ներկայացրել ոստիկանություն, սակայն ամուսնուն միայն նախազգուշացում էր տրվել: Հերթական դաժան ծեծից հետո ոտնձգության ենթարկված անձը կրկին ահազանգել էր ոստիկանություն, և ամուսնու նկատմամբ քրեական գործ էր հարուցվել:

Ամուսինը և նրա հարազատները մեղադրում էին նրան երեխաներին ծեծելու մեջ, ինչը հաճախ ոտնձգության ենթարկված անձի վրա ճնշում գործադրելու «մարտավարություն» է, որպեսզի նա հրաժարվի բողոքից: Քննիչը օբյեկտիվ և մանրակրկիտ քննություն էր իրականացրել, և նրա նկատմամբ գործը կարճվել էր՝ «մեղքի բացակայության» պատճառով»:

Կանանց աջակցման կենտրոն, Երևան

- «Հ Գործի քննությունը երկար է տևել. ամուսինը կնոջն ինքնասպանության էր հասցրել: Նա ամիսներ շարունակ հիվանդանոցում էր: Մենք վնասվածքների լուսանկարները ներկայացրել ենք քննիչին: Նախաքննությունը դեռ շարունակվում է:
- Քրեական գործը 118-րդ հոդվածով կարճվել է ապացույցների անբավարարության հիմքով: Ոտնձգության ենթարկված անձը չցանկացավ բողոքարկել՝ դա համարելով անիմաստ և պատճառաբանելով, որ իրավախախտը մեղավոր ճանաչվելու դեպքում տուգանք է վճարելու: Առերեսման ժամանակ ամուսինը և ամուսնու հարազատները ոտնձգության ենթարկված անձին առևանգել են հենց քննչական բաժնի դիմաց: Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ 131 հոդվածի (մարդու առևանգում) հատկանիշներով»:

Պրակտիկ օրինակ՝ Քրեական գործի ձգձգումը ոստիկանի և ներկայացրած մարտավարությունն է (արդյո՞ք այդ գործն ի վերջո կկարճվի):

«Ոստիկանության ենթարկված անձը մի քանի տարի ենթարկվել էր ընտանեկան բռնության. ոստիկանը, նրա քաղաքացիական ամուսինը իրենց հարաբերությունների հետև սկզբից ծեծի էր ենթարկել նրան, այդ թվում՝ հղիության ժամանակ, խնջույքների ժամանակ և հյուրերի ներկայությամբ: Ամուսինը պնդում էր, որ միշտ գիտի, թե ինչ է նա անում և ում է տեսնում. կինը ստիպված էր բացատրություն տալ առանց ամուսնու անցկացրած ամեն պահի համար. ամուսինը նվաստացնում էր նրան այլ մարդկանց (երեխաների, հարազատների) առաջ, մեղադրում անմեղությունակ, անպատասխանատու լինելու մեջ, սահմանափակում փողի հասանելիությունը և հրաժարվում գումար տալ կենցաղային ծախսերի համար: Նա տառապում էր խուճապի նոպաներից, անհանգստությունից և ապատիայից, կորցրել էր ինքնավստահությունը, ճնշված էր անօգնական էր զգում իրեն:

Կինը դիմել էր ոստիկանություն և նրա գործով անհետաձգելի միջամտության որոշում էր կայացվել: Սակայն, վարույթը սկսվելուց հետո այն անընդհատ հետաձգվում էր՝ ամբաստանյալի խնդրանքով: Օրենսդրության համաձայն՝ ծեծի դեպքում, եթե դատարանը երկու տարի անց որոշում չի կայացնում, գործը կարճվում է հանցանքի կատարման վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով: Այդպիսով, Կանանց աջակցման կենտրոնը արձանագրում է, որ ոստիկանները հաճախ օգտագործում են վարույթը հետաձգելու և ձգձգելու մատրավարություն՝ հուսալով, որ գործն ի վերջո կկարճվի: Այս գործով դատավարությունը շարունակվում է. Կանանց աջակցման կենտրոնի փաստաթանդ դիմել է դատավարության օր նշանակելու համար, և եթե հաջորդ նշանակված օրը դատավարությունը նույնպես չկայանա, գործը պետք է կարճվի»:

Կանանց աջակցման կենտրոն, Երևան

Պրակտիկ օրինակ՝ հղիության ընթացքում կրկնվող ծեծ. արդյո՞ք դա որակվում է որպես «ծանր հոգեբանական տառապանք»:

«Ոստիկանության ենթարկված անձը ամուսնու կողմից ենթարկվում էր ֆիզիկական և հոգեբանական բռնության: Ամուսինը սպառնում էր նրան զենքով/դանակով, փորձել էր նաև սպանել նրան: Բռնության հետևանքով նա ֆիզիկական վնասվածքներ էր ստացել, այդ թվում՝ կտրվածքներ, կապտուկներ և քերծվածքներ: Նրա ամուսինը կուրորեն խանդում էր. նա վերահսկում էր կնոջ կյանքը, սահմանափակում շփումները ընտանիքի և ընկերների հետ և հաճախ բանավոր ագրեսիայի պոռթկումներ էր դրսևորում: Բռնությունը սկսվել էր նրանց ամուսնությունից անմիջապես հետո և շարունակվել կնոջ երկու հղիության ընթացքում:

Կինը դիմել էր ոստիկանություն և նրա գործով անհետաձգելի միջամտության որոշում էր կայացվել: Ոստիկանության ծառայողները մեծ ուշադրություն չէին դարձրել տեղի ունեցող բռնությունը՝ ասելով, մասնավորապես՝ «պետք չէ դրա համար դիմել դատարան, նա Ձեզ դաժան ծեծի չի ենթարկել» և չէին լրացրել վտանգի գնահատման ձևը: Նրանք իրենց զեկույցում չէին նշել, որ ոստիկանության ենթարկված անձը դաժան ծեծի է ենթարկվել իր երկու հղիության ընթացքում. նրանք ցանկանում էին քրեական գործ հարուցել Քրեական օրենսգրքի 118 հոդվածով (ծեծ), ոչ թե 119 հոդվածով (հոգեկան ուժեղ տառապանք պատճառելով), որն ավելի խիստ պատիժ է նախատեսում, սակայն պահանջվում է լրացուցիչ հոգեբանական փորձաքննություն:

Այդ ընթացքում Կանանց աջակցման կենտրոնի փաստաթանդ բողոք էր հղել, որ նախաքննությունը պատշաճ կերպով չի իրականացվում, և ներկայացրել բժշկական փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ ծեծը տեղի է ունեցել հղիության ընթացքում: Դրանից հետո միայն քննիչը փոխել էր հանցագործության որակման նկատմամբ դիրքորոշումը, և գործի դատաքննությունը անցնելու էր 119-րդ հոդվածով: Ներկայումս դատաքննությունն ընթանում է»:

Կանանց աջակցման կենտրոն, Երևան

4.9. Խնամակալություն և տեսակցություն

Ուսումնասիրության այս մասում դիտարկված դեպքերից շատերում երեխաներն ականատես են եղել իրենց մոր նկատմամբ ընտանեկան բռնության կամ ներկա են գտնվել անմիջական բռնության վայրում (տես. «Երեխաները որպես ընտանեկան բռնության ականատեսներ և/կամ ոտնձգության ենթարկված անձինք՝ հետևանքները» բաժինը):

Ստամբուլի կոնվենցիայի 31-րդ հոդվածի նպատակն է ապահովել, որ Կոնվենցիայով նախատեսված բռնության դեպքերը, մասնավորապես ընտանեկան բռնությունը, հաշվի առնվեն խնամակալության և տեսակցության իրավունքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ ապահովելու, որ այդ իրավունքների իրականացումը չվնասի ոտնձգության ենթարկված անձի կամ երեխաների իրավունքներին և անվտանգությանը (ԳՐԵՎԻՈՒ, 2022թ., կետ 324): 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատական ատյանը տեսակցությունների մասին որոշումներ կայացնելիս նույն չափով հաշվի առնեն խնամակալի նկատմամբ բռնության հնարավոր վտանգը, որքան հենց երեխայի նկատմամբ, մինչդեռ 2-րդ պարբերությունը սահմանում է որ տեսակցության և խնամակալության ցանկացած իրավունքի իրականացումը չվտանգի ոտնձգության ենթարկված անձի և/կամ երեխաների իրավունքները և անվտանգությունը:

Ստամբուլի կոնվենցիայի բոլոր մասնակից պետություններում ԳՐԵՎԻՈՒ-ն (2022թ., 326-327 կետեր) արձանագրել է ոտնձգության ենթարկված անձանց և նրանց երեխաների խնամակալության և տեսակցության որոշման և իրականացման հարցում անվտանգության ապահովմանը վերաբերող օրենսդրական և/կամ իրավակիրառման թերություններ: Անդորրայում, Ավստրիայում, Ֆիլիպիններում, Ֆրանսիայում, Նիդեռլանդներում, Պորտուգալիայում, Իսպանիայում և Շվեդիայում օրենսդրական մակարդակում նախատեսված են դրույթներ՝ ուղղված, բռնարար ծնողին ծնողական ի, ներառյալ խնամակալության և տեսակցության իրավունքի տրամադրումը կանխելուն, սակայն ԳՐԵՎԻՈՒ-ն պարզել է, որ համապատասխան դրույթները հազվադեպ են կիրառվում: Ալբանիայում, Բելգիայում, Իտալիայում, Մոնակոյում և Թուրքիայում ԳՐԵՎԻՈՒ-ն արձանագրել է, որ խնամակալության և/կամ տեսակցության իրավունքի վերաբերյալ որոշում կայացնելիս ընտանեկան բռնության հանգամանքը, որպես պարտադիր հաշվի առնվող իրավական չափորոշիչ, ուղղակիորեն սահմանված չէ:

Ինչպես պարզաբանել են ԿԱԿ-ի մասնագետները, Հայաստանում բռնարար ծնողներին ծնողական իրավունքի իրացման, ներառյալ խնամակալության և տեսակցության իրավունքի տրամադրումը կանխելու որևէ իրավական հիմք չկա: Ընտանեկան հարաբերությունները կարգավորող օրենսդրության համաձայն՝ երկրորդ ծնողի նկատմամբ ընտանեկան բռնություն կիրառելը ոտնձգող ծնողի ծնողական իրավունքները սահմանափակելու հիմք չի հանդիսանում: Սակայն ԸԲ օրենքի համաձայն, **պաշտպանական որոշումները (ԸԲ օրենքի 8-րդ հոդված) անհրաժեշտության դեպքում կարող են ներառել երեխաների հետ տեսակցության արգելքի սահմանում:**

Ուսումնասիրության այս մասում վերլուծվել են խնամակալության և տեսակցության վարույթների հետ կապված քսան քաղաքացիական գործեր, որոնցում մայրը ընտանեկան բռնության է ենթարկվել: Դատավարությունների արդյունքները հետևյալն էին. խնամակալության իրավունքը տրվել է մորը՝ (9 դեպք), հորը՝ (5 դեպք), կայացվել է համատեղ խնամակալության որոշում՝ (երկու դեպք): Չորս գործով վարույթը ավարտված չէր: Յոթ գործով դատարանը միջանկյալ որոշում է կայացրել՝ կապված երկրորդ ծնողի տեսակցության իրավունքի հետ:

4.10. Խնամակալության և տեսակցության վերաբերյալ դատարանի որոշումների մասին եզրակացություններ

1. **Դատավորները, խնամակալության և տեսակցության վերաբերյալ որոշումներ կայացնելիս**, համապատասխան իրավական մեխանիզմի բացակայության պատճառով **չեն դիտարկում երեխաների՝ բռնությանն ականատես լինելու հանգամանքը:** Արդյունքում, վերլուծված դեպքերից որևէ մեկում ոտնձգողի/երեխաների հոր ծնողական կամ տեսակցության իրավունքները չեն սահմանափակվել: Ուսումնասիրու-

թյան այս մասում դիտարկված դեպքերից երկուսում կայացվել է պաշտպանական որոշում, ընդ որում ոտնձգողի համար երեխայի հետ տեսակցությունը չի արգելվել:

2. **Խնամակալության և տեսակցության հետ կապված վարույթը երկար է տևում՝ մոտ 2-3 տարի** (միջին տևողությունը՝ 2,28 տարի), տատանվում է 6 ամսից մինչև 5 տարի (չորս դեպքում դատավարությունը դեռ չի ավարտվել): Կանանց աջակցման կենտրոնի իրավաբանների գնահատմամբ դատավարությունները ուշացումով են տեղի ունենում: Երկարատև դատավարությունը հանգեցնում է մայրերի, հնարավոր է նաև երեխաների կրկնակի վիկտիմիզացիայի, եթե նրանցից պահանջվում է ցուցմունք տալ:
3. ԿԱԿ-ի մասնագետները մատնանշել են **դատական պրակտիկայի հետ կապված հետևյալ խնդիրները**. Երաշխավորված չէ, որ դատարանում մանկական հոգեբանը կաջակցի ցուցմունք տվող երեխաներին, նաև չկա իրավական մեխանիզմ՝ գնահատելու բռնության ականատես լինելու պատճառով երեխաների մոտ առաջացող հոգեբանական հետևանքները: Նրանք նաև նշել են բռնության ենթարկված երեխաների համար ծառայությունների/խնամքի բացակայությունը, ինչպես նաև հոր տեսակցության և երեխաների հետ շփման ժամանակ հարկադիր կատարողի պարտադիր մասնակցության պահանջի բացակայությունը: 10 դեպքերում ոտնձգողը կամ նրա ընտանիքը թույլ չեն տվել մորը այցելել երեխաներին կամ շփվել երեխաների հետ, ինչն անհետևանք է մնացել: Այդ դեպքերում հայրերը/ոտնձգողները չեն հարգել դատարանի որոշումները՝ կապված երեխաների հետ տեսակցության և շփվելու հետ, սակայն դա նույնպես որևէ հետևանք չի ունեցել: Մեկ դեպքում մոր հետ բնակվող երեխաներին հայրը տեսակցության ժամանակ տարել և պահել է իր մոտ: Դատարանը երեխաներին վերադարձնելու որոշում է կայացրել, ընդ որում ԴԱՅԿ-ից (դատական որոշումների կատարման համար պատասխանատու մարմին) երեխաներին մոր խնամակալությանը վերադարձնելու համար պահանջվել է մոտ 5 ամիս:

5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸԲ օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների, ինչպես նաև խնամակալությանը և տեսակցությանը վերաբերող դրույթների ամնչությամբ նպատակահարմար է դիտարկել հետևյալ օրենսդրական և այլ միջոցները.

1. Ներդաշնակեցնել անհետաձգելի միջամտության որոշումների (ԸԲ օրենքի 7-րդ հոդված) և պաշտպանական հրամանների (ԸԲ օրենքի 7-րդ հոդված) դրույթները ԿՆԽՎԿ կոմիտեի 2017թ. 35-րդ ընդհանուր հանձնարարականի և Ստամբուլի կոնվենցիայի 52-րդ և 53-րդ հոդվածների հետ:
2. Գնահատել «նախազգուշացումների» կիրառումը և արդյունավետությունը՝ նկատի ունենալով, որ այս միջոցը չպետք է փոխարինի ԱՄՈ-ն և վտանգների պարբերական գնահատմանը: Թեև այս միջոցը գործնականում հաճախ է կիրառվում, սակայն ոտնձգության ենթարկված անձանց պաշտպանության ապահովման և բռնության հետագա կանխարգելման առումով դրա ազդեցությունը միանշանակ չի գնահատվում:⁵⁰
3. ԸԲ օրենքին համահունչ բարելավել ընտանիքում բռնության առաջին անգամ տեղի ունենալու փաստը ոստիկանության կողմից արձանագրումը: Սա այն գործոններից մեկն է, որով առաջնորդվում են ոստիկանության աշխատակիցները ԱՄՈ-ի փոխարեն նախազգուշացում տալիս, ուստի այս հարցի վերաբերյալ սխալ տեղեկատվությունը կարող է հանգեցնել ԱՄՈ-ի փոխարեն նախազգուշացման կիրառման, որի հետևանքով ոստիկանությունը կարող է հետագա բռնությունը կանխելու համար թանկարժեք ժամանակը կորցնել, իսկ ոտնձգության ենթարկված անձը մնալ առանց անհրաժեշտ պաշտպանության:
4. Անդրադառնալ նախազգուշացումների բողոքարկման ընթացակարգային կանոններին և վերանայել դրանք:
5. Անդրադառնալ ոստիկանության կողմից ԱՄՈ-ներ տրամադրելու պայմաններին և վերանայել դրանք: Անհ-

50 Տե՛ս Mann 2019թ.:

րաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրել, թե ինչպես են ոստիկանության աշխատակիցները որոշում ԱՄՈ կայացնել: Միջազգային չափանիշներին, այսինքն՝ Ստամբուլի կոնվենցիային համապատասխան, անհետաձգելի արգելանքի որոշումները գործիք են, որն օգտագործվում է անմիջական վտանգի դեպքում, և պարտադիր չէ, որ այն օգտագործելու համար առկա լինի մարդու կյանքին սպառնացող կամ բռնության այլ լուրջ դրսևորման վտանգ: Հետևաբար, այդ որոշումները կարող են կայացվել նաև բռնության ավելի թեթև դրսևորումների պայմաններում, քանի որ դրանց նպատակը ոտնձգության ենթարկված անձի անվտանգությանն առաջնահերթություն տալն է այնպիսի իրավիճակներում, երբ վտանգն անխուսափելի է, դրանով իսկ կանխելով հետագա բռնությունը: Հետևաբար, ոստիկանությունը չպետք է ԱՄՈ-ի համար չափազանց բարձր շեմ կիրառի, ինչպիսին է օրինակ բռնարարի՝ ծանր հանցագործություն կատարելու մտադրությունը:

6. Ոստիկանության ծառայողների համար կազմակերպել պաշտպանության միջոցների կիրառման վերապատրաստման ծրագրեր: Կարևոր է բարձրացնել նրանց գիտելիքները ընտանեկան բռնության, ոտնձգության ենթարկված անձանց և երեխաների վրա դրա ազդեցության, դրա հոգեբանական դիսամփկայի և գենդերային բնույթի վերաբերյալ:
7. Վերանայել ԱՄՈ-ների կիրառմանը խոչընդոտող ընթացակարգային կանոնները՝ նպատակ ունենալով ապահովել դրանց արագ կայացումը՝ անմիջական վտանգի իրավիճակները կանխելու համար, ինչպես նաև ապահովել, որ ԱՄՈ-ի կայացման վերաբերյալ ոստիկանության որոշումները ուժի մեջ մտնեն անմիջապես՝ առանց ոտնձգողին ծանուցելու ընթացակարգային խնդիրներով պայմանավորված ուշացումների:
8. Ապահովել, որ ԸԲ օրենքին համապատասխան ոստիկանությունը ԱՄՈ-ի պատճենը տրամադրի ոտնձգության ենթարկված անձի բնակության վայրի Կանանց աջակցման կենտրոնին:
9. ԱՄՈ-ի գործընթացի շրջանակներում տեղեկացնել ոտնձգության ենթարկված անձանց իրենց իրավունքների մասին: Ապահովել, որ ոստիկանության աշխատակիցներն ոտնձգության ենթարկված անձանց ուղղորդեն իրենց բնակության վայրի Կանանց աջակցման կենտրոն և/կամ այլ կազմակերպություններ, որտեղ նրանք կարող են օգնություն ստանալ, օրինակ՝ հոգեբանական և իրավական խորհրդատվության և/կամ այլ աջակցման ծառայություններ, ինչը կարող է նպաստել նրանց իրավագործմանը:
10. Ուսումնասիրել և վերանայել բռնության սուր իրավիճակներում ոստիկանության ծառայողների կողմից միջամտությունների և վտանգների գնահատման գործելաոճը՝ ապահովելով, որ ոստիկանության ծառայողները պատշաճ կերպով անդրադառնան հետևյալ գործոններին. բռնության պատմության, տևողության և լրջության ցուցիչներին, ներառյալ մահվան սպառնալիքները կամ խեղդամահության փորձերը, ինչպես նաև հոգեբանական բռնության դրսևորումներին, ոտնձգության ենթարկված անձի կողմից հետագա վտանգի գնահատմանը, բռնության ականատես երեխաների համար վտանգին:
11. Լուծել պաշտպանության միջոցների կիրառման գործընթացին ոտնձգողների ընտանիքի անդամների միջամտության հարցը:
12. Ոտնձգության ենթարկված անձի և ոտնձգողի առանձին ապրելու դեպքում ապահովել, որ ոտնձգողին ընձեռված տեսակցության իրավունքը չազդի նրա նկատմամբ կայացված ԱՄՈ-ի արդյունավետության վրա:
13. Բացահայտել և վերացնել պաշտպանական որոշումների ցածր կիրառման պատճառները (նախատեսված է ԸԲ օրենքի 8-րդ հոդվածով):
14. Կազմակերպել իրազեկման ծրագրեր, որոնք ոտնձգության ենթարկված անձանց կտեղեկացնեն ոստիկանության կողմից ԱՄՈ կայացնելու հնարավորության, ինչպես նաև Կանանց աջակցման կենտրոնների կողմից իրենց անունից (կամ համաձայնությամբ) հանդես գալու հնարավորության, իրենց համար հասանելի իրավաբանական օգնություն և աջակցություն մասին:

15. Ապահովել ԱՄՌ-ների և պաշտպանական որոշումների ԸԲ-ի օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված փոխլրացումը, որպեսզի ԱՄՌ-ի գործողության ժամկետի ավարտից հետո ուսնձգության ենթարկված անձի պաշտպանության հետ կապված որևէ խնդիր չառաջանա: Դա ենթադրում է ԱՄՌ-ի գործողության ժամկետը լրանալուց անմիջապես հետո պաշտպանական որոշումը շրջանառության մեջ դնելը:
16. Պահպանել ԱՄՌ-ների (ոստիկանության կողմից կայացված) և պաշտպանական որոշումների (դատարանի կողմից) կանխարգելիչ ներուժը՝ պատշաճ կերպով կիրառելով և մշտադիտարկելով դրանք: Ոստիկանությունը պարտավոր է արդյունավետ կերպով հսկել և վերահսկել ուսնձգողների կողմից որոշումների պահանջների կատարումը: Դա կարելի է անել, օրինակ՝ ուսնձգության ենթարկված անձի հետ կանոնավոր հանդիպումներ կազմակերպելով, ուսնձգության ենթարկված անձանց օգնություն տրամադրող այլ կազմակերպությունների/կառույցների և Կանանց աջակցման կենտրոնների հետ համագործակցությունը բարելավելով, և ապահովելով, որ ուսնձգության ենթարկված յուրաքանչյուր անձի տրվի ԱՄՌ-ի պատճենը: Կարևոր է ապահովել, որ ոստիկանության աշխատակիցները պրոակտիվ կերպով բացահայտեն իրավախախտումները, չապավինելով միայն ուսնձգության ենթարկված անձի հաղորդումներին, քանի որ այդ դեպքում ԱՄՌ-ի խախտումն ապացուցելու ամբողջ բեռն ընկնում է ուսնձգության ենթարկված անձի վրա:
17. Ուսումնասիրել և վերանայել ոստիկանության կողմից ուսնձգողների կանխարգելիչ գրանցման կիրառելի ընթացակարգերը՝ ապահովելով, որ քրեական դատավարության հետ կապված բոլոր համապատասխան տեղեկությունները և/կամ տվյալները, ինչպես նաև ուսնձգողների նկատմամբ ԸԲ օրենքին համաձայն կիրառված քաղաքացիական իրավունքի միջոցները արձանագրվեն և պարբերաբար թարմացվեն: Վերանայելուց հետո անհրաժեշտ է կիրառելի ընթացակարգերը արդյունավետ կերպով կիրառել գործնականում:
18. Ապահովել ԱՄՌ-ների և պաշտպանական որոշումների խախտման կանխարգելիչ բնույթի, համաչափ և արդյունավետ պատասխանատվության միջոցների կիրառումը՝ հաշվի առնելով, որ նման խախտումները, ընդհանուր առմամբ, կարող են վկայել ուսնձգության ենթարկված անձին սպառնացող լուրջ վտանգի մասին: Այդ համատեքստում դիտարկել ոստիկանության կողմից ազատությունից զրկելու հնարավորությունը կրկնվող կամ լուրջ խախտումների դեպքում: Տուգանքները չեն կարող համարվել կանխարգելիչ ազդեցությամբ պատասխանատվության միջոց: Ավելին, տուգանքների կիրառումը կարող է ֆինանսական խնդիրներ առաջացնել ուսնձգության ենթարկված անձի համար:
19. Փոփոխել ընտանեկան օրենսգիրքը և/կամ այլ համապատասխան իրավական դրույթները՝ համաձայն ԿՆԽՎԿ կոմիտեի 2017 թ. 35-րդ ընդհանուր հանձնարարականի⁵¹, ԿՆԽՎԿ կոմիտեի կամընտիր արձանագրության շրջանակում կայացված որոշումների⁵² և հարակից միջազգային չափանիշների:⁵³ Ապահովել, որ խնամակալության կամ տեսակցության իրավունքի պայմանների վերաբերյալ որոշումներ կայացնելիս բռնություն չգործադրած ծնողի, ինչպես նաև երեխայի նկատմամբ կիրառված ընտանեկան

51 Կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ ԿՆԽՎԿ թիվ 35 (2017թ.) ընդհանուր հանձնարարականը հաստատում է, որ «իրավախախտների կամ ենթադրյալ իրավախախտների իրավունքները կամ պահանջները դատական վարույթի ընթացքում և դրանից հետո, այդ թվում՝ գույքի, գաղտնիության, երեխայի խնամակալության, մուտքի, շփման և տեսակցության հետ կապված, որոշվում են կանանց և երեխաների կյանքի, ֆիզիկական, սեռական և ֆիզիոլոգիական անձեռնմխելիության իրավունքների հիման վրա, ելնելով երեխայի լավագույն շահերից»:

52 Տե՛ս հաղորդակցություն թիվ 47/2012 *González Carreño-ն ընդդեմ Իսպանիայի*, CEDAW/C/58/D/47/2012: Գոնսալեսի գործով, որտեղ բռնարար հայրը սպանել է իր դստերը, իսկ այնուհետև ինքնասպան եղել անվերահսկելի այցի ժամանակ, ԿՆԽՎԿ կոմիտեն արձանագրել է, որ որոշում կայացնելով թույլ տալ առանց վերահսկողության տեսակցությունները՝ առանց բավարար չափով հաշվի առնելու ընտանեկան բռնության նախապատմությունը, Իսպանիայի իշխանությունները չեն կատարել Ստամբուլի կոնվենցիայի 9-րդ մասի 7-րդ կետով նախատեսված պատշաճ ջանասիրության իրենց պարտավորությունը: Կոմիտեն, մասնավորապես, առաջարկեց, որ տեսակցությունների ժամանակացույցը որոշելիս հաշվի առնվի ընտանեկան բռնության ցանկացած նախապատմություն՝ երաշխավորելու, որ այն վտանգ չի ներկայացնում կանանց կամ երեխաների համար:

53 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Ստամբուլի կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պարտավոր են «ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ երեխաների խնամակալության և տեսակցության իրավունքների որոշման ժամանակ հաշվի առնվեն սույն Կոնվենցիայի շրջանակում ներառված բռնության դեպքերը և, որ «ցանկացած տեսակցության կամ խնամակալության իրավունքի իրականացումը չի խաթարում ուսնձգության ենթարկված անձի կամ երեխաների իրավունքները և անվտանգությունը»:

բռնության դեպքերը հաշվի առնվեն⁵⁴, այդ թվում՝ որպեսզի այն դիտարկվի որպես ծնողական իրավունքների, ներառյալ տեսակցության իրավունքի սահմանափակման առանձին հիմք:

Ոստճգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության բարելավմանը նպաստելու նպատակով դիտարկել օրենսդրական և այլ հնարավոր միջոցներ, որոնք.

20. Ընտանեկան բռնությունը սահմանում են որպես հատուկ, ինքնուրույն հանցակազմ և ոստճգողներին կատարված բռնության համար պատասխանատվության են ենթարկում ԿՆԽՎԿ կոմիտեի (2016թ.⁵⁵), ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի (2017թ.⁵⁶) կողմից Հայաստանին արված առաջարկություններին, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի կողմից Հայաստանին արված առաջարկություններին (2015թ.) և Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական վերանայման 2-րդ փուլի ընթացքում Հայաստանի կողմից ընդունված առաջարկություններին համապատասխան:⁵⁷ Նպատակային/հատուկ/ինքնուրույն հանցակազմի սահմանումը կարող է բարելավել ընտանեկան բռնությանը քրեական արդարադատության կողմից տրվող արձագանքը, մասնավորապես, երբ դրանք վերաբերում են վարքագծի այն դրսևորումներին կամ ձևերին, որոնցում բռնության գործողություններն, առանձին վերցված, չեն հասնում քրեականացման շեմին:
21. Ապահովել, որ ընտանեկան բռնության դեպքերում պատասխանատվության միջոցները լինեն համոզիչ և համարժեք հանցանքի ծանրությանը: Իշխանությունները կարող են դիտարկել Ստամբուլի կոնվենցիայի դրույթը (48-րդ հոդվածի 2-րդ մաս), որը պահանջում է Մասնակից պետություններից ապահովել, որ ոստճգողի նկատմամբ սահմանված ցանկացած տուգանք անուղղակիորեն չհանգեցնի ոստճգության ենթարկված անձի ֆինանսական դժվարությունների և ոստճգության ենթարկված անձի համար անուղղակի պատժամիջոց չհանդիսանա:⁵⁸
22. Առանձին վերլուծել և գնահատել 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների իրականացումը⁵⁹, որոնք առնչվում են ԸԲ հատկանիշներ պարունակող գործերի *ex officio* քրեական հետապնդման հետ՝ հենվելով ոստիկանության, Քննչական կոմիտեի և գլխավոր դատախազության տրամադրած տվյալների, ինչպես նաև դատական պրակտիկայի վերլուծությունների վրա: Ելնելով գնահատման արդյունքներից, անհրաժեշտության դեպքում, համապատասխան փոփոխություններ/ բարելավումներ մտցնել օրենսդրության մեջ և/կամ դատաիրավական պրակտիկայում:

54 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 175:

55 ԿՆԽՎԿ կոմիտե, *Հայաստանի հինգերորդ և վեցերորդ համատեղ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 25 նոյեմբերի 2016թ.* CEDAW/C/ARM/CO/5-6:

56 Խոշտանգումների դեմ կոմիտե, ամփոփիչ դիտարկումներ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, 26 հունվարի 2017թ., CAT/C/ARM/CO/4:

57 *Համընդհանուր պարբերական գնահատման աշխատանքային խմբի հաշվետվություն. Հայաստան. լրացում (05.06.2015թ.)*, U.N. Doc. A/HRC/29/11/Add.1, 120.100, 120.105, 120.106, 120.107, 120.108, 120.109, 120.111, 120.112, 120.113:

58 Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 253:

59 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածը (Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը) սահմանում է.

1. Քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդում իրականացվում է հանրային կամ մասնավոր կարգով՝ հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից ելնելով:
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդում իրականացվում է մասնավոր կարգով, իսկ մյուս բոլոր հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդում իրականացվում է հանրային կարգով:
3. Եթե նույն անձին վերագրվող արարքների մի մասը ենթակա է քրեական հետապնդման հանրային կարգով, իսկ մյուս մասը՝ մասնավոր կարգով, ապա քրեական հետապնդում իրականացվում է հանրային կարգով:
4. Անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդում իրականացվում է հանրային կարգով՝
 - 1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով.
 - 2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

23. Նկատի ունենալով, որ 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով մերձավոր ազգականի կողմից հանցանք կատարելը⁶⁰ ծանրացուցիչ հանգամանքներով հանցակազմ է պարունակում,⁶¹ օրինակ՝ սպանության, անձին ինքնասպանության հասցնելու, առողջությանը ծանր վնաս պատճառելու, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, առողջությանը թեթև վնաս պատճառելու, ազատությունից ապօրինի զրկելու, ֆիզիկական ներգործություն, հոգեկան ներգործություն կիրառելու, և այլն, դրանց վերաբերյալ հետազոտական ուսումնասիրություններ և/կամ դատաիրավական վերլուծություններ կատարելիս, ցանկալի կլինի գնահատել, թե արդյոք այդ ծանրացուցիչ հանգամանքները պատշաճ կերպով հաշվի են առնվել դատական պրակտիկայում: Գնահատման արդյունքների հիման վրա, անհրաժեշտության դեպքում իրականացնել օրենսդրական փոփոխություններ և/կամ այլ միջոցներ՝ թերությունները վերացնելու համար:

24. Ուսումնասիրել և վերանայել հաշտեցման ընթացակարգերը՝ այդ մեխանիզմի նկատմամբ ավելի խիստ հսկողություն սահմանելու, վեճերի այլընտրանքային լուծման պարտադիր գործընթացների արգելման մասով Ստամբուլի կոնվենցիայի 48-րդ հոդվածին և ԿՆԽՎԿ կոմիտեի 35-րդ հանձնարարականին համապատասխան նոր դրույթներ ներմուծելու համար (տե՛ս. «Պետության պոզիտիվ պարտականությունները քրեական հետապնդման և պատժի գծով» ներդիրը):

Նպատակահարմար է նաև կատարելագործել քրեական և քաղաքացիական իրավունքի դրույթների գործնական կիրառումը: Կարող են դիտարկվել հետևյալ միջոցները.

25. Ապահովել, որ ոստիկանության ծառայողները մանրամասն զեկույցներ կազմեն իրենց հաղորդված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ՝ արձանագրելով հավաքված տեղեկությունները:

26. Ապահովել ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար դատաբժշկական փորձաքննության անմիջական հասանելիությունը՝ նպատակ ունենալով ճշգրիտ և պատշաճ կերպով ձեռք բերել և պահպանել անհրաժեշտ ապացույցները:

27. Դիտարկել ոստիկանության ծառայողների համար արձանագրություն կամ ուղեցույց կազմելու անհրաժեշտությունը, որտեղ հստակ հրահանգներ կտրամադրվեն ընտանեկան բռնության դեպքերի վարման վերաբերյալ՝ սկսած ոտնձգության ենթարկված անձի և բռնարարի հետ առաջին շփումից: Հաշվի առնելով ԳՐԵՎԻՌ-ի (2022) կողմից ներկայացված պրակտիկայի խոստումնալից օրինակները՝ այդ ուղեցույցները պետք է հիմնված լինեն զոհակենտրոն մոտեցման և ընտանեկան բռնության գենդերազգային ընկալման վրա, ներառելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են ոտնձգության ենթարկված անձանց խնդիրներին ծանոթանալու համար բարենպաստ պայմանների ստեղծումը. ոտնձգության ենթարկված անձանց և երեխաների կրկնակի վիկտիմիզացիայի կանխարգելումը, ինչպես նաև ապացույցներ հավաքելու գործում իրավապահ մարմինների ակտիվ դերի ապահովումը՝ ոտնձգության ենթարկված անձանց ցուցմունքների նկատմամբ չափից ավել վստահությունը նվազեցնելու և արդյունքում հաջող հետաքննությանն աջակցե-

60 2022 թվականի հուլիսի 1-ից գործող Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով «մերձավոր ազգական» հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ. «մերձավոր ազգական՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը»:

61 Ստամբուլի կոնվենցիայի 46-րդ հոդվածը պահանջում է, որ Ստամբուլի կոնվենցիայով սահմանված իրավախախտումների համար պատասխանատվություն սահմանելիս որպես ծանրացուցիչ հաշվի առնվեն մի շարք հանգամանքներ (թվարկված «ա»-ից «ը» կետերում): Օրինակ՝ ծանրացուցիչ հանգամանքներից մեկը կարող է լինել այն, որ հանցագործությունը կատարվել է ներքին օրենսդրությամբ որպես նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ, ընտանիքի անդամի, ոտնձգության ենթարկված անձի հետ համատեղ ապրող անձի կամ նրան բռնություն գործադրած անձի կողմից: Ինչպես գնահատվել է ԳՐԵՎԻՌ-ի ելակետային գնահատման զեկույցների միջնաժամկետ հորիզոնական գնահատման մեջ (2022թ.), իրավական համակարգից կախված, որոշ ծանրացուցիչ հանգամանքներ կարող են հանցանքի տարրերի մաս կազմել՝ այդպիսով որակելով դրանք որպես ավելի ծանր հանցագործություն, որոնք պատժվում են ավելի խիստ պատիժներով կամ կարող են սահմանվել քրեական օրենսդրության հատուկ դրույթներով: Մեկ այլ մոտեցում նախատեսում է օրենքում ծանրացուցիչ հանգամանքների ոչ սպառնչ ցուցակի ստեղծում, ինչպես նաև դատական համակարգում Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:

լու նպատակով: Ցանկալի է նաև, որ ուղեցույցները միանշանակ արգելեն քննադատական, ոտնձգության ենթարկված անձանց մեղադրելու, կարծրատիպային կամ պարսավանք պարունակող վերաբերմունքը, ոտնձգության ենթարկված անձանց հանդեպ կողմնակալությունը, բռնությունը նվազագույնի հասցնելու կամ արդարացնելու փորձերը, ակնարկելը, որ նախընտրելին միայն ոտնձգության ենթարկված անձի և բռնարարի հաշտեցումն է, ինչպես նաև դատական գործընթացին հետամուտ չլինելու նպատակով ոտնձգության ենթարկված անձանց հուսահատեցնելը:

28. Շարունակական ջանքեր գործադրել ընտանեկան բռնության կանխարգելման մասնագիտացված ստորաբաժանումներում աշխատող ոստիկանության ծառայողների, ինչպես նաև քննիչների համար ընտանեկան բռնության վերաբերյալ ծառայողական վերապատրաստման ծրագրեր կազմակերպելու համար` նպատակ ունենալով նրանց տրամադրել ուղեցույց, թե ինչպես համակողմանիորեն և պրոակտիվորեն փնտրել ապացույցներ և ստեղծել քրեական հետապնդման համար պիտանի գործ: Հիմք ընդունելով մասնագետների վերապատրաստման մասին Ստամբուլի կոնվենցիայի 15-րդ հոդվածի դրույթները և ԳՐԵՎԻՈ-ի (2022թ.) համապատասխան առաջարկությունները` նման ծրագրերը պետք է կենտրոնանան ընտանեկան բռնության` որպես կանանց և տղամարդկանց միջև իշխանության անհավասար հարաբերությունների դրսևորման հարցերի վրա և ընդգրկեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են` սեռական զուգընկերոջ կողմից դաժան վերաբերմունքի հոգեբանական դիմամիկան և «բռնության ցիկլը», հարկադրանքի և վերահսկողության մեխանիզմները, բռնության պատմության, տևողության, հաճախականության և լրջության մասին տեղեկատվության գրանցման անհրաժեշտությունը, ինչպես նաև հրահանգներ/ուղեցույցներ, թե ինչպես հարցազրույց անցկացնել ոտնձգության ենթարկված անձանց և երեխաների հետ խուսափելով երկրորդական վիկտիմիզացիացիայից (մասնավորապես` զերծ մնալով այնպիսի պնդումներ անելուց կամ վարքագիծ դրսևորելուց, որը ոտնձգության ենթարկված անձին մեղադրող կամ դատապարտող երանգներ է պարունակում, ինչպես նշված է նախորդ գլուխների վերլուծության մեջ, տե՛ս վերևում): Ցանկալի է նման ծրագրերում մասնակցությունը դարձնել պարտադիր և դրանք կազմակերպել պարբերաբար` ոստիկանության ծառայողների գիտելիքները թարմացնելու և հարստացնելու, ինչպես նաև կադրային հաճախակի փոփոխությունների խնդիրը լուծելու համար: Ցանկալի է նաև դիտարկել նմանատիպ նախնական վերապատրաստման ծրագրերի ներդրումը ՀՀ Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի կանոնավոր կրթակարգերում:
29. Դիտարկել այլ համապատասխան մասնագետների (դատախազների, դատավորների, իրավաբանների) պարտադիր շարունակական վերապատրաստման ծրագրերի ներդրման հնարավորությունը և կանոնավոր կերպով կազմակերպել դրանք` ի լրումն Արդարադատության ակադեմիայում արդեն դասավանդվող ծրագրերի: Ծրագրերը պետք է անդրադառնան ընտանեկան բռնության հարցերը կարգավորող քրեական և քաղաքացիական օրենսդրության դրույթների իրավակիրառման գործում իրավապահ մարմինների համապատասխան գործառնություններին: Ի լրումն ընդհանուր թեմաների, ինչպիսիք են ընտանեկան բռնության գենդերազգայուն ընկալումը, դրա պատճառներն ու հետևանքները, բռնության և ընտանեկան հակասության միջև տարբերությունը, հոգեբանական բռնության դրսևորումները, ներառյալ հարկադրանքն ու վերահսկողությունը, և ամուսնալուծությանը հաջորդող բռնության դիմամիկան, այդ ուսումնական ծրագրերը կարող են նաև անդրադառնալ ոտնձգության ենթարկված անձանց և երեխաների երկրորդական վիկտիմիզացիայի կանխարգելմանը, երեխաների, ոտնձգության ենթարկված անձանց և ականատեսների վրա բռնության ազդեցությանը, մասնավորապես, խնամակալության և տեսակցության իրավունքների վերաբերյալ որոշումներ կայացնելիս ընտանեկան բռնությունը հաշվի առնելու անհրաժեշտությունը` ա) ապահովելու, որ այդ իրավունքների իրականացումը չվնասի ոտնձգության ենթարկված անձանց կամ նրանց երեխաների իրավունքներին և անվտանգությանը, ինչպես նաև բ) ապահովելու, որ դատավորները և իրավաբան այլ մասնագետները գիտակցեն, որ մտերիմ անձի (օրինակ` մոր) նկատմամբ բռնության ականատես լինելը խստիվ հակացուցված է` ելնելով երեխայի լավագույն շահերից:
30. Դատախազների և դատավորների համար ԸԲ մասնագիտացում մտցնելու հնարավորության դիտարկում. Դա կնպաստի և կուժեղացնի ոտնձգության ենթարկված անձանց և նրանց երեխաների պաշտպանության միջոցների իրավակիրառումը քրեական գործերով դատական գործընթացների բոլոր փուլերում,

ինչպես նաև խնամակալության և տեսակցության կազմակերպման հետ կապված քաղաքացիական դատավարության ընթացքում՝ նպատակ ունենալով նվազեցնել կամ խուսափել երկրորդական վիկտիմիզացիայից: Այդ միջոցները պետք է ապահովեն ոտնձգության ենթարկված անձի և ոտնձգողի հարցաքննության միմյանցից առանձին անցկացումը: Երկրորդական վիկտիմիզացիայի նվազեցմանը կամ դրանից խուսափելուն հնարավոր է հասնել, օրինակ՝ ընդունելով տեսաձայնագրմամբ ձեռք բերված ապացույցները, ինչպես նաև, տեխնիկապես հնարավոր լինելու դեպքում, առցանց հարցաքննության անցկացմամբ:

31. Ուսումնասիրել, թե ինչպես է իրավաբանական պրակտիկայում իրականացվում ոտնձգության ենթարկված անձի և բռնարարի հաշտեցման գործընթացը: Հենվելով միջազգային չափանիշների, մասնավորապես, ԿՆԽՎԿ կոմիտեի 35-րդ ընդհանուր հանձնարարականի վրա (տե՛ս. «Պետության պոզիտիվ պարտականությունները քրեական հետապնդման և պատժի գծով» ներդիրը), կարևոր կլինի ուսումնասիրել, թե արդյոք միջոցներ են ձեռնարկվում ազատ համաձայնությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով ոտնձգության ենթարկված անձի և ոտնձգողի միջև իշխանության անհավասար բաշխվածությունը, ինչպես նաև երաշխիքները, որոնք լիովին ապահովում են ոտնձգության ենթարկված անձանց իրավունքները, կարիքները և անվտանգությունը: Կարևոր է նաև ապահովել, որ ոտնձգության ենթարկված անձինք ստանան համապատասխան տեղեկատվություն, մասնավորապես հաշտեցման ոչ պարտադիր բնույթի մասին:
32. Բարելավել ընտանեկան բռնության դեմ պայքարում միջգերատեսչական համագործակցությունը:
33. Կազմակերպել ԸԲ օրենքով նախատեսված ծրագրեր ոտնձգողների համար՝ նպատակ ունենալով կանխել կրկնահանցագործությունը և աջակցել ոտնձգողներին՝ հրաժարվել բռնի վարքագծից՝ պատշաճ ուշադրություն դարձնելով ոտնձգության ենթարկված անձանց և նրանց երեխաների անվտանգությանն ու իրավունքներին:
34. Խնամակալության և տեսակցության հետ կապված քաղաքացիական դատավարության առնչությամբ անհրաժեշտ է ապահովել հետևյալը.
 - ընտանեկան բռնության հետևանքով առաջացած հոգեբանական վնասի գնահատման պատշաճ մեխանիզմների ներդրում.
 - դատավորները խնամակալության և տեսակցության վերաբերյալ որոշումներ կայացնելիս համակարգված կերպով հաշվի առնել բռնությանը՝ երեխաների ականատես լինելու հանգամանքը.
 - տարիքին համապատասխան հոգեբանական աջակցության և խորհրդատվության տրամադրում բռնության ենթարկված անձանց և ականատեսներին.
 - դատարանում ցուցմունք տվող երեխաներին համակարգված աջակցություն մանկական հոգեբանի կամ այլ մասնագետի կողմից.
 - իրավապահ մարմինների ներկայացուցիչների պարտադիր մասնակցություն ոտնձգողի՝ երեխաների հետ տեսակցությանը և շփումներին.
 - ԸԲ օրենքի 8-րդ հոդվածի արդյունավետ կիրառումը դատաիրավական պրակտիկայում, որը համաձայն պաշտպանական որոշումն անհրաժեշտության դեպքում ներառում է երեխաների հետ տեսակցության արգելքը:

Նկատի ունենալով, որ միջազգային չափանիշներին, մասնավորապես, Ստամբուլի կոնվենցիային համապատասխան, տվյալների հավաքագրումը և ուսումնասիրությունը կարևոր գործիքներ են ապացուցահեն քաղաքականության մշակման համար, անհրաժեշտ է ուստիկանությունում, դատախազությունում, դատարաններում և այլ կառույցներում իրականացնել տվյալների հավաքագրման մոդելների բարելավում, քանի որ տարբեր աղբյուրներում ներկայումս առկա տվյալները հաճախ միմյանցից տարբերվում են կամ թերի են: Կարելի է դիտարկել հետևյալ միջոցները.

35. Բարելավել ոստիկանության աշխատակիցների կողմից ընտանեկան բռնության մասին հաղորդված դեպքերի արձանագրման հուսալիությունը: Ապահովել, որ տվյալների հավաքագրման ոստիկանության համակարգերում քրեական դատավարության հետ կապված տվյալները տարանջատվեն այն գործերից, որտեղ ոստիկանությունը կիրառել է ԸԲ օրենքով նախատեսված միջոցներ: Կարևոր է նաև տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկություններ այն մասին, թե արդյոք ոստիկանության աշխատակիցներն արձանագրել են առաջին անգամ տեղի ունեցած ընտանեկան բռնության դեպքը, ինչպես նախատեսված է գործող ԸԲ օրենքով:⁶²
36. Ուսումնասիրել բոլոր համապատասխան կառույցների համար տվյալների հավաքագրման վերաբերյալ ուղեցույցների մշակման նպատակահարմարությունը, ինչպես նաև տվյալների հավաքագրման մոդուլների ինտեգրումը ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարում ներգրավված բոլոր համապատասխան մասնագետների համար կանոնավոր շաբոնակական վերապատրաստման ծրագրերում:
37. Ապահովել, որ պետական կառույցների (իրավապահ մարմինների, դատախազության, դատարանների, առողջապահական և սոցիալական ծառայությունների) կողմից հավաքագրված տվյալները տարանջատվեն ըստ ոտնձգության ենթարկված անձի և ոտնձգողի սեռի, ոտնձգության ենթարկված անձի և ոտնձգողի հարաբերությունների, բռնության և քրեական օրենսգրքում տեղ գտած հանցակամների տարբեր դրսևորումների, աշխարհագրական դիրքի, ինչպես նաև կարևոր համարվող այլ գործոնների, ինչպիսին է, օրինակ, հաշմանդամությունը: Ապահովել նաև, որ վերոնշյալ կառույցների տվյալների հավաքագրման համակարգերում ներառվի ընտանեկան բռնության ականատես եղած երեխաների մասին տեղեկատվությունը:
38. Ներդաշնակեցնել իրավապահ մարմինների և դատական համակարգի միջև տվյալների հավաքագրման գործընթացը, այդ թվում՝ ոստիկանության, քննչական կոմիտեի, դատախազության և դատարանների և ապահովել ընտանեկան բռնության դեպքերի առնչությամբ ըստ տարբեր չափորոշիչների տարանջատված տվյալների համապարփակ հավաքագրում՝ հաղորդումից, քրեական վարույթ նախաձեռնելուց, գործի քննությունից մինչև դատավարություն, նպատակ ունենալով ապահովել.
- մեղադրական դատավճիռների, անարձագանք գործերի և կրկնահանցագործության մակարդակի գնահատումը.
 - քրեական արդարադատության համակարգի օղակների միջով (իրավապահ մարմիններ, դատախազություն և դատարաններ) գործերի ընթացքի մանրակրկիտ վերլուծությունը.
 - ընտանեկան բռնության դեպքերին քրեական արդարադատության ոլորտի արձագանքման արդյունավետության գնահատումը և համապատասխան կառույցների արձագանքման գծով խնդիրների բացահայտումը, որոնք հանգեցնում են մեղադրական դատավճիռների ցածր ցուցանիշների և/կամ հաղորդված բռնության դեպքերի և համապատասխան մեղադրական դատավճիռների անհամաչափության:

Նման տվյալները պետք է լինեն համակարգված և համադրելի, ընդ որում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի համակարգ, որը հնարավորություն կընձեռի գործերին «հետևել» իրավապահ մարմինների կողմից իրականացվող և դատական գործընթացում տեղ գտնող վարույթի բոլոր փուլերում:

62 ԸԲ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ «Նախագգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն»: Ձևը, որը ոստիկանության ծառայողները և տեսուչները պարտավոր են լրացնել բռնության դեպքերի առնչությամբ, պարունակում է տեղեկատվություն այն մասին, **թե արդյոք բռնությունը ոստիկանության կողմից առաջին անգամ է արձանագրվել**, թե ոչ, սակայն, ինչպես ցույց է տվել այս ուսումնասիրությունը (տե՛ս ոստիկանության տվյալների բազաների վրա հիմնված եզրակացությունները), շատ դեպքերում այդ տեղեկատվությունը բացակայում է: Այս տեղեկությունը չափազանց կարևոր նշանակություն ունի, քանի որ, համաձայն ԸԲ օրենքի վերոհիշյալ դրույթի, նախագգուշացում տալու համար համապատասխան պայմաններից մեկն այն է, որ բռնությունը ոստիկանության կողմից արձանագրվել է առաջին անգամ: Ոստիկանության տվյալների բազաներում տեղեկատվության բացակայությունն այն մասին, թե ոստիկանությունն առաջին անգամ է բռնության դեպք արձանագրել, թե ոչ, խնդրահարույց է, քանի որ այս կարևոր հարցի հետ կապված միայն կարող է արդարացնել ԱՄՈՒ-ի փոխարեն նախագգուշացում կիրառելը:

39. Անցկացնել գեներային հիմքով կանանց սպանությունների (Ֆեմիցիդի) դեպքերի վերաբերյալ տարեկան ուսումնասիրություններ, որոնք կծառայեն որպես ելակետային տվյալներ ընտանեկան բռնության ինստիտուցիոնալ/դատական արձագանքման հնարավոր համակարգային բացերը գնահատելուն ուղղված վերլուծությունների համար: Դիտարկել այս հարցում կանանց ՅԿ-ների փորձի վրա հենվելու հնարավորությունը:
40. Հավաքագրել ԸԲ օրենքով սահմանված պաշտպանության միջոցների վերաբերյալ տվյալները, համոզվելու համար, թե արդյոք այդ միջոցառումները հասնում են նախատեսված նպատակին: Տարեկան կտրվածքով ապահովվում են հետևյալ տվյալները.
- ա) ոստիկանություն կամ այլ համապատասխան հաստատություններ հաղորդված բռնության դեպքերի թիվը.
 - բ) տրված նախազգուշացումների, ԱՄՌ-ների և պաշտպանական որոշումների թիվը՝ յուրաքանչյուրի համար.
 - գ) խախտումների պատճառով կիրառված պատասխանատվության միջոցների թիվը (առանձին բազմակի խախտումների և մեկ խախտման համար):
- Ցանկալի է, որ ԱՄՌ-ները և պաշտպանական որոշումները գրանցվեն ըստ տեսակի՝ նպատակ ունենալով ուսումնասիրել, օրինակ, թե որքան հաճախ է իրավավիճակային հեռացվել ոտնձգության ենթարկված անձի բնակության վայրից, համեմատել դա որոշումներով սահմանված այլ սահմանափակումների հետ, օրինակ՝ շփման արգելքի, արգելանքի որոշումների և այլն:
41. Կիրառել տվյալների հավաքագրման տարբեր մոդելներ՝ հնարավորություն ընձեռելու մշտադիտարկել/գնահատել քաղաքացիական իրավունքի և քրեական օրենսդրական միջոցների իրականացումը, ներառյալ պաշտպանության միջոցների կիրառման հետ կապված տարեկան միտումները, ինչպես նաև քրեական հետապնդման արդյունքների հետ կապված միտումները՝ հայտնաբերված բացերը վերացնելու, ըստ անհրաժեշտության նաև օրենքների և քաղաքականության նոր տարբերակներ առաջարկելու նպատակով: Ոտնձգության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության հետ կապված միտումները վերլուծելու համար նպատակահարմար կլինի օգտագործել հետևյալ ցուցանիշները.
- ա) նախաքննական փուլում կարճված դեպքերի համամասնությունը (հաղորդված դեպքերի ընդհանուր թվից).
 - բ) նախաձեռնված քրեական վարույթների կշիռը հաղորդված դեպքերի ընդհանուր թվի մեջ.
 - գ) դատարանների կողմից կայացված դատավճիռների թիվը.
 - դ) դատարանների կողմից ոտնձգողների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների թիվն ու տեսակը:
42. Ապահովել, որ հավաքագրված տվյալների հավաքման, պահպանման և փոխակերպման գործընթացը համապատասխանի անձնական տվյալների պաշտպանության չափանիշներին, ինչպես նշված է Անձնական տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին Ստրասբուրգի կոնվենցիայում (Հայաստանի կողմից վավերացված):

6. ՀԱՌՄԱՆԵՐ

Beijing Declaration and Platform for Action (1995), available at: <https://www.unwomen.org/en/digital-library/publications/2015/01/beijing-declaration>, accessed 1 December 2022

Brankovic, B. (2013). *Vesti iz budućnosti: Istanbulska konvencija i odgovornost države za borbu protiv nasilja nad ženama. Funkcionisanje opštih servisa - operacionalizacija dužne prilježnosti [News from the Future: the Istanbul convention and Responsibility of the State for Combating Violence against Women; Operationalisation of Due Diligence Principle]*. Belgrade: United Nations Development Programme (UNDP)

Brankovic, B. (2016). *Barriers to women's access to justice – gaps in meeting the requirements of the Istanbul Convention*, Paper presented at the *Regional Conference Strengthening Judicial Capacity to Improve Women's Access to Justice, organised by Council of Europe in partnership with the National Institute of Justice of the Republic of Moldova, Chisinau, Moldova, 24-25 October 2016*

Buzawa, E. S., Buzawa, C.G. and Stark, E. (2017). *Responding to domestic violence: the integration of criminal justice and human services, 5th revised edition*. Sage publications

Campbell J. C. (2002). Health consequences of intimate partner violence. *Lancet*, 359(9314)

CEDAW Committee (1992). *General Recommendation 19: Violence against Women*, available at: <https://www.refworld.org/docid/52d920c54.html>, accessed 19 December 2022

CEDAW Committee (2012). *Communication No. 47/2012 González Carreñov. Spain*, CEDAW/C/58/D/47/2012

CEDAW Committee (2016). *Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia*, 25 November 2016, CEDAW/C/ARM/CO/5-6

CEDAW Committee (2017). *General recommendation No. 35 on gender-based violence against women, updating general recommendation No. 19*, CEDAW/C/GC/35, available at: https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolNo=CEDAW/C/GC/35&Lang=en, accessed 18 November 2022

Council of Europe convention on preventing and combating violence against women and domestic violence (CETS No. 210), available at: <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatyNum=210>, Accessed 1 December 2022

Council of Europe (2020). *Opinion of the Directorate General Human Rights and Rule of Law of the Council of Europe on the revised draft Criminal Code of the Republic of Armenia, 2020*

Council of Europe (2017). *Opinion of the Directorate General Human Rights and Rule of Law of the Council of Europe on the draft Criminal Code of RA, 2017*

Committee against Torture (2017). *Concluding observations on the fourth periodic report of Armenia*, 26 January 2017, CAT/C/ARM/CO/4

Council of Europe Recommendation Rec(2002)5 of the Committee of Ministers to member states on the protection of women against violence, available at: https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2612, accessed 10 December 2022

The convention of *Belém do Pará* - The Inter-American convention on the Prevention, Punishment, and Eradication of Violence against Women, available at: <https://www.oas.org/en/mesecvi/convention.asp#:~:text=The%20Inter%2DAmerican%20Convention%20on,and%20that%20violence%20against%20women>, accessed 1 December 2022

DEVAW: Declaration on the Elimination of Violence against Women (1993). Resolution adopted by the UN General Assembly, 48th session, 20 December 1993, A/RES/48/104, available at: <https://www.refworld.org/docid/3b00f25d2c.html>, accessed 10 December 2022

- Dube SR et al. (2005). Long-term consequences of childhood sexual abuse by gender of victim. *American Journal of Preventive Medicine*, 28(5)
- Duban, E. and Radacic, I. (2017). *Training manual for judges and prosecutors on ensuring women's access to justice*. Strasbourg: Council of Europe
- Edleson, J.L. (1999). Problems associated with children's witnessing of domestic violence, VAW Net, http://vawnet.org/sites/default/files/materials/files/2016-09/AR_Witness.pdf, accessed 1 October 2022
- Ertürk, Y. (2006). *The due diligence standard as a tool for the elimination of violence against women, Report of the Special Rapporteur on violence against women, its causes and consequences*, available at: <https://digitallibrary.un.org/record/565946?ln=en>, accessed 10 December 2022
- Erturk, Y. (2008) *Report of the Special Rapporteur on violence against women, its causes and consequences: Indicators on violence against women and State response*. Human Rights Council, Seventh session, A/HRC/7/6, 29
- Explanatory Report to the Council of Europe convention on preventing and combating violence against women and domestic violence, available at: <https://rm.coe.int/1680a48903> , accessed 11 November 2022
- Ferrari, G., Agnew-Davies, R., Bailey, J., Howard, L., Howarth, E., Peters, T.J., Sardinha L., & Feder, G. (2014). Domestic violence and mental health: a cross-sectional survey of women seeking help from domestic violence support services, *Global Health Action*, 7:1, DOI: [10.3402/gha.v7.25519](https://doi.org/10.3402/gha.v7.25519), accessed 20 November 2022
- Garcia-Moreno C. et al. (2005). *WHO multi-country study on women's health and domestic violence against women: Summary report*, available at: <https://apps.who.int/iris/handle/10665/43309>, accessed 28 October 2022
- GREVIO (2019). *GREVIO baseline evaluation report: Portugal*. Strasbourg: Secretariat of the monitoring mechanism of the Council of Europe convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence, Council of Europe
- GREVIO (2020). *GREVIO baseline evaluation report on Spain*. Strasbourg: Secretariat of the monitoring mechanism of the Council of Europe convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence, Council of Europe
- GREVIO (2022). *Mid-term horizontal review of GREVIO baseline evaluation reports*. Strasbourg: Council of Europe
- GREVIO Shadow Report NGO Coalition (2016). *Information on Police Emergency Barring Orders Austria*, in: *Austrian NGO-Shadow Report to GREVIO*. Vienna: Association of Austrian Autonomous Women's Shelters, AOF and Domestic Abuse Intervention Centre, IST
- Hakobyan, G. (2016). *Training Manual for Judges and Prosecutors on Ensuring Women's Access to Justice, Country chapter for Armenia*. Strasbourg: Council of Europe, in the framework of the project "Improving Women's Access to Justice in the Eastern Partnership Countries" (Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova and Ukraine)
- Heise L., Garcia Moreno C. (2002). Violence by intimate partners. In: Krug E.G. et al., Eds. *World report on violence and health*. Geneva: WHO
- Hester, M., Pearson, C, Harwin, N. (2007). *Making an impact: Children and domestic violence. A reader, second edition*. London: Jessica Kingsley Publishers, London and Philadelphia
- Hester, M. (2006). Making it through the criminal justice system: attrition and domestic violence. *Social policy and society*, 5 (1), 79–90Her Majesty Crown Prosecution Service Inspectorate – HMCPSI (2002). *A Report on the Joint Inspection into the Investigation and Prosecution of Cases Involving Allegations of Rape*. London: HM Crown Prosecution Service Inspectorate
- Huang, C., Chen, Y., Cheung, S. (2021). Early childhood exposure to intimate partner violence and teen depression symptoms in the U.S., *Health and Social Care*, Volume 29, Issue 5Human Rights Defender of Armenia (2019). *Report for 2019*, English translation, manuscript

Human Rights Defender of Armenia (2020). *Report for 2020*, English translation, manuscript

Jewell, L. M., & Wormith, J. S. (2010). Variables Associated With Attrition from Domestic Violence Treatment Programs Targeting Male Batterers: A Meta-Analysis. *Criminal Justice and Behavior*, 37(10), 1086–1113. <https://doi.org/10.1177/0093854810376815>, accessed on 2 November 2022

Johnson, H., Ollus, N. and Nevala, S. (2008). *Violence against Women: An International Perspective*. Helsinki: European Institute for Crime Prevention and Control (HEUNI)

Kelly, L. & Regan, L. (2001). *Rape: The Forgotten Issue? A European Research and Networking Project*. London: Child and Woman Abuse Studies Unit University of North London

Kelly, L, Lovett, J. & Regan, L. (2005). *A gap or a chasm? Attrition in reported rape cases, Home Office Research Study 293*. London: Home Office Research, Development and Statistics Directorate

Kelly, L., Sharp, N. and Klein, R. (2014). *Finding the costs of freedom: How women and children rebuild their lives after domestic violence*. London: Solace Women's Aid and Child and Woman Abuse Studies Unit (CWASU)

Kitzmann, K. M., Gaylord, N. K., Holt, A. R., & Kenny, E. D. (2003). Child witnesses to domestic violence: A meta-analytic review. *Journal of Consulting and Clinical Psychology*, 71(2), 339-352

Lancet Psychiatry Commission on intimate partner violence and mental health: Oram, S., Fisher, H.L, Minnis, H., Seedat, S., Walby, S., Hegarty, K., Rouf, K., Angénieux, C., Callard, F., Chandra, P.S., Fazel, S., Garcia-Moreno, C., Henderson, M., Howarth, E., MacMillan, H.L., Murray, L.K., Othman, S., Robotham, D., Rondon, M.B, Sweeney, A., Taggart, D., Howard, L.M. (2022). The *Lancet Psychiatry* Commission on intimate partner violence and mental health: advancing mental health services, research, and policy, *The Lancet Psychiatry Commissions*, Volume 9, Issue 6, P487-524, June 1, 2022, [https://doi.org/10.1016/S2215-0366\(22\)00008-6](https://doi.org/10.1016/S2215-0366(22)00008-6), accessed 15 November 2022

Logar, R. and Niemi, J. (2017). *Emergency barring orders in situations of domestic violence: Article 52 of the Istanbul convention, A collection of papers on the Council of Europe convention on preventing and combating violence against women and domestic violence*. Strasbourg: Council of Europe.

Lovett, J. & Kelly, L. (2009). *Different systems, similar outcomes? Tracking attrition in reported rape cases across Europe, Final research report*. London: Child and Woman Abuse Studies Unit, London Metropolitan University

Mann, L. (2019). Gap analysis and recommendations on the Armenian Law on Prevention of Violence in the Family, Protection of Victims of Violence within the Family and Restoration of Peace within the Family and related police orders. Yerevan: Council of Europe

McPhee, D., M. Hester, M., Bates, L., Lilley-Walker, S. & Patsios, D. (2022). Criminal justice responses to domestic violence and abuse in England: an analysis of case attrition and inequalities using police data, *Policing and Society*, 32:8, 963-980, DOI: 10.1080/10439463.2021.2003358, accessed 20 November 2022

Martin SL et al. (2007). Pregnancy-associated violent deaths: the role of intimate partner violence. *Trauma, Violence & Abuse*, 2007

Monnat, S.M., Chandler, R.F. (2015). Long-term physical health consequences of adverse childhood experiences, *The Sociologist Quarterly*; 56(4): 723-752

Newnham, E.A., Chen Y., Gibbs L., Dzidic P.L., Guragain B., Balsari S., Mergelsberg E.L.P., Leaning J. (2022). The Mental Health Implications of Domestic Violence During COVID-19, *International Journal of Public Health*, Volume 66, 2022, <https://www.ssph-journal.org/articles/10.3389/ijph.2021.1604240>, accessed 20 November 2022

Pirumyan, N. (2022). Interview with Nina Pirumyan, ex-employee of the Office of HRD of Armenia

Regan, L. & Kelly, L. (2003). *Rape: Still a forgotten issue, Briefing document for Strengthening the Linkages – Consolidating the European Network Project*. London: Child and Woman Abuse Studies Unit London Metropolitan University

Report of the Working Group on the Universal Periodic Review: Armenia: Addendum (June 5, 2015), U.N. Doc. A/HRC/29/11/Add.1, 120.100, 120.105, 120.106, 120.107, 120.108, 120.109, 120.111, 120.112, 120.113.

Russell, D, Springer K.W, and Greenfield, E.A. (2010). Witnessing domestic abuse in childhood as an independent risk factor for depressive symptoms in young adulthood. *Child Abuse Negl.* 2010 Jun;34(6):448-53

Sleath, E., and Smith, L.L. (2017). Understanding the factors that predict victim retraction in police reported allegations of intimate partner violence. *Psychology of violence*, 7 (1), 140–149

Stark, E. (2007). *Coercive Control: How Men Entrap Women in Personal Life*. New York: Oxford University Press

Stark, E. (2009). Rethinking coercive control, *Violence against Women*, Vol. 15, No. 2, pp. 1509-25

Truchero, J. (2017). *Gap analysis of Armenian criminal law in light of the standards established by the Council of Europe convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence*. Yerevan: Council of Europe

UN General Assembly (2006). *In-depth study on all forms of violence against women: Report of the Secretary-General*, A/61/122/Add.1, available at: <https://www.un.org/womenwatch/daw/vaw/v-sg-study.htm> , accessed 22 July 2022

United Nations Office for Drugs and Crime (UNODC), Vienna (2014). *Handbook on effective prosecution responses to violence against women and girls*. New York: United Nations

Westmarland, N., McGlynn, C., and Humphreys, C. (2018). Using restorative justice approaches to police domestic violence and abuse, *Journal of gender-based violence*, 2 (2), 339–358

WHO (2012). *Understanding and addressing violence against women: Health consequences*, available at: https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77431/WHO_RHR_12.43_eng.pdf , accessed 1 December 2022

Wood, S.L. and Sommers, M.S. (2011). Consequences of Intimate Partner Violence on Child Witnesses: A Systematic Review of the Literature. *Journal of Child and Adolescent Psychiatric Nursing*, 24: 223-236, <https://doi.org/10.1111/j.1744-6171.2011.00302.x> , accessed 1 July 2022

Ընտանեկան բռնության (ԸԲ) կանխարգելման և դրա դեմ պայքարում իշխանությունների հետագա ջանքերին օժանդակելու նպատակով որոշում կայացվեց իրականացնել ելակետային ուսումնասիրություն և ոստիկանությանը, քննչական կոմիտեին, դատախազությանը, պատասխանատու այլ կառույցներին և Կանանց աջակցման կենտրոններին հաղորդված/վերջիններիս կողմից արձանագրված ԸԲ դեպքերի վերաբերյալ, նպատակ ունենալով ընդհանուր պատկերացում կազմել ոտնձգությունից տուժած անձանց համար ա) ընտանեկան բռնության մասին վերջին օրենքով սահմանված պաշտպանության միջոցների և բ) արդարադատության համակարգի մատչելիության վերաբերյալ: Նկատի ունենալով, որ առկա պաշտոնական տվյալները դեռևս սահմանափակ են, այս ուսումնասիրությունը համալրվեց Երևանի «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի հաղորդված մեծաթիվ ԸԲ դեպքերի վերլուծությամբ՝ նպատակ ունենալով առավել խոր պատկերացում կազմել, մի կողմից, կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դրսևորումների, մյուս կողմից՝ ԸԲ-ի ինստիտուցիոնալ/դատական արձագանքի մասին :

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումը անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE